



«ԿՖԿՏՅ» ներդրման
ծրագրի ՓՈԻԼ 2.1-ի
Հաշվետվություն

ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆ

Բովանդակություն

ԳԶ-ՊԲ1- Գանձապետական հաշիվներին բացում վարկային և դրամաշնորհային ծրագրերի գծով	5
ԳԶ-ՊԲ2- Ըշտված անվանացանկին երմումում	9
ԳԶ-ՊԲ3- Ծախսերի կատարման նախահաշիվներին ստուգում և հաշվառում	13
ԳԶ-ՊԲ4- ԾԻԳ-երի պայմանագրերին երմումում	17
ԳԶ-ՊԲ5- ԾԻԳ-երի պայմանագրերից քաղված քներին ընդունում, ստուգում, հաշվառում և հաստատում	22
ԳԶ-ՊԲ6- ԾԻԳ-երի կողմից հավաստագրերի (վճարումը հավաստող փաստաթղթերի) ներբեռնում	28
ԳԶ-ՊԲ7- ԾԻԳ-երից վճարային փաստաթղթերի ընդունում, ստուգում և վճարումներին իրականացում	33
ԳԶ-ՊԲ8- Ուղղակի վճարումներին ձևակերպում	40
ԳԶ-ՊԲ9- Եկամտային և ծախսային հաշիվներին բացում	43
ԳԶ-ՊԲ10- Պետական տուրքի վերադարձ	49
ԳԶ-ՊԲ11- Չարկերի վերադարձ միասնական հաշվից, ՉՎՅՅ-ին ուղղումներ սխալներին հաշվից	58
ԳԶ-ՊԲ12- Դրոշման իշային վճարի, շահաբաժնի և ակցիային հարկի վերադարձ	65
ԳԶ-ՊԲ13- Գործառնական օրվաբացում և փակում	80
ԳԶ-ՊԲ14- Գումարներին արգելադրում, արգելադրված գումարներին փոխանցում	89
ԳԶ-ՊԲ15- Ամփոփբյուղետային փոխանցագրերին ձևակերպում	100
ԳԶ-ՊԲ16- Օտարերկրյա քաղաքացիներին ԱԱՀ-ին գումարներին վերադարձ	114
ԳԶ-ՊԲ17- ՊՈԱԿ-ներին գանձապետական հաշիվներին ՅԴՄ սարքերի միջոցով գանձումներին գումարներին մուտքագրում	128
ԳԶ-ՊԲ18- Պետական վճարումներին էլեկտրոնային համակարգի միջոցով վճարումներ	132
ԳԶ-ՊԲ19- Պետական վճարումներին էլեկտրոնային համակարգի սպասարկում	139
ԳԶ-ՊԲ20- ԵԱՏՄ անդամ պետություն և ներկողմից ներմումում մաքսատուրքերին (ինչպես նաև հակազնագուման տուրքերին) գումարներին հաշվեգրում, բաշխում և փոխանցում անդամ պետություն և ներկողմ	144
ԳԶ-ՊԲ21- ԲԳԿ-ներին կողմից ֆինանսավորման հայտերին ներկայացում	149
ԳԶ-ՊԲ22- Եկամտային հարկի վերադարձ	153

ԳԶ-ՊԲ23- Գնուևմնեքի օրենսդրուևթյան համաձայն վճարված գուևմարնեքի վերադարձ	159
ԳԶ-ՀՊ1- Գանձապետական հաշիվնեքի բացուևմ համայնքնեքի, պետական հիմնարկնեքի և իրավաբանական անձանց համար	163
ԳԶ-ՀՊ2- Ծախսեքի կատարման նախահաշիվնեքի և վճարման ժամանակացուևյ ցեքի ընդունուևմ, ստուևգուևմ և հաշվառուևմ	167
ԳԶ-ՀՊ3- ԲՍԿ-նեքի ցայայման ագրեքի ց քաղվածքնեքի մուևտքագրուևմ/ընդունուևմ, ստուևգուևմ, հաշվառուևմ և հաստատուևմ	172
ԳԶ-ՀՊ4- ԲՍԿ-նեքի ց վճարային փաստաթղթեքի ընդունուևմ, ստուևգուևմ և վճարուևմնեքի իրականացուևմ	183
ԳԶ-ՀՊ5-Կանխիկ ձևով կատարվող ծախսեքի չափաքանակնեքի հաշվառուևմ: Կանխիկ դրամի ստացման հայտեքի ընդունուևմ և չեկեքի դուևրագրուևմ	199
ԳԶ-ՀՊ6-Բանկային վճարային քարտեքով շրջանառվող միջոցնեքի չափաքանակնեքի հաշվառուևմ և բանկային վճարային և վարկային քարտեքի տրամադրուևմ	207
ԳԶ-ՀՊ7-Բանկային երաշխիքնեքի հաշվառուևմ	212
ԳԶ-ՀՊ8- Պատասխանատու անձի ստորագրուևթյուննեքի նմուևշնեքի և կնիքնեքի վերաբերյալ քարտի ընդունուևմ/ հաստատուևմ	215
ԳԶ-ՀՊ9- Պետական հիմնարկնեքի դեպքուևմ բյուևջենեքի ց եկամուևտնեքի և ծախսեքի վերաձևակերպուևմ և վերադարձ	222
ԳԶ-ՀՊ10- ՊՈԱԿ-նեքի դեպքուևմ բյուևջենեքի ց եկամուևտնեքի և ծախսեքի վերաձևակերպուևմ և վերադարձ	230
ԳԶ-ՀՊ11- Համայնքնեքի դեպքուևմ բյուևջենեքի ց եկամուևտնեքի և ծախսեքի վերաձևակերպուևմ և վերադարձ	238
ԳԶ-ՀՊ12- Համայնքնեքի բյուևջենեքի կատարուևմ և հաշվետվուևթյուննեքի ձևավորուևմ	248
ԳԶ-ՀՊ13- Համայնքնեքի խոշորացմամբ ցայայման ավորված գանձապետարանուևմ համայնքնեքի միավորման գործընթաց	254
ԳԶ-ՀՊ14- Համայնքնեքի ՀՀ պետական բյուևջեքի տրամադրվող սուևբվենցիանեքի առանձնացված հաշվառուևմ	258
ԳԶ-ԾՖ1- Պետական բյուևջեքի ծախսային ծրագրեքի ֆինանսավորման կազմակերպուևմ	263
ԳԶ-ԾՖ2- Իրավական ակտեքով կատարված ֆինանսավորուևմնեքի տվյալնեքի հաշվառուևմ, պարբերական և ըստ պահանջի հաշվետվուևթյուննեքի և տեղեկանքնեքի կազմուևմ	290

ԳՁ-ԾՖ3 Մասնակցությունն ֆինանսական հոսքերի կառավարման և ծրագրավորման շրջանակներում պետական բյուջեի կատարման ընթացքին, ծախսային ծրագրերի ցուցանիշների կատարման վերաբերյալ կանխատեսումներին և ներկայացում	311
ԳՁ-ԾՖ4 Բյուջետային հատկացումներին և այլ ցուցանիշներին վերաբաշխումներին և փոփոխություններին իրականացում և հաշվառում՝ համագործակցելով պատասխանատու ստորաբաժանումներին և ԲԳԿ-ներին հետ	315
ԳՁ-ԾՖ5 ԲԳԿ-ներին կողմից ծախսային ծրագրերի թերակատարման վերաբերյալ ստացված բացատրագրերի ամփոփում, պետական բյուջեի ծախսային մասի ծրագրային ցուցանիշներից շեղման գործունեության վերաբերյալ վերլուծություններ, ծախսային ծրագրերի կատարման ռիսկերի բացահայտումներ, ընթացիկ իրավիճակի գնահատում	321
ԳՁ-ԾՖ6 Պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումներին շրջանակում իրականացվող գործընթացի կարգավորման նպատակով՝ իրավական ակտերի նախագծերի պատրաստում, ներկայացված նախագծերի վերաբերյալ կարծիքներ կայացում, բյուջեներին կատարման ընթացակարգերի կատարելագործման ուղղությամբ առաջարկություններին մշակում և ներկայացում	326
ԳՁ-ԲԿ133 պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվություններին պատրաստում	331
ԳՁ-ԲԿ2 3ամայնքի բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվություններ, 3-9	382
ԳՁ-ԲԿ3 Ամսական վիճակագրական տեղեկանքներին պատրաստում	386
ԳՁ-ԲԿ4 33 համախմբված բյուջեի կատարման վերաբերյալ տեղեկատվության պատրաստում, տրամադրում Եվրասիական տնտեսական հանձնաժողովին, Եվրասիական զարգացման բանկին, Վիճակագրական կոմիտե	413
ԳՁ-ԲԿ5 Պետական բյուջեի կատարման վերաբերյալ ամսական վերլուծական տեղեկատվության պատրաստում	417
ԳՁ-ԲԿ6 33 պետական բյուջեի կատարման վերաբերյալ եռամսյակային հաշվետվություններին պատրաստում	420
ԳՁ - ՊԿՎ1 - 3ասարակ մոնրիակի տրամադրում	453
ԳՁ - ՊԿՎ2 - Փոխանցելի մոնրիակներին տրամադրում	456
ԳՁ - ՊԿՎ3 - Բարեգործական ծրագրեր ուղղվելու վերաբերյալ կարծիքներին և ներկայացում	461
ԳՁ - ՊԿՎ4 - 33 օտարերկրյա պետություններին, միջազգային կազմակերպություններին կամ այլ անձանց կողմից տրամադրված ապրանքային և ոչ ապրանքային դրամաշնորհներին հաշվառում	463
ԳՁ - ՊԿՎ5 - Բյուջետային վարկերի և ենթավարկերի տրամադրում	466
ԳՁ - ՊԿՎ6 - Բյուջետային երաշխիքներին տրամադրում	471
Տվյալներին փոխանակում ԿՖԿՏ3 այլ մոնրիակներին և արտաքին աղբյուրներին հետ	475

Ստորաբաժանում	Պետական բյուջեի հաշվառման բաժին
Անվանում	ԳԶ-ՊԲ1– Գանձապետական հաշիվների բացում վարկային և դրամաշնորհային ծրագրերի գծով
Նպատակ	Վարկային և դրամաշնորհային նպատակային ծրագրերի գծով ստացված ֆինանսավորման և ծախսերի հաշվառում, վարկային դրամական միջոցների հաշվառում, շրջանառում
Տիրույթ	ՀՀ ֆինանսների նախարարություն, Վարկային և դրամաշնորհային միջոցներով ծրագրեր իրականացնող գրասենյակ (ԾԻԳ)
Դերակատարներ	ՀՀ ՖՆ պետական բյուջեի հաշվառման բաժին, բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն, LS Finance համակարգ, LS Budget
Ընթացք 1	<ol style="list-style-type: none"> 1. Գանձապետական հաշվի բացման համար ԾԻԳ-ը դիմում է ներկայացնում ՀՀ ՖՆ պետական բյուջեի հաշվառման բաժին Mullbery փաստաթղթաշարժի համակարգի միջոցով կամ թղթային տարբերակով՝ ՀՀ կառավարության 706-Ն որոշմամբ սահմանված կարգով: Եթե դիմումը ներկայացնում է նոր գրանցված հաճախորդ, ապա դիմումին կից ներկայացվում են ՀՀ կառավարության 706-Ն որոշմամբ սահմանված կարգի 92-րդ կետով նախատեսված փաստաթղթերը: 2. ՀՀ ՖՆ պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը ուսումնասիրում է ստացված դիմումը և կից փաստաթղթերը: 3. Գանձապետական հաշվի բացման համար դրամաշնորհային և վարկային ծրագրի տվյալները բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության կողմից պետք է գրանցված լինեն LS Finance համակարգում: Դրա բացակայության դեպքում դիմումը մերժվում է՝ բյուջետային գործընթացի վարչության հետ համատեղ քննարկելուց հետո: 4. Դիմումում նշված տվյալների և բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության կողմից LS Finance համակարգում վարվող տվյալների հետ անհամապատասխանությունների, անճշտությունների դեպքում (օր.՝ սխալ ծրագիր, միջոցառում), պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը դիմում է բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն անհրաժեշտ ճշգրտումներ կատարելու համար: Ճշգրտումներից հետո անհրաժեշտության դեպքում կատարվում են ուղղումներ LS Finance համակարգում: 5. Դիմումում տվյալները թերի լինելու կամ անճշտությունների առկայության դեպքում ՀՀ ՖՆ պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը գրությամբ տեղեկացնում է դիմումատուին շտկումներ կատարելու անհրաժեշտության մասին:


6. Տվյալները ճշգրիտ և ամբողջական լինելու դեպքում պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը մուտք է գործում LS Finance համակարգ և «Ներմուծում` Չափվներ» բաժնից «մուտք» հրահանգով մուտքագրում է նոր հաշվի բացման համար անհրաժեշտ տվյալները և պահպանում:
7. Եթե դիմումատուի և օգտատերերի տվյալները արդեն առկա են LS Finance համակարգում, ապա գանձապետական հաշվի բացումից հետո պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը դիմումում ներկայացված անձանց տալիս է հաշիվը կառավարելու կամ դիտելու լիազորություններ Client Treasure-ի համակարգում:
8. Եթե դիմումատուն նոր հաճախորդ է և համակարգում չունի օգտատերեր, ապա պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը բացում է նոր հաճախորդի կոդ և գրությամբ դիմում է ՏՏ վարչություն հաշվի հաճախորդի համար օգտվողներ ստեղծելու համար: Դրանից հետո պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը օգտվողներին տալիս է անհրաժեշտ լիազորությունները և ըստ անհրաժեշտության տեղեկացնում է դիմումատուին հաշվի բացման վերաբերյալ:

Մուտքագրվող տվյալներ

ԳԶ-ՊԲ1/Մ

Տվյալ	Նկարագրություն
Չափվ կարգ	(բացվող ցանկ) /արտաբյուջետային, սովորական, բյուջետային, եկամտային/
Չաճախորդ /տեղեկատու/	
Չափվ բացման ամսաթիվ	
Արժույթ	
Չափվեկշռային հաշիվ	(տեղեկատու), 2730, 2720, որևէ խմբի դասակարգման համար բացված հաշիվների խումբ ըստ տեսակների
Գանձապետական հաշիվ	/գեներացնում է համակարգը/
Չափվ տիպը	(բացվող ցանկ) /պասիվ/
Ծրագրի անվանում	լրացվում է համակարգի կողմից ծրագրի գործառական դասակարգումը մուտքագրելուց հետո
Պատասխանատու նախ.	
Տնտեսագիտական դասակարգման հոդված	

	Բաժին, խումբ, դաս, ծրագիր	/բյուջետային բլոկ/
	Հաշվի կարգավիճակ	/բաց, փակ, արգելափակված/
	Հաշվի փակման ամսաթիվ	
Ելքագրվող տվյալներ	ԳՁ-ՊԲ1/Ե Գանձապետական հաշվեհամար	
Վալիդացիա	Տեղեկատուների տվյալների ստուգում «Կարգը» դաշտի արժեքի ստուգում «Հաշվեկշռային հաշիվ» դաշտի արժեքի հետ	



Ստորաբաժանում	Պետական բյուջեի հաշվառման բաժին
Անվանում	ԳՁ-ՊԲ2– ճշտված անվանացանկի ներմուծում
Նպատակ	Վարկային և դրամաշնորհային ծրագրերով նախատեսված ծախսերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում
Տիրույթ	ՀՀ Ֆինանսների նախարարություն, ԲԳԿ, ԾԻԳ
Դերակատարներ	Պետական բյուջեի հաշվառման բաժին, LS Finance, Client Treasury համակարգեր
Ընթացք 1	<ol style="list-style-type: none"> 1. ԾԻԳ-ը վարկային և դրամաշնորհային ծրագրերի համար գնումների անվանացանկը/պլանը ներկայացնում է ԲԳԿ-ին՝ Client Treasury համակարգ մուտքագրվելու համար: Client Treasury համակարգում մուտքագրվում են միայն այն վարկային և դրամաշնորհային ծրագրերի մասով տվյալները, որոնք առկա չեն PPCM համակարգում մուտքագրվող գնումների պլանում: 2. ԲԳԿ-ն վարկային և դրամաշնորհային ծրագրերի համար գնումների անվանացանկը/պլանը մուտքագրում է Client Treasury համակարգ տարեկան թվով: 3. ԲԳԿ-ի համապատասխան լիազորություններ ունեցող աշխատակիցը մուտք է գործում Client Treasury համակարգ և «Արժութային գործարքներ» բաժնից ընտրում է «ճշտված անվանացանկի ներմուծում» գրառումը: Այնուհետև, բացված պատուհանում լրացնում է պահանջված դաշտերը: «Դեբետ հաշիվ» դաշտում՝ ընտրվում է ԲԳԿ-ի ծախսային հաշիվը: Տվյալ ծրագրի/միջոցառման ներքո ձեռքբերվող բոլոր ապրանքները և ծառայությունները մուտքագրվում են առանձին տողերով՝ յուրաքանչյուր ապրանքի/ծառայության համար լրացնելով «գնումներ», «քանակ», «գին» դաշտերը: 4. Եթե անվանացանկի ներմուծման ընթացքում ի հայտ են տալիս խնդիրներ, անհամապատասխանություններ, ապա դրանք ճշգրտվում և հարթեցվում են \$Ն պետական բյուջեի հաշվառման բաժնի հետ: 5. Անվանացանկի ներմուծումից հետո տվյալները պահպանվում են և հաստատվում կատարողի կողմից, հետո՝ 2-րդ կարգի ստորագրության լիազորություն ունեցող անձի կողմից, հետո՝ 1-ին կարգի ստորագրության լիազորություն ունեցող անձի կողմից: 6. Անվանացանկի հաստատումից հետո դրանում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում ԲԳԿ-ն փոփոխությունները կատարում է նույն գործարքով՝ «Արժութային գործարքներ» բաժնից կրկին ընտրում է «ճշտված անվանացանկի ներմուծում» գրառումը և կատարում է անհրաժեշտ ուղղումները տողերի միջև՝ ավելացումների կամ պակասեցումների միջոցով:

7. Եթե մուտքագրվող անվանացանկի գումարը, ընդ որում հաշվի են առնվում արդեն իսկ մուտքագրված անվանացանկերը, գերազանցում է պլանային սահմանները, Client Treasury համակարգը տալիս է սխալի հաղորդագրություն: Ուստի պետք է նախ և առաջ կատարել անհրաժեշտ փոփոխություններ, տվյալ գումարով չօգտագործված /ազատ/ միջոց ունենալու նպատակով: Ծրագիրը թույլ չի տալիս կատարել նվազեցում արդեն ծախսված չափաքանակի և գումարի մասով: Որևէ տողում փոփոխություն կատարելու դեպքում նախկին անվանացանկով հաստատված տվյալները հայտնվում են «հին գին», «հին քանակ» տողերում: Անվանացանկի փոփոխությունները պահպանվում և հաստատվում են 3-րդ կետում սահմանված նույն կարգով:
8. Տվյալների հաստատումից հետո տվյալները պահպանվում են LS Finance տվյալների բազայում:


Մուտքագրվող տվյալներ

ԳՁ-ՊԲ2/Մ

Տվյալ	Նկարագրություն
Փաստաթղթի համար	Ավտոմատ գեներացվող հերթական համար
Գործարքի ամսաթիվ	Տվյալ օրվա ամսաթիվ
Դեբետ հաշիվ	900001-ով սկսվող գանձապետական հաշիվ, բացվող ցանկ
Արժույթ	ՀՀ դրամ
Հոդված	Տնտեսագիտական դասակարգման հոդված, տեղեկատու
Քանակ	Ապրանքների կամ ծառայությունների քանակ
Գնումներ (CPV/ԳԱՄ կոդ)	Առաջին 8 նիշը` CPV/ԳԱՄ կոդ ըստ տեղեկատուի 30121100/2/16/2 Հաջորդ նիշը` քանի անգամ է օգտագործվում, գնման ձևի կոդը, չափի միավոր
Գին	Լրացվող դաշտ
Գնման ձև (կոդ)	Դաշտը նույնական չէ գնումների քաղաքականության վարչության կողմից վարվող գնման ձևերի հետ (օրինակ` RFP` 16, RFB` 17, RFQ` 18): Այս գնման ձևերից օգտվում է միայն ԾԻԳ-ը
Գումար	Հաշվարկվող տվյալ, քանակ * գին
Հին քանակ	Ավտոմատ լրացվող դաշտ է, որը կիրառվում է անվանացանկում փոփոխություններ կատարելիս, ցուցադրում է նախկինում մուտքագրված տվյալ

	<p>Ծախսված քանակ</p> <p>Ավտոմատ լրացվող դաշտ ըստ փաստացի կատարված գնումների</p> <p>Ծախսված գումար</p> <p>Ավտոմատ լրացվող դաշտ ըստ փաստացի կատարված ծախսի</p>
Ելքագրվող տվյալներ	Բոլոր մուտքագրվող տվյալները ցուցադրվում են LS Finance համակարգում
Վալիդացիա	«Գումար» դաշտի արժեքի ստուգում տվյալ ծրագրի/միջոցառման համար հաստատված բյուջեի համամասնությունների հետ, ինչպես նաև ծախսված գումարի հետ

Իրավական ակտեր` կիրառվում են միջազգային պայմանագրերի դրույթները



Ստորաբաժանում	Պետական բյուջեի հաշվառման բաժին
Անվանում	ԳՁ-ՊԲՅ– Ծախսերի կատարման նախահաշիվների ստուգում և հաշվառում
Նպատակ	Ծախսերի կատարման նախահաշիվների ներմուծում համակարգ
Տիրույթ	ՀՀ ֆինանսների նախարարություն, ԲԳԿ, ԾԻԳ
Դերակատարներ	Պետական բյուջեի հաշվառման բաժին, բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն, LS Finance, Client Treasury համակարգեր
Ընթացք 1	<ol style="list-style-type: none"> 1. ՀՀ պետական բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունների հաստատումից հետո ԲԳԿ-ն ՀՀ կառավարության 15.06.2018թ. N 706 որոշմամբ սահմանված կարգով թղթային եղանակով հաստատում է ԾԻԳ-ի նախահաշիվները: Նախահաշիվներով սահմանվում է ծախսերի եռամսյակային բաշխումը ըստ տնտեսագիտական հոդվածների՝ աճողական կարգով: 2. ԲԳԿ-ի կողմից նախահաշիվների հաստատումից հետո ԾԻԳ-ը յուրաքանչյուր վարկային և դրամաշնորհային ծրագրով հաստատված նախահաշիվները մուտքագրում է Client Treasury համակարգ՝ եռամսյակային կտրվածքով: Արժութային հաշիվների դեպքում նախահաշիվները մուտքագրվում են տվյալ արժույթով: Արտարժութային հաշիվների դեպքում հիմք է ընդունվում տվյալ տարվա բյուջետային փոխարժեքը: 3. Նախահաշիվները լրացվում են Client Treasury համակարգի գործարքներ բաժնի «արտաբյուջետային պլանի ներմուծում» հրահանգի միջոցով, իսկ դրամաշնորհային միջոցների հաշիվների դեպքում՝ «պլանի ներմուծում» հրահանգի միջոցով՝ ըստ տնտեսագիտական հոդվածների: Սկզբում մուտքագրվում են տարեկան ցուցանիշները, հետո՝ եռամսյակային: Համաֆինանսավորումների և վարկային միջոցների դեպքում նախահաշիվների ցուցանիշները ստուգվում են ԲԳԿ-ի հաշվին առկա եռամսյակային համամասնությունների սահմանների հետ (ԲԳԿ-ի բյուջետային հաշվի վրա արտացոլված են պլանները ըստ հոդվածների՝ ընդհանուր պլան և համաֆինանսավորման պլան:): Իսկ դրամաշնորհային միջոցների դեպքում ստուգում չի իրականացվում: 4. Նախահաշիվների մուտքագրման դեպքում սխալների և/կամ անհամապատասխանությունների առկայության դեպքում դրանք ճշտվում են Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության հետ: 5. ԾԻԳ-ի կողմից տվյալները լրացնելուց հետո նախահաշիվը հաստատվում է կատարողի կողմից, հետո՝ 2-րդ կարգի ստորագրության լիազորություն ունեցող անձի կողմից, հետո՝ 1-ին կարգի ստորագրության լիազորություն ունեցող անձի կողմից:

6. Նախահաշիվները ներմուծելուց հետո միայն ԾԻԳ-երը ստանում են ֆինանսական պարտավորություն ստանձնելու և հաշվից վճարումներ կատարելու իրավունք: Համակարգը թույլ չի տալիս հաշվից իրականացնել ծախսեր մինչև նախահաշիվը ներմուծված չէ:
7. Կապի խափանումների դեպքում ԾԻԳ-երը նախահաշիվները կարող են ներկայացնել ՀՀ ՖՆ պետական բյուջեի հաշվառման բաժին թղթային եղանակով LS Finance համակարգում մուտքագրելու համար՝ ՀՀ ֆինանսների նախարարի 23.07.2007թ. 597-Ն սահմանված ձևանմուշներով:
8. Թղթային տարբերակով նախահաշիվները ներկայացնելու դեպքում բաժնի աշխատակիցը ուսումնասիրում է նախահաշիվները՝ դրանց օրենսդրությամբ սահմանված լրացման պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար: Ներկայացված նախահաշիվները բաշխվում են ԾԻԳ-ը սպասարկող մասնագետների միջև, որոնց կողմից կատարվում է ուսումնասիրություն՝ դրանց օրենսդրությամբ սահմանված լրացման պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար: Թերություններ և/կամ անհամապատասխանությունների առկայության դեպքում նախահաշիվները վերադարձվում են ԾԻԳ-ներին լրամշակման: Թերությունների բացակայության դեպքում ճշտված նախահաշիվները ներմուծվում են LS Finance ծրագիր և ներկայացվում են թղթային հաստատման բաժնի պետին, որի մեկ ստորագրված/կնքված օրինակը տրամադրվում է ԾԻԳ-ին:
9. Միջծրագրային, միջհոդվածային փոփոխությունների դեպքում նախահաշիվների ներկայացման գործընթացը նույն հերթականությամբ կրկնվում է: Նախահաշիվի ավելացման դեպքում նախ փոփոխվում են տարեկան ցուցանիշները, հետո՝ եռամսյակային: Նախահաշիվի նվազեցման դեպքում նախ փոփոխվում են եռամսյակային ցուցանիշները, հետո՝ տարեկան:

Մուտքագրվող տվյալներ


ԳԶ-ՊԲ3/Մ

Տվյալ	Նկարագրություն
Տարի, եռամսյակ	
Հիմնարկի անվանում	Տեղեկատու
Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կողմ ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման	Տեղեկատու
ՀՀ պետական կառավարման (տեղական ինքնակառավարման) մարմնի անվանում	Տեղեկատու
Ֆինանսավորման աղբյուրի կոդը	ՀՀ պետական բյուջե՝ 1, համայնքի բյուջե՝ 2

	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգ. ծածկագիր	Տեղեկատու
	Ծրագրի անվանումը	Տեղեկատու
	Ծրագրի կոդը	Տեղեկատու
	ՀՀ պետական կառավարման (ՏԻ) մարմնի կողմից ըստ բյուջետային ծախսերի գերատեսչակ. դասակարգման	Տեղեկատու
	Չափման միավոր	Տեղեկատու / դրամ կամ արտարժույթ/
	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերը	Տեղեկատու
	Նույն ժամանակահատվածի համար նախկինում հաստատված՝ գործող նախահաշվի ցուցանիշները	Համակարգի կողմից ավտոմատ գեներացվող
	Նախահաշվում կատարված փոփոխությունները(ավելացումը՝ /+/, պակասեցումը՝ /-/)	
	Նախահաշվով հաստատվող ցուցանիշները այդ թվում՝ ըստ եռամսյակների (եռամսյակի ամիսների) աճողական	
Ելքագրվող տվյալներ	Բոլոր մուտքագրվող տվյալները արտացոլվում են LS Finance համակարգում	
Վալիդացիա	Բոլոր տեղեկատուների տվյալների ստուգում Թվային ցուցանիշների ստուգում հաստատված բյուջեի պլանի հետ	

Իրավական ակտեր՝

1. ՀՀ Ֆինանսների նախարարի 23.07.2007թ. 597-Ն հրաման



Ստորաբաժանում՝	Պետական բյուջեի հաշվառման բաժին
Անվանում	ԳՁ-ՊԲ4– ԾԻԳ-երի պայմանագրերի ներմուծում
Նպատակ	ԾԻԳ-երի կողմից կնքված պայմանագրերի ստուգում, վերահսկում, հաշվառում
Տիրույթ	ՀՀ ֆինանսների նախարարություն, ԲԳԿ/ԾԻԳ
Դերակատարներ	Պետական բյուջեի հաշվառման բաժին, LS Finance, Client Treasury համակարգեր
Ընթացք 1	<p><u>Պայմանագրի ներմուծում</u></p> <ol style="list-style-type: none"> 1. ԲԳԿ-ի կամ ԲԳԿ-ի կողմից լիազորված՝ ԾԻԳ-ի համապատասխան թույլտվություն ունեցող աշխատակիցը մուտք է գործում Client Treasury համակարգ: 2. Client Treasury համակարգի «Պայմանագրի ներմուծում» բաժնից մուտքագրում է ԾԻԳ-ի կողմից արդեն ստորագրված պայմանագրի տվյալները: 3. Անհրաժեշտ տվյալները մուտքագրելուց հետո «Լրացնել» հրահանգի միջոցով բացվում է «Քանակ» դաշտում լրացված քանակին համապատասխան տող, որտեղ լրացվում են տվյալ պայմանագրի շրջանակներում ձեռքբերվող ապրանքների/ծառայությունների CPV/ԳՄԱ կոդերը, քանակ, գին դաշտերով, այնուհետև՝ կցվում է պայմանագրի թղթային տարբերակը: 4. Միայն ֆայլ կցելու դեպքում «Գործարքներ/Յսկում» բաժնից հնարավոր է նշել փաստաթուղթը և «Վերադարձնել» հրահանգի միջոցով ստանալ փոփոխման հնարավորություն՝ «Գործարքներ»՝ «Փոփոխման ենթակա», «Չեռացնել կից ֆայլերը»՝ «Այո» քայլերի հաջորդականությամբ՝ կցելով ճիշտ ֆայլերը: 5. Ներմուծված տվյալները պահպանվում են և հաստատվում կատարողի կողմից, այնուհետև՝ 2-րդ կարգի ստորագրության իրավունք ունեցող անձի կողմից, այնուհետև՝ 1-ին կարգի ստորագրության իրավունք ունեցող անձի կողմից: <p><u>Պայմանագրի փոփոխում</u></p> <ol style="list-style-type: none"> 1. Ներմուծված պայմանագրում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում՝ պայմանագրի գրոյացում, գումարի փոփոխություն, ապրանքի նոր կոդի ավելացում և այլն., ԲԳԿ-ի կամ ԲԳԿ-ի կողմից լիազորված՝ ԾԻԳ-ի համապատասխան թույլտվություն ունեցող աշխատակիցը մուտք է գործում Client Treasury համակարգի «Պայմանագրի փոփոխում անվ-ով» բաժին: «Հաշվի համար» դաշտը ընտրելով և սեղմելով «Լրացնել» կոճակը, «Գնումներ» բաժնից ընտրում է պայմանագիրը, որում անհրաժեշտ է կատարել փոփոխություն: Ծրագիրը բեռնում է տվյալ պայմանագրի ներքո լրացված բոլոր դաշտերը: «Պայմանագրի համարը» դաշտում համարից հետո պետք է դնել կետ, եթե պայմանագիրը գրոյացվում է:

«Գումարը» դաշտում ներմուծվում է 0.10, եթե պայմանագիրը գրոյացվում է, կամ գրվում է նոր գումարը: Զրոյացման դեպքում քանակ և գին դաշտերում լրացվում է 0, իսկ փոփոխությունների դեպքում կատարվում են համապատասխան փոփոխությունները ըստ տողերի:

2. Կատարված փոփոխությունները պահպանվում են և հաստատվում սահմանված կարգով:

Պայմանագրի հանրագումար

«Պայմանագրեր» բաժնի «Հանրագումար» հրահանգի միջոցով ընտրելով «Հաշիվ» և «Պայմանագիր» դաշտերի արժեքներ՝ հնարավոր է ստանալ ամբողջական տեղեկատվություն յուրաքանչյուր պայմանագրի գծով՝ պայմանագրի գումար, ժամանակացույց, տրված կանխավճար, վճարված գումար, հաստատված պլան, պլանի մնացորդ:


Մուտքագրվող տվյալներ

ԳՁ-ՊԲ4/Մ

Տվյալ	Նկարագրություն
Ամսաթիվ	Տվյալ օրվա ամսաթիվ
Փաստաթղթի համարը	Համակարգի կողմից գեներացվող հերթական համար
Գործարքի ամսաթիվ	Ընթացիկ օրը
Պայմանագրի համար	Լրացվող տեքստային դաշտ
Հաշվի համարը	Ընտրվում է բացվող ցուցակից /ըստ միջոցառման/
Մասնաճյուղեր	Լրացվում է 000 կողը, որը տվյալների հենքի կողն է
Վճարման տիպ	Բացվող ցանկ՝ իրավաբանական անձ կամ ֆիզ. անձ Իրավաբանական անձի դեպքում՝ - ՀՎՀՀ Ֆիզիկական անձի դեպքում՝ - Անձնագիր Օտարերկրյա ֆիզիկական անձի կամ կազմակերպության դեպքում՝ -ընտրվում արտասահմանյան դաշտը
Գնման ձև	Բացվող ցանկ
Պայմանագրի կնքման ամսաթիվ	Ամսաթիվ
Պայմանագրի կնքման օր	Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվ

Պայմանագրի ավարտ	Պայմանագրի ավարտի օրը
Հիմնավորում	Տեքստային դաշտ
ԲԸԱՀ հիմք	Բացվող ցանկ /առանց մրցույթի ընթացակարգերի համար/
Գնման առարկա	Տեքստային դաշտ
Ստացողի հաշիվ	Մատակարարի բանկային հաշիվ
Գործընկեր	Մատակարար ընկերության անուն, տեքստային դաշտ
Գումար	Պայմանագրի գումար
Կանխավճար	Եթե նախատեսված է
Քանակ	Անվանացանկի տողերի քանակ
Գնումներ (CPV/ԳՄԱ կոդ)	Լրացվող դաշտ, օր` 22816100/1
Չափման միավոր	Լրացվող դաշտ
Քանակ	Ձեռքբերվող քանակ ըստ պայմանագրի
Գին	Ձեռքբերման գին ըստ պայմանագրի
Գումար	Հաշվարկվող դաշտ /քանակ * գին/
Error	Միսալի հաղորդագրություն, եթե ներմուծված տվյալներում առկա են սխալներ
Հեռացնել կից \$այլերը	Բացվող ցանկ /Ոչ, այո/
Պայմանագրի թղթային տարբերակ	\$այլ բեռնելու համար նախատեսված դաշտեր
Գնումներ	Բացվող ցանկ, որը արտացոլում է բոլոր մուտքագրված պայմանագրերի տվյալները
Հին քանակ	Պայմանագրի փոփոխման դեպքում նախկինում լրացված տվյալ
Հին գին	Պայմանագրի փոփոխման դեպքում նախկինում լրացված տվյալ

Ելքագրվող տվյալներ	Բոլոր տվյալները արտացոլվում են LS Finance համակարգում
Վալիդացիա	Բոլոր տեղեկատուների տվյալների ստուգում Թվային ցուցանիշների ստուգում հաստատված բյուջեի պլանի հետ



Ստորաբաժանում	Պետական բյուջեի հաշվառման բաժին
Անվանում	ԳՁ-ՊԲ5– ԾԻԳ-երի պայմանագրերից քաղվածքների ընդունում, ստուգում, հաշվառում և հաստատում
Նպատակ	ԾԻԳ-երի կողմից կնքված պայմանագրերի քաղվածքների, ներառյալ վճարման ժամանակացույցերի ներմուծում Client Treasury համակարգ
Տիրույթ	ՀՀ Ֆինանսների նախարարություն, ԾԻԳ
Դերակատարներ	Պետական բյուջեի հաշվառման բաժին, LS Finance, Client Treasury համակարգեր
Ընթացք 1	<ol style="list-style-type: none"> 1. ԾԻԳ-երի կողմից պայմանագրի քաղվածք ներմուծելու համար Client Treasury համակարգում պետք է ներմուծված լինի համապատասխան պայմանագիրը (Հղում՝ ԳՁ-ՊԲ4– ԾԻԳ-երի պայմանագրերի ներմուծում): 2. ԾԻԳ-ի համապատասխան թույլտվություն ունեցող աշխատակիցը մուտք է գործում Client Treasury համակարգ և «Քաղվածք պայմ. ներմուծում (ԾԻԳ)» բաժնից լրացնում է պարտադիր դաշտերը: Քաղվածքը ներմուծվում է նույն տվյալներով, ինչ ներմուծվել է պայմանագիրը: «Պայմանագրի հիմնակ. համար» դաշտի հիման վրա համակարգի կողմից իրականացվում է պայմանագրի հիմնական տվյալների ստուգում և որևէ տվյալի անհամապատասխանության դեպքում համակարգը թույլ չի տալիս մուտքագրել քաղվածքը: 3. Մինևույն պայմանագրի համար կարող է մուտքագրվել մեկից ավելի քաղվածք՝ սա կիրառելի է այն դեպքերի համար, երբ մինևույն պայմանագրի շրջանակներում գումարի մի մասը պետք է վճարվի դրամով, մյուս մասը՝ արտարժույթով: Մի քանի քաղվածքների մուտքագրման դեպքում դրանց հանրագումարը ստուգվում է պայմանագրի ընդհանուր գումարի հետ: 4. Եթե պայմանագրով նախատեսված է գումարի վճարում կանխավճարի տեսքով, քաղվածքի «Երաշխիք» դաշտում լրացվում է «այո» և քաղվածքին կցվում է բանկային երաշխիքի սքանավորված տարբերակը: 5. Այնուհետև՝ «Լրացնել» կոճակը սեղմելով բացվում են տվյալ պայմանագրի շրջանակներում նախատեսված վճարման (իսկ կանխավճարի դեպքում՝ կանխավճարի մարման) ժամանակացույցի ներմուծման համար անհրաժեշտ տողեր, որտեղ ըստ ամիսների մուտքագրվում է վճարման և/կամ կանխավճարի մարման ժամանակացույցը: 6. Ներմուծված տվյալները պահպանվում են և հաստատվում կատարողի կողմից, այնուհետև՝ 2-րդ կարգի ստորագրության իրավունք ունեցող անձի կողմից, այնուհետև՝ 1-ին կարգի ստորագրության իրավունք ունեցող անձի կողմից:

7. Այն քաղվածքները, որոնցով նախատեսվում է վճարում կանխավճարի տեսքով, պետք է հաստատվեն/ակտիվացվեն \$Ն պետական բյուջեի հաշվառման բաժնի կողմից: \$Ն պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը, քաղվածքը հաստատելու/ակտիվացնելու համար մուտք է գործում LS Finance համակարգ և փնտրման եղանակով (ըստ պայմանագրի կողի, ըստ հաշվի, ըստ հաճախորդի) գտնում է համապատասխան պայմանագիրը, այնուհետև՝ պայմանագրերի հաստատում բաժնից հանում է «երաշխիք» կոճակի նշումը, որից հետո քաղվածքը համարվում է հաստատված/ակտիվացված:
8. \$Ն պետական բյուջեի հաշվառման բաժնի կողմից նաև ենթակա են հաստատման այն քաղվածքները, որտեղ գնման ձևը ընտրված է «0՝ գնում չհանդիսացող ծախս» և ընտրված է այնպիսի հոդված, որը ենթադրում է ապրանքի կամ ծառայության գնում (օրինակ՝ 5112, 5113, 4214, կիրառվում է (հետ)երաշխիքային ժամանակահատվածից հետո նախատեսված վճարումների համար), հաստատում չեն պահանջում դրամաշնորհները և սուբսիդիաները: Մյուս բոլոր դեպքերում պայմանագրերի քաղվածքները ԾԻԳ-ի կողմից հաստատելուց հետո միանգամից պահպանվում են համակարգում:
9. \$Ն-ի կողմից հաստատում պահանջող քաղվածքները հայտնվում են LS Finance համակարգի հսկում բաժնում, սակայն համակարգը այդ մասին որևէ կերպ չի ծանուցում պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցներին: Այդ մասին տեղեկատվությունը ստացվում է կամ զանգի միջոցով, կամ գործառնական օրը փակելու ժամանակ (հնարավոր չէ փակել գործառնական օրը, եթե առկա են չհաստատված գործարքներ):
10. \$Ն-ի պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը ուսումնասիրում է հաստատում պահանջող պայմանագրի քաղվածքները: Սխալներ չհայտնաբերելու դեպքում՝ հաստատում է, իսկ պայմանագրի քաղվածքում սխալներ հայտնաբերելու դեպքում հսկում բաժնից հեռացնում է քաղվածքը՝ թողնելով սխալի հաղորդագրություն: ՀՀ \$Ն-ի կողմից հեռացված/մերժված քաղվածքները հայտնվում են ԾԻԳ-ի 2-րդ կարգի ստորագրության իրավունք ունեցող օգտվողի հսկման հերթում, որը հնարավորություն ունի կամ ուղղելու քաղվածքում առկա սխալները կամ հեռացնելու այն:
11. Ընթացիկ տարվա ընթացքում ներմուծված պայմանագրերը և քաղվածքները չեն տեղափոխվում հաջորդ տարիներ:

Պայմանագրերի դիտում

Ներմուծված քաղվածքի հետ կապված տվյալները կարելի է դիտել «Պայմանագրի դիտում» հրահանգի միջոցով՝ լրացնելով «Հաշիվ», «Հոդված», «Ամսաթիվ» ընտրովի դաշտերը: Սեղմելով «Դիտել» կոճակը համակարգը կցուցադրի տվյալ հաշվի գծով ներմուծված բոլոր պայմանագրերի տվյալները՝ պայմանագրի կող, անվանում, հոդված, գումար, պայմանագրի սկիզբ, ավարտ, գործընկերոջ անվանում, հարկային կող, բանկային հաշվի համար, պայմանագրի անվանում, գնման ձև, պայմանագրի մնացորդ, պայմանագրով արդեն վճարված գումար,

մարված կանխավճար, կանխավճարի մնացորդ, պարտք, ընթացիկ պարտք, ժամկետանց պարտք, հավաստագրի գումար:

Քաղվածքի սրբագրում

Պայմանագրի քաղվածքում հնարավոր է կատարել փոփոխություններ «Պայմանագրեր» բաժնի «Քաղվածքի սրբագրում ԾԻԳ» գրառման միջոցով: «Վճարողի հաշիվ» դաշտից անհրաժեշտ է ընտրել հաշիվը, այնուհետև՝ «Լրացնել» հրահանգի միջոցով «պայմանագիր» դաշտում հայտնված ցուցակից անհրաժեշտ է ընտրել այն պայմանագիրը, որի քաղվածքը ենթակա է փոփոխման: Պայմանագիրը ընտրելուց հետո «Լրացնել» հրահանգի միջոցով ծրագիրը ավտոմատ ցուցադրում է պայմանագրի տվյալները: Բոլոր անհրաժեշտ փոփոխությունները կատարելուց հետո պահպանվում են և հաստատվում կատարողի կողմից, այնուհետև՝ 2-րդ կարգի ստորագրության իրավունք ունեցող օգտվողի, այնուհետև՝ 1-ին կարգի ստորագրության իրավունք ունեցող օգտվողի

Մուտքագրվող տվյալներ



ԳՁ-ՊԲ5/Մ

Տվյալ	Նկարագրություն
Գործարքի ամսաթիվ	Ընթացիկ օրվա ամսաթիվ
Պայմանագրի հիմնական համար	Ստորագրված պայմանագրի համարը
Պայմանագրի համար	Ստորագրված պայմանագրի փոփոխությունների/համաձայնագրերի համարները տվյալ տարվա համար
Վճարողի հաշիվ	Բացվող ցանկ (9000009-ով սկսվող հաշիվ)
Յոթված	Տնտեսագիտական դասակարգման հոդված
Արժույթ	Քաղվածքի արժույթ /դրամ, եվրո, դոլար/
Համառոտ անվանում	Տեքստային դաշտ՝ ծառայության կամ ապրանքի անվանում /օր.՝ ներկայացուցչական ծախս/
Վճարման տիպ	Բացվող ցանկ՝ իրավաբանական անձ կամ ֆիզ. անձ Իրավաբանական անձի դեպքում՝ - ՀՎՀՀ Ֆիզիկական անձի դեպքում՝ - Անձնագիր

		Օտարերկրյա ֆիզիկական անձի կամ կազմակերպության դեպքում՝ -ընտրվում արտասահմանյան դաշտը
	ՀՎՀՀ	Լրացվում է, եթե վճարման տիպը ընտրված է «ՀՎՀՀ», մատակարարի ՀՎՀՀ
	Անձնագիր	Ֆիզ անձ. մատակարարի դեպքում
	Պատվիրատուի ՀՎՀՀ	Դաշտը կիրառվում է միայն ԾԻԳ-երի համար, եթե այլ պետական մարմին հանդես է գալիս որպես Պատվիրատու (օր.՝ Վարչապետի աշխատակազմ)
	Գնման ձև	Բացվող ցանկ
	Դրական եզրակացություն	Բացվող ցանկ՝ այո, ոչ
	Երաշխիք	Բացվող ցանկ՝ այո, ոչ (կանխավճարի ապահովման երաշխիք), այո-ի դեպքում պետք է կցվի բանկային երաշխիքի սքանավորված տարբերակը
	Պայմանագրի կնքման ամսաթիվ	
	Պայմանագրի սկիզբ	
	Պայմանագրի ավարտ	
	Ստացողի հաշիվ	Մատակարարի բանկային հաշիվ
	SWIFT	Կիրառվում է օտարերկրյա մատակարարի դեպքում
	Account	Կիրառվում է օտարերկրյա մատակարարի դեպքում
	Գործընկեր	Մատակարար ընկերության անուն
	Կանխավճար (արժույթ, դրամ)	Կանխավճարի չափ ըստ արժույթների
	Կանխավճարի վճարման ամսաթիվ	Կանխավճարի վճարման օր

	Պայմանագրի գումարը (արժույթ, դրամ)	Պայմանագրի գումարը ըստ արժույթների /տվյալ տարվա համար/
	Պայմանագրի ընդհանուր գումարը (արժույթ, դրամ)	Պայմանագրի ընդհանուր գումարը ըստ արժույթների /ըստ անհրաժեշտության/
	Ժամանակահատված (ամիս)	Ըստ վճարման ժամանակացույցի
	Գումար	Ըստ վճարման ժամանակացույցի
	Կանխավճարի մարում (արժույթ, դրամ)	Ըստ մարման ժամանակացույցի
	Պայմանագրի կոդ	Համակարգի կողմից գեներացվող համար
Ելքագրվող տվյալներ	Բոլոր մուտքագրված տվյալները արտացոլվում են LS Finance համակարգում	
Վալիդացիա	Թվային դաշտերի ստուգում պայմանագրի և նախահաշվի հետ, պայմանագրի ստուգում անվանացանկի հետ, անվանացանկի ստուգում բյուջեի պլանի հետ Տեղեկատուների ստուգում	

Իրավական ակտեր` ՀՀ կառավարության 15.06.2018թ. 706-Ն որոշում



Ստորաբաժանում	Պետական բյուջեի հաշվառման բաժին
Անվանում	ԳՁ-ՊԲ6– ԾԻԳ-երի կողմից հավաստագրերի (վճարումը հավաստող փաստաթղթերի) ներբեռնում
Նպատակ	ԾԻԳ-երի կողմից մատակարարներին վճարումներ կատարելու համար հավաստող փաստաթղթերի ներբեռնում
Տիրույթ	ՀՀ ֆինանսների նախարարություն, ԾԻԳ
Դերակատարներ	LS Finance, Client Treasury համակարգեր
Ընթացք 1	<ol style="list-style-type: none"> 1. Մատակարարներին վճարումներ կատարելու նպատակով /բացառությամբ կանխավճարի/ ԾԻԳ-ը մինչև փաստացի վճարում կատարելը պետք է Client Treasury համակարգում բեռնի հավաստագիր՝ վճարումը հիմնավորող փաստաթուղթ (հանձնման-ընդունման ակտ, հաշիվ-ապրանքագիր կամ հարկային հաշիվ): Հավաստագրի ներբեռնումը պետք է կատարվի պայմանագրի քաղվածքի ներմուծում գործարքից հետո (ԳՁ-ՊԲ5– ԾԻԳ-երի պայմանագրերից քաղվածքների ընդունում, ստուգում, հաշվառում և հաստատում): 2. ԾԻԳ-ի համապատասխան լիազորություն ունեցող աշխատակիցը մուտք է գործում Client Treasury համակարգ և «Հավաստագրի ներմուծում ԾԻԳ» հրահանգի միջոցով ներմուծում անհրաժեշտ տվյալները: 3. Եթե պայմանագրի քաղվածքում որպես մատակարար նշված է ՀՀ ռեզիդենտ (ընտրված է ՀՀՀՀ դաշտը) և վճարումը ՀՀ դրամով է, ապա հավաստագրի մուտքագրման գործընթացում հաշիվ-ապրանքագիր դաշտի լրացումը պարտադիր է: 4. Հավաստագիրը կարող է կցվել միայն մեկ պայմանագրի քաղվածքի/հաշվի, սակայն վճարումների կատարման փուլում մինևս մեկ հավաստագրից կարող են օգտվել մեկից ավել քաղվածքներ (կիրառելի է այն դեպքերում, երբ առկա է համաֆինանսավորում և վճարումները կատարվում են տարբեր հաշիվներից, տարբեր արժույթներով): Վճարումը կատարելիս «վճարում ըստ քաղվածքի» դաշտում ընտրվում է այն պայմանագրի քաղվածքը, որից գումարը պետք է պահվի: Եթե քաղվածքի համար չկա առանձին հավաստագիր և քաղվածքը օգտվելու է մեկ այլ քաղվածքի հավաստագրից, այդ դեպքերում պայմանագրի քաղվածքում «պայմանագրի ընդհանուր գումար» դաշտը պետք է պարտադիր լրացված լինի: Հավաստագրի գումարը կարող է գերազանցել պայմանագրի քաղվածքի գումարը, քանի որ այդ հավաստագրից կարող է օգտվել մեկ այլ քաղվածք: 5. Այն դեպքերում երբ վճարումը Մատակարարին կատարվում է ուղղակիորեն դոնոր կազմակերպության կողմից (ոչ թե մուտքագրվում է գանձապետական հաշվին և հետո այնտեղից ելքագրվում), լրացվում է «ուղիղ վճարում պահուստից» դաշտը: Ուղիղ վճարման դեպքում վճարումը և ֆինանսավորումը

ձևակերպվում է պետական բյուջեի հաշվառման բաժնի կողմից՝ պետական պարտքի վարչության կամ ԲԳԿ-ի կողմից Mulberry համակարգով տրվող տեղեկանքի հիման վրա: Եթե վճարումը ձևակերպելու ժամանակ պահուստում առկա չէ բավարար գումար, ապա համակարգը տալիս է սխալի հաղորդագրություն:

6. Վճարման փուլում համակարգը թույլ է տալիս իրականացնել վճարում միայն «Գումար» դաշտի և «Ուղիղ վճարում պահուստից» դաշտերի արժեքների տարբերության չափով:
7. Համակարգը թույլ է տալիս հավաստագիրը ներմուծելիս կցել մեկ ֆայլ: Սխալ ֆայլ կցելու դեպքում անհրաժեշտ է մտնել «Գործարքներ»՝ «Հսկում» բաժին, նշել փաստաթուղթը, սեղմել «Վերադարձնել» հրահանգը, այնուհետև մտնել «Գործարքներ»՝ «Փոփոխման ենթակա» բաժին և «Հեռացնել կից ֆայլերը» դաշտում ընտրել «այո», այնուհետև կցել ճիշտ ֆայլը:
8. Հավաստագիր չի ներմուծվում, եթե վճարումը կատարվում է որպես կանխավճար:
9. Ներմուծված տվյալները պահպանվում են և հաստատվում կատարողի կողմից, այնուհետև՝ 2-րդ կարգի ստորագրության իրավունք ունեցող անձի կողմից, այնուհետև՝ 1-ին կարգի ստորագրության իրավունք ունեցող անձի կողմից: Հաստատելուց հետո տվյալները գրանցվում են համակարգում և արտացոլվում LS Finance համակարգում: Գանձապետարանի կողմից ստուգում չի իրականացվում:

Հավաստագրի ուղղում/հեռացում

Հավաստագիրը բեռնելուց հետո ԾԻԳ-ը այլևս չի կարող հավաստագրում կատարել ուղղում կամ հեռացում: Հավաստագրի հեռացման համար գրավոր դիմում է ՀՀ ՖՆ: Եթե հավաստագրի հիման վրա արդեն կատարվել է որևէ գործարք, ապա այն ենթակա չէ հեռացման և ՖՆ պետական բյուջեի հաշվառման բաժնի կողմից կարող է իրականացնել միայն հավաստագրի սրբագրում:


Մուտքագրվող
տվյալներ

ԳՁ-ՊԲ6/Մ

Տվյալ	Նկարագրություն
Գործարքի ամսաթիվ	Ընթացիկ օրվա ամսաթիվ
Գործարքի համար	Չերթական համար
Վճարողի հաշիվ	Բացվող ցանկ
Պայմանագիր	Բացվող ցանկ
Ստացող	Մատակարար ընկերություն/ֆիզ. անձ
Վճարման ամսաթիվ	Այն ամսաթիվը, երբ նախատեսվում է կատարել վճարում Եթե տվյալ հավաստագրից օգտվելու են մինչև տարվա վերջ, ապա նշվում է տարեվերջի ամսաթիվ Եթե հավաստագրից օգտվելու են մի քանի քաղվածքներ, ապա պետք է նշվի այն ամսաթիվը, երբ նախատեսվում է վերջին վճարումը
Հաշիվ-ապրանքագիր	Հաշիվ-ապրանքագրի/ հարկային հաշվի համար
Գումար	«ՀՎՀՀ» դաշտը ընտրված լինելու դեպքում ավտոմատ լրացվող դաշտ, որը հաշիվ-ապրանքագրի/հարկային հաշվի համարի հիման վրա գումարը բեռնում է ՊԵԿ-ի E-invoicing համակարգից ֆիզ. անձերի կամ օտարերկրյա մատակարարի դեպքում՝ լրացվող դաշտ Գումարը մուտքագրվում է այն արժույթով, որով մուտքագրված է տվյալ քաղվածքը, սակայն համարժեք դրամը ստացվում է ավտոմատ հիմք ընդունելով բյուջետային փոխարժեքը
Ուղիղ վճ. պահուստ	Ըստ անհրաժեշտության
Տուգանք	Եթե առկա է տուգանքի գումար
Հիմնավորող փաստաթուղթ	Ոչ պարտադիր դաշտ
Կից ֆայլ	Մեկ ֆայլի կցման հնարավորություն /ոչ պարտադիր/

Ելքագրվող տվյալներ	Բոլոր մուտքագրված տվյալները արտացոլվում են LS Finance համակարգում
Վալիդացիա	Թվային դաշտերի ստուգում պայմանագրի հետ, պայմանագրի ստուգում անվանացանկի հետ, անվանացանկի ստուգում բյուջեի պլանի հետ Տեղեկատուների ստուգում

Իրավական ակտեր` ՀՀ կառավարության 15.06.2018թ. 706-Ն որոշում



Ստորաբաժանում՝	Պետական բյուջեի հաշվառման բաժին
Անվանում	ԳԶ-ՊԲ7– ԾԻԳ-երից վճարային փաստաթղթերի ընդունում, ստուգում և վճարումների իրականացում
Նպատակ	ԾԻԳ-երի կողմից մատակարարներին վճարումների կատարում
Տիրույթ	ՀՀ Ֆինանսների նախարարություն, ԾԻԳ
Դերակատարներ	Պետական բյուջեի հաշվառման բաժին, ԾԻԳ, LS Finance, Client Treasury համակարգ
Բազմընթացք	Ոչ
Ընթացք 1	<p>ԾԻԳ-ի համապատասխան լիազորություն ունեցող աշխատակիցը, կնքված պայմանագրերի համաձայն մատակարարներին վճարում կարող է կատարել պայմանագրի քաղվածքը և հավաստագիրը Client Treasury համակարգ բեռնելուց հետո /բացառությամբ կանխավճարի, որի դեպքում հավաստագիր չի պահանջվում/:</p> <p><u>Փոխանցում SWIFT (ԾԻԳ)</u></p> <ol style="list-style-type: none"> 1. ԾԻԳ-ի համապատասխան լիազորություն ունեցող աշխատակիցը արտասահմանյան բանկեր փոխանցումներ կատարելու համար (բացառությամբ ռուբլիով և դրամով փոխանցումների) մուտք է գործում Client Treasury համակարգի «Պայմանագրեր» բաժին, ընտրում «Փոխանցում SWIFT ԾԻԳ» հրահանգը, այնուհետև լրացնում է փոխանցումը կատարելու համար բոլոր պարտադիր դաշտերը (ներկայացված են ստորև): 2. Զանի որ բոլոր արտասահմանյան վճարումները կատարվում են գանձապետական միասնական հաշվից «Ուղարկող» դաշտում համակարգի կողմից ավտոմատ լրացվում է ՀՀ Ֆինանսների նախարարությունը, այնուհետև երկրորդ տողով՝ ԾԻԳ-ը, իսկ «Դեբետ հաշիվ» դաշտում լրացվում է գանձապետական միասնական հաշվի համարը, մինչդեռ ԾԻԳ-ի հաշիվը լրացվում է / -ով՝ որպես վճարումը պատվիրող մարմնի հաշիվ: 3. Փոխանցումը կարող է կատարվել պայմանագրի քաղվածքում լրացված արժույթից տարբերվող արժույթով: 4. Փոխանցվող գումարի արժույթից անկախ «Վճարողի հաշիվը» դաշտից կարող է ընտրվել ցանկացած հաշիվ (դրամ, եվրո, դոլար): Եթե ընտրվում է դրամային հաշիվ, սակայն վճարումը կատարվում է արտարժույթով, ապա փոխարկումը կատարվում է ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված վաճառքի փոխարժեքի կիրառմամբ: Եթե ընտրվում է դոլարային հաշիվ, իսկ վճարումը կատարվում է եվրոյով, ապա կիրառվում են ՀՀ ԿԲ-ի դոլարի առքի և եվրոյի վաճառքի փոխարժեքները:

Արտարժույթով կատարված գործարքները հաշվետվություններում արտացոլվում են վճարումը կատարելու օրվա դրությամբ սահմանված ՀՀ ԿԲ-ի վաճառքի փոխարժեքով, իսկ մուտքերը՝ ՀՀ ԿԲ-ի առքի փոխարժեքով, ուղիղ վճարումների դեպքում կիրառվում է ՀՀ ԿԲ-ի հաշվարկային փոխարժեքը:

5. Ներմուծված տվյալները պահպանվում են և հաստատվում կատարողի կողմից, այնուհետև՝ 2-րդ կարգի ստորագրության իրավունք ունեցող անձի կողմից, այնուհետև՝ 1-ին կարգի ստորագրության իրավունք ունեցող անձի կողմից:
6. Հաստատելուց հետո տվյալները գրանցվում են LS Finance համակարգում և կատարվում համակարգի կողմից: ԾԻԳ-երի կողմից կատարվող փոխանցումները գանձապետարանի կողմից չեն հաստատվում:

Փոխանցում SWIFT RUR (ԾԻԳ)

1. ԾԻԳ-ի համապատասխան լիազորություն ունեցող աշխատակիցը ռուսական ռուբլիով փոխանցումներ կատարելու համար մուտք է գործում Client Treasury համակարգի «Պայմանագրեր» բաժին, ընտրում «Փոխանցում SWIFT RUR» հրահանգը, այնուհետև լրացնում է փոխանցումը կատարելու համար բոլոր պարտադիր դաշտերը (ներկայացված են ստորև):
2. Ռուբլիով փոխանցման դեպքում բոլոր դաշտերը լրացվում են ռուսերեն լեզվով:
3. Փոխանցվող գումարի արժույթից անկախ «Վճարողի հաշիվը» դաշտից կարող է ընտրվել ցանկացած հաշիվ (դրամ, եվրո, դոլար): Եթե ընտրվում է դրամային հաշիվ, սակայն վճարումը կատարվում է ռուբլիով, ապա փոխարկումը կատարվում է ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված վաճառքի փոխարժեքի կիրառմամբ:
4. Ներմուծված տվյալները պահպանվում են և հաստատվում կատարողի կողմից, այնուհետև՝ 2-րդ կարգի ստորագրության իրավունք ունեցող անձի կողմից, այնուհետև՝ 1-ին կարգի ստորագրության իրավունք ունեցող անձի կողմից:
5. Հաստատելուց հետո տվյալները գրանցվում են LS Finance համակարգում և կատարվում համակարգի կողմից: Գանձապետարանի կողմից ստուգում չի իրականացվում:

Փոխանցում ՀՀ բանկեր և գանձապետարան

1. ԾԻԳ-ի համապատասխան լիազորություն ունեցող աշխատակիցը ՀՀ բանկեր և գանձապետական հաշիվներին վճարում կատարելու համար մուտք է գործում Client Treasury համակարգի «Պայմանագրեր» բաժին, ընտրում «Փոխանցում բանկ ԾԻԳ» հրահանգը, այնուհետև լրացնում է փոխանցումը կատարելու համար բոլոր պարտադիր դաշտերը (ներկայացված են ստորև):
2. «Վճարողի հաշիվ» բացվող ցանկից կարող է ընտրվել ցանկացած հաշիվ (դրամ, եվրո, դոլար):

3. Ներմուծված տվյալները պահպանվում են և հաստատվում կատարողի կողմից, այնուհետև՝ 2-րդ կարգի ստորագրության իրավունք ունեցող անձի կողմից, այնուհետև՝ 1-ին կարգի ստորագրության իրավունք ունեցող անձի կողմից:
4. Հաստատելուց հետո տվյալները գրանցվում են LS Finance համակարգում և կատարվում համակարգի կողմից: Գանձապետարանի կողմից ստուգում չի իրականացվում:

Client Treasury համակարգը լիազորված օգտվողին թույլ չի տալիս ստեղծել նոր փոխանցում այն պայմանագրի քաղվածքի գծով, որի շրջանակներում առկա է ստեղծված փոխանցում, որը դեռևս հաստատված չէ 1-ին կարգի ստորագրության իրավունք ունեցող օգտվողի կողմից: Բոլոր վճարումները պետք է հաստատվեն ԾԻԳ-ի կողմից մինչև ժամը 15:30-ը: Եթե 1-ին կարգի ստորագրության լիազորություն ունեցող օգտվողի մոտ ժամը 15:30-ից հետո առկա են չհաստատված փոխանցումներ, ապա այդ գործարքները այլևս չեն կարող կատարվել և պետք է հեռացվեն համակարգից:

Գնում չհանդիսացող հոդվածների դեպքում վճարում

Գնում չհանդիսացող (օրինակ՝ աշխատավարձ, գործուղում, նպաստ, դեֆիցիտի հոդվածներ, հարկեր) վճարումների դեպքում ԾԻԳ-երը վճարումները կարող են կատարել համակարգում մուտքագրված նախահաշիվների գումարների սահմաններում:

1. ԾԻԳ-ի համապատասխան լիազորություն ունեցող աշխատակիցը մուտք է գործում Client Treasury համակարգ և «Արժութային գործարքներ» բաժնից ընտրում է «Արժութային փոխանցում» գործարքը, որի միջոցով կատարվում են փոխանցումներ բացառապես ՀՀ դրամով: Հաշիվը, որից կատարվում է փոխանցումը կարող է լինել ցանկացած արժույթով:
2. Աշխատավարձի վճարումը կատարվում է հատուկ ֆորմատով .xls ձևաչափի ֆայլի ներբեռնման միջոցով՝ տարանցիկ հաշիվներով:
3. Հաստատման գործընթացը իրականացվում է ընդհանուր սահմանված կարգով:

Մուտքագրվող
տվյալներ


ԳՁ-ՊԲ7/Ս

Տվյալ	Նկարագրություն
Փաստաթղթի համար	Վճարման հերթական համար
Գործարքի ամսաթիվ	Վճարման օրվա ամսաթիվ
Դեբետ հաշիվ	Միասնական գանձապետական հաշիվ, որից դուրս են գալիս բոլոր արտասահմանյան փոխանցումները Դաշտը գեներացվում է ավտոմատ փոխանցումը կատարելիս
Վճարողի հաշիվ	Բացվող ցանկ, լրացվում է ԾԻԳ-ի կողմից
Հոդված	Տնտեսագիտական դասակարգման հոդված
Ուղարկող	Վճարողի անուն և հասցե, 1-ին տողում՝ լրացվում է ՀՀ Ֆինանսների Նախարարություն 2-րդ տողում՝ կատարող պետական մարմնի անունը 3-րդ տողում՝ Ֆինանսների նախարարության հասցեն 4-րդ տողում՝ ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
Պայմանագիր	Բացվող ցանկ
Վճարում ըստ քաղվածքի	Բացվող ցանկ, ընտրվում է այն քաղվածքի կողը, որի վրա ներմուծվել է հավաստագիրը, քաղվածքի կողը տեսանելի է «Պայմանագրի դիտում» բաժնում , լրացվում է ըստ անհրաժեշտության
ՀՎՀՀ	Դաշտը լրացվում է, եթե ստացողը ՀՀ-ի ռեզիդենտ է
Փոխանցվող գումար	Թվային դաշտ

	Փոխանցվող արժույթ	Կարող է ընտրվել ցանկացած արժույթ բացվող ցանկից, բացառությամբ այն դեպքի եթե լրացված է «ՅՎՅՅ» դաշտը, այդ դեպքում կարող է ընտրվել միայն դրամ
	Փոխարժեք	Համակարգի կողմից ավտոմատ լրացվող դաշտ ըստ ՀՀ ԿԲ-ի սահմանված արժույթի փոխարժեքի՝ համաձայն «Արժույթի փոխարժեքներ» տեղեկատուի
	Գումար	Համարժեք գումար ՀՀ դրամով
	Միջնորդ բանկի հաշիվ	Ոչ պարտադիր դաշտ
	Միջնորդ բանկի SWIFT	Ոչ պարտադիր դաշտ
	Միջնորդ բանկի անվանում և հասցե	Ավտոմատ լրացվում է համակարգի կողմից «Լրացնել» հրահանգը սեղմելու միջոցով ըստ SWIFT դաշտի տվյալների, եթե LS Finance համակարգի բանկերի տեղեկատուի մեջ ներմուծված են այդ տվյալները
	Շահառուի բանկի Swift	
	Շահառուի բանկի անվանում և հասցե	Ավտոմատ լրացվում է համակարգի կողմից «Լրացնել» հրահանգը սեղմելու միջոցով ըստ SWIFT դաշտի տվյալների, եթե LS Finance համակարգի բանկերի տեղեկատուի մեջ ներմուծված են այդ տվյալները
	Շահառուի անուն	
	Շահառուի հաշվի համար	
	Վճարման նպատակը	Տեքստային դաշտ, 140 նիշի հնարավորություն արտասահմանյան փոխանցումների համար և 130 նիշի հնարավորություն ռուբլիով փոխանցումների համար
	TRF72	Եթե նպատակ դաշտը գերազանցում 140 (ռուբլիով փոխանցումների դեպքում՝ 130) նիշը, ապա շարունակությունը գրվում է այս դաշտում

		Դաշտը առկա չէ ՀՀ բանկեր և գանձապետական հաշիվներին փոխանցումների դեպքում
Ելքագրվող տվյալներ	Բոլոր մուտքագրված տվյալները արտացոլվում են LS Finance համակարգում: LS Finance համակարգից ելքագրվում են բոլոր տվյալները բացի «Փոխարժեք», «Վճարում ըստ քաղվածքի», «Վճարողի հաշիվ», «Հողված» դաշտերի արժեքներից:	
Վալիդացիա	Տեղեկատուների ստուգում Գումարի հսկում պայմանագրերի քաղվածքների հետ, նախահաշիվների հետ, հաստատված բյուջեի պլանի հետ, հաշվի մնացորդի հետ	


Իրավական ակտեր` ՀՀ կառավարության 15.06.2018թ. 706-Ն որոշում



Ստորաբաժանում՝	Պետական բյուջեի հաշվառման բաժին																
Անվանում	ԳԶ-ՊԲՑ– Ուղղակի վճարումների ձևակերպում																
Նպատակ	Դոնոր կազմակերպությունների կողմից մատակարարների ուղղակի կատարված վճարումների հաշվառում																
Տիրույթ	ՀՀ ֆինանսների նախարարություն, ԾԻԳ, ԲԳԿ																
Դերակատարներ	Պետական բյուջեի հաշվառման բաժին, պետական պարտքի վարչություն, LS Finance																
Ընթացք 1	<ol style="list-style-type: none"> Այն դեպքերում, երբ դոնոր կազմակերպությունը պայմանագրով սահմանված կարգով ուղղակի վճարում է իրականացվում մատակարարին (և ըստ հավաստագրի առկա է «ուղիղ վճարում պահուստ»), այդ գծով վճարումները LS Finance համակարգում ձևակերպվում են ՀՀ ֆինանսների նախարարության պետական բյուջեի հաշվառման բաժնի կողմից՝ լիազոր մարմնից ստացված տեղեկանքի հիման վրա: ԲԳԿ-ն կամ ՀՀ ՖՆ պետական պարտքի վարչությունը կազմում են տեղեկանքը և Mulberry փաստաթղթաշարժի համակարգի միջոցով ներկայացնում պետական բյուջեի հաշվառման բաժին: Պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը ուսումնասիրում է ստացված տեղեկանքը: Անճշտությունների բացակայության դեպքում ձևակերպում է ուղիղ վճարումը LS Finance համակարգում: Վճարումները ձևակերպվում են ԾԻԳ-ի անունով բացված առանձին հաշիվներով: Տեղեկանքում անճշտությունների և հարցերի առկայության դեպքում, դրանք ճշգրտվում են համապատասխան գերատեսչության կամ ՖՆ-ի այլ ստորաբաժանումների հետ, որից հետո տվյալները ձևակերպվում են LS Finance համակարգում: Տեղեկանքում սխալներ հայտնաբերելու դեպքում, այն վերադարձվում է ներկայացնողին՝ շտկման: 																
Մուտքագրվող տվյալներ	<p>ԳԶ-ՊԲՑ/Մ</p> <table border="1"> <thead> <tr> <th>Տվյալ</th> <th>Նկարագրություն</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>Ծրագրի անուն</td> <td>Դրամաշնորհային կամ վարկային ծրագրի անուն</td> </tr> <tr> <td>Ժամանակահատված /եռամսյակ/</td> <td>Հաշվետու ժամանակահատված</td> </tr> <tr> <td>Գործառնական դասակարգման բաժին, խումբ, դաս</td> <td>Տեղեկատու</td> </tr> <tr> <td>Հոդված</td> <td>Տեղեկատու, տնտեսագիտական դասակարգման հոդված</td> </tr> <tr> <td>Դոնոր</td> <td>Դոնոր կազմակերպության անուն</td> </tr> <tr> <td>Գումար /ՀՀ դրամ/</td> <td></td> </tr> <tr> <td>Գումար /արտարժույթ/</td> <td></td> </tr> </tbody> </table>	Տվյալ	Նկարագրություն	Ծրագրի անուն	Դրամաշնորհային կամ վարկային ծրագրի անուն	Ժամանակահատված /եռամսյակ/	Հաշվետու ժամանակահատված	Գործառնական դասակարգման բաժին, խումբ, դաս	Տեղեկատու	Հոդված	Տեղեկատու, տնտեսագիտական դասակարգման հոդված	Դոնոր	Դոնոր կազմակերպության անուն	Գումար /ՀՀ դրամ/		Գումար /արտարժույթ/	
Տվյալ	Նկարագրություն																
Ծրագրի անուն	Դրամաշնորհային կամ վարկային ծրագրի անուն																
Ժամանակահատված /եռամսյակ/	Հաշվետու ժամանակահատված																
Գործառնական դասակարգման բաժին, խումբ, դաս	Տեղեկատու																
Հոդված	Տեղեկատու, տնտեսագիտական դասակարգման հոդված																
Դոնոր	Դոնոր կազմակերպության անուն																
Գումար /ՀՀ դրամ/																	
Գումար /արտարժույթ/																	

	Արժույթ		
	Վճարման ամսաթիվ		
	Ճահառու		
	Լրացուցիչ տվյալներ	Տեքստային դաշտ	
Ելքագրվող տվյալներ	Կիրառելի չէ		
Վալիդացիա	Տեղեկատուների ստուգում Գումարի հսկում պայմանագրերի քաղվածքների հետ, նախահաշիվների հետ, հաստատված բյուջեի պլանի հետ		

Իրավական ակտեր` ՀՀ կառավարության 15.06.2018թ. 706-Ն որոշում



Ստորաբաժանում	Պետական բյուջեի հաշվառման բաժին
Անվանում	ԳՁ-ՊԲԳ–Եկամտային և ծախսային հաշիվների բացում
Նպատակ	Եկամուտների հավաքագրում և հաշվառում ըստ եկամտատեսակների, ծախսերի կատարում և դրանց հաշվառում ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգիչների
Տիրույթ	ՀՀ Ֆինանսների նախարարություն, ԲԳԿ, LS Finance համակարգ
Դերակատարներ	ՀՀ ՖՆ պետական բյուջեի հաշվառման բաժին, բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն, ՏՏ վարչություն
Ընթացք 1	<p><u>Եկամտային հաշիվների բացում</u></p> <ol style="list-style-type: none"> Եկամտային հաշիվների բացումը իրականացվում է բյուջետային եկամուտների հավաքագրման գործի կազմակերպման համար պատասխանատու ԲԳԿ հանդիսացող մարմնի դիմումի կամ ՀՀ կառավարության որոշման հիման վրա: Եկամտի հաշիվ բացելու վերաբերյալ ԲԳԿ-ից դիմում ստանալու դեպքում պետական բյուջեի հաշվառման բաժնի լիազորված աշխատակիցը ուսումնասիրում է ստացված դիմումը, որում պետք է առկա լինի տեղեկատվություն բացվող հաշվի գերատեսչական դասակարգման վերաբերյալ, ինչպես նաև առկա լինի հաշվի բացման հիմքը: Պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը ստացված դիմումը ուղարկում է կարծիքի ՀՀ ՖՆ բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն: Դիմումին ընթացք է տրվում միայն բյուջետային գործընթացի կազմակերպման վարչությունից դրական կարծիք ստանալու դեպքում: Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչությունը դրական եզրակացության դեպքում պետական բյուջեի հաշվառման բաժնին տրամադրում է տեղեկատվություն, թե եկամուտների դասակարգման որ կողով պետք է բացվի տվյալ հաշիվը: Եկամտի դասակարգման նոր կողմ բացելու անհրաժեշտության դեպքում բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության կողմից նախաձեռնվում է N 5 հրամանում համապատասխան փոփոխությունների կատարումը, որից հետո նոր ընթացք է տրվում հաշվի բացմանը: Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության կողմից բացասական կարծիք տալու դեպքում դիմումը մերժվում է: LS Finance համակարգում եկամուտների դասակարգումը կատարվում է տեղեկատվի միջոցով, որտեղ առկա են եկամուտների դասակարգման ինչպես նախկինում կիրառվող կոդերը (օր` խումբ`1, ենթախումբ`2),

այնպես էլ ՀՀ ֆինանսների նախարարի 09.01.2007թ. N 5 հրամանով սահմանված եկամուտների դասակարգման կողերը (օրինակ՝ 714111, ՀՀ մաքսային մարմինների կողմից գանձվող ԱԱՀ հԱ-ից):

5. Հաշիվը բացելու համար պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը մուտք է գործում LS Finance համակարգ և Տեղեկատու «Ներմուծում՝ Հաշիվներ» բաժնից «մուտք» հրահանգով բացվող պատուհանում մուտքագրում է նոր հաշվի բացման համար անհրաժեշտ տվյալները և պահպանում: Եկամտային հաշիվների բացման դեպքում հաշվի կարգը ընտրվում է «եկամտային»:
6. Եկամտային հաշիվների բացման դեպքում նշվում է Հաշվի տեսակը և կատարվում է նշում, թե ովքեր կարող են այն հաշվի վրա գումար փոխանցել (Ձեռնարկություն, անհատ ձեռնարկատեր, ֆիզիկական անձ): Օրինակ՝ միայն «անհատ ձեռնարկատեր» նշման դեպքում այդ հաշվին վճարում կարող են կատարել միայն Ա/Ձ-ները, մինչդեռ ֆիզ. անձանց և ձեռնարկությունների կողմից այդ հաշվին կատարված փոխանցումները կմերժվեն բանկի կողմից: Այս մասով տվյալները փոխանցվում են ՀՀ կենտրոնական բանկ և, որտեղից էլ՝ ՀՀ առևտրային բանկեր:
7. Հաշիվը բացելուց հետո այն ակտիվացվում է և ԲԳԿ-ն գրությամբ տեղեկացվում է հաշվի բացման վերաբերյալ: Եկամտային հաշիվների մասով ԲԳԿ-ի օգտվողների համար առկա է միայն հաշիվը դիտելու հնարավորություն (դիտել հաշվետվության ձևեր, ձևավորել քաղվածք, տեղեկանք ֆունկցիոնալ հնարավորությամբ):
8. Client Treasury համակարգում հաճախորդի նոր օգտվողների բացման և նրանց լիազորությունների տրամադրման գործընթացը նկարագրված է ԳՁ-ՊԲ1 գործընթացում:
9. Հաշվի փակումը իրականացվում է բյուջետային գործընթացի կազմակերպման վարչությունից դրական կարծիք ստանալուց հետո՝ փոխելով հաշվի կարգավիճակը և նշելով հաշվի փակման ամսաթիվը:
10. Եկամտային հաշիվները, ի տարբերություն ծախսային հաշիվների, չունեն սահմանափակումներ մուտքերի վրա, այսինքն հաշվի վրա կարող է մուտքագրվել պլանավորվածից ավելի շատ գումար:

Ծախսային հաշիվների բացում

14. Վերը նշված բոլոր փուլերը կատարելուց հետո պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը գործառնական օրը փակելու համար մուտք է գործում LS Finance համակարգի «Կառավարում» բաժինը, նշում է «գործառնական օր» ընտրանքը՝ վիճակը դաշտում նշվում է «Գրանցումն արգելված է», որից հետո ոչ մի օգտվող այլևս չի կարող համակարգում կատարել որևէ գրանցում: Այնուհետև, աշխատակիցը «Կառավարում՝ միացումներ» բաժնից «խզել միացումը» հրահանգով համակարգից ելքագրում է բոլոր ակտիվ օգտվողներին, այնուհետև «Կառավարում» բաժնից ընտրում է «Գործառնական օր՝ փակում» հրահանգը, որից հետո համակարգը կատարում է մի շարք ստուգումներ: Խնդիրների առկայության դեպքում համակարգը տալիս է սխալի հաղորդագրություն: «Կասեցված է» սյունակում մուտքագրելով «1» թիվը հնարավոր է կատարել օրվա փակում՝ անտեսելով սխալի հաղորդագրությունը, տվյալ քայլը համակարգի կողմից այդ դեպքում չի իրականացվում: Այնուհետև «կատարել փուլը» հրահանգով ընթացք է տրվում օրվա փակմանը: Բոլոր քայլերը աշխատացնելուց հետո ավտոմատ ակտիվանում է «Բացում» ընտրանքը և «կատարել փուլը» հրահանգը, որը սեղմելով համակարգը բերում է հաջորդ բացվող օրվա ամսաթիվը: Նախքան «Գործառնական օր՝ փակում» հրահանգը սեղմելը, աշխատակիցը ստուգում է բացվող օրվա ամսաթիվը ճիշտ է նշված, թե ոչ: Եթե անհրաժեշտ է փոխում է ամսաթիվը՝ նման դեպք կարող է լինել եթե ոչ աշխատանքային օրը «օրացույց» տեղեկատուի մեջ չի նշվել որպես ազատ օր, աշխատակիցը ուղղում է կատարում նաև օրացույց տեղեկատուի մեջ:
15. Գործառնական օրվա փակում կատարելուց հետո ավտոմատ բացվում է Client Treasury համակարգը, BankMail համակարգը բացվում է ՏՏ վարչության կողմից՝ պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակցի կողմից համապատասխան տեղեկատվություն ստանալուց հետո:

Մուտքագրվող
տվյալներ

ԳՁ-ՊԲ13/Մ/1
ԿԲ-ից ստացվող քաղվածք

Տվյալ	Նկարագրություն
Չափի ս/մ	Սկզբնական մնացորդ
Դեբետ	Դեբետ շրջանառություն
Կրեդիտ	Կրեդիտ շրջանառություն
Չափի վ/մ	Չափի վերջնական մնացորդ
Չափվետու օր	
Թղթակցող հաշիվ	

ԳՁ-ՊԲ13/Մ/2
Եկամտային հաշիվների գրոյացում (DOX), 3990

Տվյալ	Նկարագրություն
Չղման համար	Ավտոմատ գեներացվում է համակարգի կողմից
Գործարքի արժույթը	AMD
Վճարման շարժառիթ	Բացվող ցանկ, Ավտոմատ լրացվող դաշտ
Գործարքի ամսաթիվ	Փակվող գործառնական օրվա ամսաթիվ
Կրեդիտ հաշիվ	Ընդհանուր ռեսուրսների հաշիվ՝ 26000000013
Չափվների խում	Բացվող ցանկ, եկամտայինի դեպքում՝ DOX
Չափի	Ավտոմատ լրացվում է համակարգի կողմից՝ ներառելով այն բոլոր եկամտայինը հաշիվները, որոնց վրա առկա է մնացորդ
Գումար	Ավտոմատ լրացվում է համակարգի կողմից՝ եկամտային հաշիվների մնացորդները

Գործարքի գումարը	Վերը նշված հաշիվների գումարների հանրագումար
Նպատակ	Ավտոմատ լրացվող ` Զրոյացում

Ջողվածային գրոյացում, 2401

Վերը նշված նույն դաշտերը, հետևյալ տարբերությամբ`

Տվյալ	Նկարագրություն
Հաշիվների խումբ	Բացվող ցանկ, AC_DAT
Նպատակ	Ավտոմատ լրացվող ` հողվածային գրոյացում

Հայց. գրոյացում, 2404 /ծախսված գումարի և տրամադրված ֆինանսավորման գրոյացում/

Վերը նշված նույն դաշտերը, հետևյալ տարբերությամբ`

Տվյալ	Նկարագրություն
Հաշիվների խումբ	Բացվող ցանկ, AC_DAT
Նպատակ	Ավտոմատ լրացվող ` հայց. գրոյացում

ք. Երևանի համայնքի հաշիվների գրոյացում , 3990


Վերը նշված նույն դաշտերը, հետևյալ տարբերությամբ`

Տվյալ	Նկարագրություն
Կրեդիտ հաշիվ	900006500012` վարչական բյուջե 900006500020` Ֆոնդային բյուջե
Հաշիվների խումբ	Բացվող ցանկ, QAGH1, QAGH2
Նպատակ	Զրոյացում

Գործառնական օրվա փակում

Տվյալ	Նկարագրություն
Գործառնական օր	Ընթացիկ օրվա ամսաթիվ
Չափվելի ամսաթիվ	Փակվող գործառնական օրվա ամսաթիվ
BANKMAIL-ի ամսաթիվ	Ընթացիկ օրվա ամսաթիվ
Վիճակ	Բացվող ցանկ՝ «Գրանցումն արգելված է»
Արտաքին գործառն. օրը	Ընթացիկ օրվա ամսաթիվ
Չաջորդ գործառն. օրը	Չաջորդ աշխատանքային օրվա ամսաթիվ

Ելքագրվող տվյալներ	-
Վալիդացիա	Մնացորդների ստուգում, տեղեկատուների ստուգում



Ստորաբաժանում	Պետական բյուջեի հաշվառման բաժին
Անվանում	ԳԶ-ՊԲ14– Գումարների արգելադրում, արգելադրված գումարների փոխանցում
Նպատակ	Արգելադրված գումարների փոխանցում
Տիրույթ	ՀՀ Ֆինանսների նախարարություն, ՊԵԿ, ԴԱԿՀ
Դերակատարներ	ՀՀ ՖՆ պետական բյուջեի հաշվառման բաժին, իրավաբանական վարչություն, LS Finance
Ընթացք 1	<p>Հաշիվների արգելադրում</p> <ol style="list-style-type: none"> 1. Ֆինանսների նախարարությունը հաշիվների վրա արգելանք դնելու գործընթացը սկսում է ՊԵԿ-ից կամ ԴԱԿՀ-ից ստացված գրության հիման վրա, որին կից ներկայացվում է «պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» որոշումը և կատարողական թերթի պատճեն: 2. Պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը ուսումնասիրում է ստացված գրությունը և կից նյութերը: Վիճելի հարցերի առկայության դեպքում աշխատակիցը գրությունը և կից նյութերը ուղարկում է ՖՆ իրավաբանական վարչություն և գործին ընթացք է տրվում իրավաբանական վարչությունից դիրքորոշում ստանալուց հետո: Իրավաբանական վարչության դիրքորոշման հիման վրա պետական բյուջեի հաշվառման բաժինը գրությանը տալիս է ընթացք կամ գրությունը վերահասցեագրվում է այլ պետական մարմին: 3. Եթե «պարտապանը» պետական մարմին է, ապա պետական բյուջեի հաշվառման բաժինը ՊԵԿ-ի/ԴԱԿՀ-ի գրությունը և կից նյութերը վերահասցեագրում է տվյալ պետական մարմին ի կատարում: 4. Եթե պարտապանը համայնք է կամ ՊՈԱԿ, ապա հաշվի վրա արգելանք դնելու գործընթացը իրականացնում է պետական բյուջեի հաշվառման բաժինը: 5. Բաժնի աշխատակիցը պարտապանի հաշվի վրա արգելանք դնելու համար մուտք է գործում LS Finance համակարգի՝ Խնդիր՝ Հաշիվներ բաժին, ընտրում է տվյալ պարտապանի հաշիվը, այնուհետև՝ բացվող պատուհանում «Կարգավիճակ» դաշտի բացվող ցանկից Նշում է «արգելված է դեբետը» ընտրանքը, եթե անհրաժեշտ է ամբողջությամբ արգելափակել տվյալ հաշվից որևէ գումար ելքագրելու հնարավորությունը: Եթե անհրաժեշտ է պարտապանի հաշվի վրա դնել մասնակի արգելանք, ապա դա կատարվում է 500 (պահուստի փոփոխում) գործարքով՝ հաշվի վրա սառեցնելով համապատասխան չափով գումար: Գումարի ապաստանեցումը կատարվում է նույն գործարքով՝ պակասեցնելով անհրաժեշտ գումարը (- գումարը):

Հաշիվներից գումարի բռնագանձում

1. Ֆինանսների նախարարությունը հաշիվներից գումար բռնագանձելու գործընթացը սկսում է ԴԱՅԿ-ից ստացված գրության հիման վրա, որին կից ներկայացվում է «պարտապանի դրամական միջոցների վրա բռնագանձում տարածելու մասին» որոշումը և կատարողական թերթի պատճեն:
2. Պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը ուսումնասիրում է ստացված գրությունը և կից նյութերը: Վիճելի հարցերի առկայության դեպքում աշխատակիցը գրությունը և կից նյութերը ուղարկում է ՖՆ իրավաբանական վարչություն և գործին ընթացք է տրվում իրավաբանական վարչությունից դիրքորոշում ստանալուց հետո: Իրավաբանական վարչության դիրքորոշման հիման վրա պետական բյուջեի հաշվառման բաժնի գրությանը տալիս է ընթացք, կամ գրությունը վերահասցեագրվում է այլ պետական մարմին:
3. Եթե բռնագանձումը պետք է կիրառվի Ֆինանսների նախարարության նկատմամբ, ապա գրությունը վերահասցեագրվում է ՖՆ ծրագրերի իրականացման վարչություն:
4. Եթե իրավաբանական վարչությունը տալիս է դիրքորոշում, որ պարտավորությունը պետք է փակվի մուրհակով, ապա գրությունը վերահասցեագրվում է ՖՆ պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչություն:
5. Եթե «պարտապանը» պետական մարմին է, ապա ԴԱՅԿ-ի գրությունը և կից նյութերը վերահասցեագրվում են տվյալ պետական մարմին՝ վերջինիս կողմից հաշվառվելու և վերջինիս միջոցների հաշվին ծախսի կատարումն ապահովելու նպատակով (խնայողությունների հաշվին ծախսի կատարում, անհրաժեշտության դեպքում՝ բյուջեի վերահաշխում, կամ պահուստաֆոնդից գումարի հատկացում): Պետական բյուջեի հաշվառման բաժնի չի կարող գումարի բռնագանձում իրականացնել պետական մարմինների հաշիվներից, քանի որ պետական մարմինների հաշիվները ծախսային հաշիվներ են:
6. Եթե պարտապանը համայնք է, ապա պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը տվյալ հաշվից գումարի բռնագանձում իրականացնելու համար.
 - 6.1. Ստուգում է արդյոք տվյալ համայնքը ունի համապատասխան հաշվեկշռով եկամտային հաշիվ: Եկամտային հաշիվ չունենալու դեպքում դիմում է համայնքներ և պետ. հիմն. բյուջեների հաշվառման բաժնի՝ տվյալ համայնքի համար 1100 հաշվեկշռով (վարչական բյուջեից մուտքեր ի կատարումն դատարանի որոշումների) եկամտային հաշիվ բացելու համար: Տվյալ դեպքում եկամտային հաշիվը բացվում է առանց համայնքի դիմումի՝ ԴԱՅԿ-ի որոշման հիման վրա:
 - 6.2. Ստուգում է համայնքի վարչական/ֆոնդային հաշվի մնացորդը. եթե հաշվի մնացորդը բավարար է պարտավորությունը ամբողջությամբ կատարելու համար, ապա 707 ներքին դեբետային

գործարքով պարտապանի վարչական (կամ ֆոնդային) հաշվից տեղափոխում է համապատասխան չափով գումար համայնքի եկամտային հաշվին:

- 6.3. Եկամտային հաշվին գումարը մուտքագրվելուց հետո 213 գործարքով կատարում է բռնագանձման ենթակա գումարի փոխանցում ԴԱՅԿ-ի գրության մեջ նշված հաշվեհամարին:
- 6.4. Եթե հաշվի մնացորդը բավարար է պարտավորությունը միայն մասնակի կատարելու համար, ապա աշխատակիցը 707 գործարքով տեղափոխում է առկա գումարը վարչական/ֆոնդային հաշվից պարտապանի եկամտային հաշվին: Այնուհետև, արգելանք է դնում պարտապանի ծախսային հաշվի վրա՝ արգելելով դեբետը: Եկամտային հաշվին գումարը մուտքագրվելուց հետո աշխատակիցը 213 գործարքով կատարում է մասնակի վճարում ԴԱՅԿ-ին:
- 6.5. Այնուհետև, աշխատակիցը իրականացնում է հաշվի մնացորդի մշտադիտարկում՝ պարտավորության մյուս մասը կատարելու համար: Չենց հաշվի մնացորդը բավարար է պարտավորության մյուս մասի կատարման համար, աշխատակիցը հանում է հաշվից արգելանքը և իրականացնում է 6.3 կետում նշված գործողությունները: Այս շրջափուլը կատարվում է մինչև պարտավորության ամբողջական կատարումը:
- 6.6. Եթե պարտապանի հաշվին առկա չէ որևէ մնացորդ, ապա աշխատակիցը արգելանք է դնում հաշվի վրա և մշտադիտարկում է հաշվի մնացորդը: Հաշվին գումարների մուտքագրմանը զուգընթաց մնացորդից կախված աշխատակիցը կատարում է մասնակի կամ ամբողջական բռնագանձում վերը նշված կարգով:

7. Եթե պարտապանը ՊՈԱԿ է, ապա պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը տվյալ հաշվից գումարի բռնագանձում իրականացնելու համար ստուգում է ՊՈԱԿ-ի հաշվի (ՊՈԱԿ-ը ունի միայն մեկ հաշիվ, որը և՛ եկամտային է, և՛ ծախսային) մնացորդը.

- 7.1. Եթե հաշվի մնացորդը բավարար է պարտավորությունը ամբողջությամբ կատարելու համար, ապա 213 գործարքով կատարում է բռնագանձման ենթակա գումարի փոխանցում ԴԱՅԿ-ի գրության մեջ նշված հաշվեհամարին:
- 7.2. Եթե հաշվի գումարը բավարար է պարտավորությունը մասնակի կատարելու համար, ապա 213 գործարքով կատարում է բռնագանձման ենթակա գումարի մասնակի փոխանցում ԴԱՅԿ-ի գրության մեջ նշված հաշվեհամարին և հաշվի վրա դրվում է արգելանք՝ վերը նշված կարգով:
- 7.3. Այնուհետև, աշխատակիցը իրականացնում է հաշվի մնացորդի մշտադիտարկում՝ պարտավորության մյուս մասը կատարելու համար: Չենց հաշվի մնացորդը բավարար է պարտավորության մյուս մասի կատարման համար, աշխատակիցը հանում է հաշվից արգելանքը

և իրականացնում է 7.2 կետում նշված գործողությունները: Այս շրջափուլը կատարվում է մինչև պարտավորության ամբողջական կատարումը:

8. ԴԱՅԿ-ի հաշվին գումարը փոխանցելուց հետո պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը այդ մասին գրությամբ տեղեկացնում է ԴԱՅԿ-ին: Մասնակի վճարում կատարելու դեպքում ԴԱՅԿ-ն գրությամբ տեղեկացվում է, որ պարտավորությունը կատարվել է մասնակի և մնացորդային գումարը կվճարվի հետագայում:

Բռնագանձված գումարների վերադարձ

1. Եթե ֆիզիկական/իրավաբանական անձից ի օգուտ ԴԱՅԿ-ի բռնագանձվել է գումար, որը դատարանի որոշմամբ ենթակա է փոխհատուցման/վերադարձման տվյալ ֆիզիկական/իրավաբանական անձին, ապա տվյալ իրավաբանական/ֆիզիկական անձին գումարի փոխհատուցումը կատարելու համար ԴԱՅԿ-ն գրությամբ դիմում է Ֆինանսների նախարարություն, որպեսզի տվյալ գումարը ԴԱՅԿ-ի եկամտային հաշվից տեղափոխվի ԴԱՅԿ-ի դեպոզիտ հաշվին:
2. Պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը ուսումնասիրում է ստացված դիմումը և կից փաստաթղթերը: Ստուգվում է նախկինում նույն կատարողական վարույթի շրջանակներում ԴԱՅԿ-ին տվյալ գումարի վերադարձված լինելու փաստը: Եթե տվյալ կատարողական վարույթի շրջանակներում այդ գումարը արդեն փոխանցվել է ԴԱՅԿ-ի դեպոզիտ հաշվին, ապա ԴԱՅԿ-ն գրությամբ տեղեկացվում է այդ մասին: Հարցերի առկայության դեպքում աշխատակիցը կապ է հաստատում ԴԱՅԿ-ի հետ՝ պարզաբանումներ կատարելու համար: Եթե առկա են սխալներ կամ անհամապատասխանություններ, ապա պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը գրությամբ տեղեկացնում է ԴԱՅԿ-ին առկա անհամապատասխանությունների մասին՝ առաջարկելով ներկայացնել ճշտված գրություն կից փաստաթղթերով:
3. Եթե ԴԱՅԿ-ի գրության և կից փաստաթղթերի հետ կապված առկա չէ որևէ հարց, պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը ընթացք է տալիս գրությանը:
4. Եթե ԴԱՅԿ-ի եկամտային հաշվի վրա առկա չէ բավարար մնացորդ, ապա աշխատակիցը ներքին 707 դեբետային գործարքով ընդհանուր ռեսուրսների հաշվից տեղափոխում է անհրաժեշտ գումարը:
5. Աշխատակիցը 213 Արտաբյուջ. վերաբաշխում գործարքով իրականացնում է գումարի փոխանցումը ԴԱՅԿ-ի դեպոզիտ հաշվին: «Գործարքի համար» դաշտում նշվում է տվյալ գումարի պետական բյուջեի

հաշվին մուտքագրման ժամանակ համակարգի կողմից գեներացված հղման համարը: Համակարգը հղման համարով իրականացնում է կրկնակի ստուգում արդյոք տվյալ գումարի վերադարձ եղել է, թե ոչ:

6. Բոլոր դաշտերը լրացնելուց հետո, գործարքը պահպանվում է կատարող աշխատակցի կողմից և գումարը մուտքագրվում է ԴԱՀԿ-ի դեպոզիտ հաշվին:

Մուտքագրվող տվյալներ

ԳՁ-ՊԲ14/Մ/1

**Ներքին դեբետային գործարք /707 գործարք/
Վարչական հաշվից գումարի տեղափոխում եկամտային հաշվին**

Տվյալ	Նկարագրություն
Հղման համար	ԳԳՕ համակարգի կողմից գեներացվող համար
Գործարքի արժույթ	ՀՀ դրամ
Գործարքի համար	Հերթական համար
Վճարման շարժառիթ	ավտոմատ լրացվող դաշտ ըստ վճարման տիպի
Գործարքի ամսաթիվ	Տվյալ օրվա ամսաթիվ
Դեբետ հաշիվ	Վարչական կամ ֆոնդային հաշվի համար
Կրեդիտ հաշիվ	Եկամտային հաշվի համար /1100 հաշվեկշռով/
Գործարքի գումար	
Հոդված, գումար, անվանում	
Հարկատուի կոդ	
Վճարման նպատակ	

Արտաբյուջ. վերաբաշխում /213 գործարք/


Տվյալ	Նկարագրություն
Յղման համար	ԳԳՕ համակարգի կողմից գեներացվող համար
Գործարքի արժույթ	ՀՀ դրամ
Գործարքի համար	Հերթական համար
Վճարման շարժանիթ	ավտոմատ լրացվող դաշտ ըստ վճարման տիպի
Գործարքի ամսաթիվ	Տվյալ օրվա ամսաթիվ
Դեբետ հաշիվ	Եկամտային հաշիվ
Վճարողի բանկը	Գանձապետարան, կոդ՝ AM900...
Վճարողի հաշիվը	Եկամտային հաշիվ
Վճարող	Համայնք կամ ՊՈԱԿ
Ստացողի հաշիվ	ԴԱՀԿ-ի դեպոզիտ հաշիվ
Ստացողի բանկ	ԴԱՀԿ
Ստացող	
Կրեդիտի հաշիվ	ԴԱԿՀ-ի դեպոզիտ հաշիվ
Ստաց. հաճախորդի տիպ	Բացվող ցանկ՝ իրավաբանական անձ, ֆիզիկական անձ
Գործարքի գումարը	Փոխանցվող գումար
Հոդված, գումար, անվանում	0011՝ ԴԱՀԿ-ի եկամտային հոդված
Հարկատուի կոդ	
Վճարման նպատակ	Լրացվող տեքստային դաշտ

500 Պահուստի փոփոխում


		Տվյալ	Նկարագրություն
		Յղման համար	
		Գործարքի համար	
		Վճարման շարժառիթ	
		Գործարքի ամսաթիվ	
		Յաջիվ	Այն հաշիվը, որի նկատմամբ կիրառվում է սահմանափակումը
		Սահմանի տեսակը	2
		Գործարքի գումարը	Սառեցվող կամ ապասառեցվող գումարի չափը
		Վճարման նպատակը	ՊԵԿ-ի կամ ԴԱՅԿ-ի գրության համար
Ելքագրվող տվյալներ	ԳՁ-ՊԲ14/Ե/1	Տվյալ	Նկարագրություն
		Յղման համար	ԳԳՕ համակարգի կողմից գեներացվող համար
		Գործարքի արժույթ	ՀՀ դրամ
		Գործարքի համար	Հերթական համար
		Վճարման շարժառիթ	ավտոմատ լրացվող դաշտ ըստ վճարման տիպի
		Գործարքի ամսաթիվ	Տվյալ օրվա ամսաթիվ
		Դեբետ հաշիվ	
		Վճարողի բանկը	Գանձապետարան, կոդ` AM900..
		Վճարողի հաշիվը	Եկամտային հաշիվ
		Վճարող	Համայնք կամ ՊՈԱԿ

	Ստացողի հաշիվ	ԴԱՅԿ-ի հաշիվ
	Ստացողի բանկ	ԴԱՅԿ
	Ստացող	
	Ստաց. հաճախորդի տիպ	Բացվող ցանկ՝ իրավաբանական անձ, ֆիզիկական անձ
	Գործարքի գումարը	Փոխանցվող գումար
	Չարկատուի կոդ	
	Վճարման նպատակ	Լրացվող տեքստային դաշտ
Վալիդացիա	Մնացորդների ստուգում, տեղեկատուների ստուգում	


Չափվների արգելադրում



Հաշիվներից գումարի բռնագանձում



Բռնագանձված գումարների վերադարձ



Ստորաբաժանում`	Պետական բյուջեի հաշվառման բաժին
Անվանում	ԳՁ-ՊԲ15– Ամփոփ բյուջետային փոխանցագրերի ձևակերպում
Նպատակ	ԲԳԿ-ների և ԲՍԿ-ների ֆինանսավորման կազմակերպում
Տիրույթ	ՀՀ ֆինանսների նախարարություն, ԲԳԿ, ԲՍԿ
Դերակատարներ	ՀՀ ՖՆ պետական բյուջեի հաշվառման բաժին, ծախսերի ֆինանսավորման վարչություն, LS Finance
Ընթացք 1	<p>ԲԳԿ-ների և ԲՍԿ-ների ֆինանսավորումը կազմակերպվում է ՀՀ կառավարության 15.06.2018թ. 706-Ն որոշմամբ սահմանված կարգով, ինչպես նաև Գանձապետական համակարգի մասին օրենքով: Ֆինանսավորումները հատկացվում են ընդհանուր ռեսուրսների հաշվից` 26000000013:</p> <p>Բյուջետային փոխանցագրերի ձևակերպում` հատուկ դեպքեր /Պաշտպանության նախարարություն/Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն/</p> <ol style="list-style-type: none"> 1. Պետական բյուջեից ֆինանսավորում ստանալու համար ՊՆ-ն նախօրոք Client Treasury համակարգով իր հաշվի վրա ձևավորում է վճարման հայտ, մինչդեռ ԲՍԿ-ն ձևավորում է պարտավորությունները, որի բացակայությունը որևէ կերպ չի ազդում ֆինանսավորումը հատկացնելու վրա: 2. Ծախսերի ֆինանսավորման վարչությունը ունի հասանելիություն ԳԳՈ համակարգին ներկայացված հայտերի մասով և պատասխանատու է հայտերի ուսումնասիրության և պետական բյուջեի հաշվառման բաժնին ֆինանսավորման պատվեր տալու համար: 3. Ծախսերի ֆինանսավորման վարչությունը պետական բյուջեի հաշվառման բաժնին Mulberry համակարգով .xls ձևաչափով ներկայացնում է ՊՆ-ի ֆինանսավորման տվյալները` գերատեսչության անունը, կոդը, գործառնական դասակարգման բաժին, խումբ, դաս, ծրագիր, տնտեսագիտական դասակարգման հոդված, փոխանցման ենթակա գումար և հանրագումարը: 4. Պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը .xls ձևաչափով ֆայլը ստանալուց հետո մուտք է գործում LS Finance համակարգ և «Խնդիր` հայտեր` փաստաթղթերի ցուցակ` ներմուծում» քայլերի հաջորդականությամբ ձևավորում է բյուջետային փոխանցագիր` 2502 գործարք: 5. Բացված պատուհանում լրացվում են ծախսերի ֆինանսավորման վարչությունից ստացված .xls ձևաչափով ֆայլի տվյալները, մասնավորապես` լրացնելով խումբ, ենթախումբ, կարգ, ծրագիր, նախարարություն դաշտերը` համակարգը բեռնում է տվյալ ԲԳԿ-ի կողմից Client Treasury համակարգում ձևավորած վճարման հայտի տվյալները (տնտեսագիտական դասակարգման հոդված, հաշիվ, գումար,

բաժին, խումբ, դաս, ծրագիր): Աշխատակիցը ստուգում է համակարգի կողմից բեռնված տվյալները .xls ֆայլի տվյալների հետ: Եթե առկա են անհամապատասխանություններ, ապա աշխատակիցը կատարում է ճշգրտումներ ծախսերի ֆինանսավորման վարչության հետ, որը սխալների առկայության դեպքում ուղարկում է ճշգրտված .xls ֆայլ: Եթե ամեն ինչ ճշգրիտ է, ապա պահպանում է տվյալները, որից հետո 2502 գործարքը հայտնվում է հսկման հերթում:

6. Այնուհետև, աշխատակիցը LS Finance համակարգից արտահանում է բյուջետային փոխանցագիրը .doc ֆայլի տեսքով, փոխում է ֆայլի տառատեսակը և Mulberry համակարգով ուղարկում է ծախսերի ֆինանսավորման վարչություն՝ ստուգման և հաստատման:
7. Եթե ծախսերի ֆինանսավորման վարչությունը Mulberry համակարգով հաստատում է բյուջետային փոխանցագրի ճշտությունը, ապա համապատասխան լիազորություն ունեցող աշխատակիցը հսկման հերթից հաստատում է 2502 գործարքը, ընդ որում հաստատելուց առաջ ձեռքով մուտքագրում է ընդհանուր փոխանցագրի գումարը: Գործարքը հաստատելուց հետո ՊՆ-ն իր պատվերում նշված ծախսային հաշիվների վրա ստանում է ֆինանսավորում:
8. Բյուջետային փոխանցագրով գումարը ստանալուց հետո, ՊՆ-ի լիազորված օգտատերը մուտք է գործում Client Treasury համակարգ և ծախս գործարքով իր համապատասխան հաշիվներից գումարը տեղափոխում է ԲՍԿ-ների հաշիվներին:

ԲԳԿ-ների ամենօրյա ռեժիմով ֆինանսավորում

1. Ֆինանսավորում ստանալու համար ԲԳԿ-ները նախօրոք՝ մեկ օր առաջ, Client Treasury համակարգով ձևավորում են վճարման հայտ, մինչդեռ ԲՍԿ-ները ձևավորում են պարտավորություններ:
2. Գործառնական օրը փակելիս համակարգը ավտոմատ ձևավորում է բազա, թե որքան պարտավորություններ են ձևավորվել ԲՍԿ-ների կողմից և որքան վճարման հայտեր են ձևավորվել ԲԳԿ-ների կողմից:
3. Պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը միջգանձապետական փոխանցագիրը և ամփոփ բյուջետային փոխանցագիրը կազմում է համակարգում ձևավորված բազայի տվյալների հիման վրա:
4. Աշխատակիցը սկզբից ձևավորում է միջգանձապետական փոխանցագիր: Աշխատակիցը մուտք է գործում LS Finance համակարգ՝ ինդիք՝ SԳԲ պարտավորություններ բաժին և կատարվում է նախահաշվի ճշգրտում:
5. Այնուհետև, փաստաթղթի ներմուծում հրահանգի միջոցով ստեղծում է 2600 պարտավորությունների պատվեր, ընտրում է «նշել ամբողջը» հրահանգը, որի հիման վրա ավտոմատ լրացվում են ԲՍԿ-ների

կողմից համակարգ մուտքագրված պարտավորությունների գումարները, այսինքն՝ ԲԳԿ-ից ԲՍԿ-ի համապատասխան հաշիվներին փոխանցման ենթակա գումարները: Գործարքը պահպանելուց հետո այն ստանում է «հղման համար» և հայտնվում է հսկման հերթում: Այս գործարքով ապահովվում է ԲԳԿ-ների հաշիվներից ԲՍԿ-ների հաշիվներին ֆինանսավորման ավտոմատ հատկացումը:

6. Այնուհետև աշխատակիցը «Խնդիր՝ հայտեր՝ փաստաթղթերի ցուցակ՝ ներմուծում» քայլերի հաջորդականությամբ ձևավորում է ամփոփ բյուջետային փոխանցագիր՝ 2500 պատվեր գործարքով: «Կապված համարը» դաշտում լրացվում է 5-րդ կետի համաձայն ձևավորված միջզանձապետական փոխանցագրի հղման համարը: Այս գործարքով ապահովվում է ընդհանուր ռեսուրսների հաշվից ԲԳԿ-ների հաշիվներին ֆինանսավորման ավտոմատ հատկացումը:
7. Պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակցի կողմից պահպանել հրահանգը սեղմելուց հետո ամփոփ բյուջետային փոխանցագիրը հայտնվում է հսկման հերթում:
8. Այնուհետև, աշխատակիցը LS Finance համակարգից արտահանում է բյուջետային փոխանցագիրը .doc ֆայլի տեսքով, փոխում է ֆայլի տառատեսակը և Mulberry համակարգով ուղարկում է ծախսերի ֆինանսավորման վարչություն՝ ստուգման և հաստատման:
9. Ծախսերի ֆինանսավորման վարչությունը ստուգում է ստացված բյուջետային փոխանցագիրը և Mulberry համակարգով տեղեկացնում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Պետական բյուջեի հաշվառման բաժնի համապատասխան լիազորություն ունեցող աշխատակիցը փոփոխություն կատարելու համար հսկման հերթից հեռացնում է 2500 գործարքը, իսկ 2600 գործարքը հսկման հերթից ուղարկում է խմբագրման: Կատարող աշխատակիցը 2600 գործարքում կատարում է անհրաժեշտ ուղղումները, եթե անհրաժեշտ է հեռացնել որևէ ԲՍԿ-ի որևէ հաշվի ֆինանսավորում, ապա համապատասխան տողի դիմաց դրվում է 0: Այնուհետև, աշխատակիցը պահպանում է գործարքը և նորից ձևավորում է 2500 գործարքը՝ կրկնելով 8-րդ կետում նշված գործողությունները մինչև որ ծախսերի ֆինանսավորման վարչությունը հաստատի բյուջետային փոխանցագրի տվյալների ճշտությունը:
10. Եթե ծախսերի ֆինանսավորման վարչությունը հաստատում է, որ ամեն ինչ ճշգրիտ է, ապա պետական բյուջեի հաշվառման բաժնի համապատասխան լիազորություն ունեցող աշխատակիցը հսկման հերթից նախ հաստատում է 2500 գործարքը, այնուհետև՝ 2600 գործարքը: Սխալ հաջորդականությամբ հաստատում կատարելու դեպքում համակարգը տալիս է սխալի հաղորդագրություն: Չամակարգը նաև տալիս է սխալի հաջորդագրություն, եթե հայտի գումարը գերազանցում է սահմանված բյուջեի պլանը:
11. Այսպիսով, ընդհանուր ռեսուրսների հաշվից գումարը փոխանցվում է ԲԳԿ-ների 27 հաշվեկշռով բացված հաշիվներին, այնուհետև, ԲԳԿ-ի հաշիվներից՝ համապատասխան ԲՍԿ-ների հաշիվներին, որից վերջիններս կատարում են նախատեսված ծախսերը:

Ֆինանսավորման տրամադրում վարկի տեսքով

1. Որոշ դեպքերում (օրինակ՝ վարկերի տրամադրման դեպքում) պետական բյուջեի հաշվառման բաժինը ֆինանսավորումը կատարում է ծախսերի ֆինանսավորման, պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման կամ պետական պարտքի կառավարման վարչությունից ստացված ստորագրված թղթային բյուջետային փոխանցագրի և հանձնարարագրի հիման վրա: Նման դեպքում ֆինանսավորումը կատարվում է 401 բաշխում գործարքի հիման վրա:
2. Ընդհանուր ռեսուրսների հաշվից գումարը տեղափոխվում է 900001037648 հաշվի վրա (բյուջետային վարկի տրամադրում ԼՂՀ-ին), որից հետո տվյալ հաշվից ձևավորվում է Էլեկտրոնային փոխանցում 201 գործարքով:
3. Փոխանցումը հայտնվում է հսկման հերթում և ենթակա է հաստատման համապատասխան լիազորություն ունեցող աշխատակցի կողմից: Գործարքը ստուգվում է և սխալների բացակայության դեպքում հաստատվում, որից հետո փոխանցումը կատարվում է Bank Mail-ով: Եթե առկա է սխալ/անհամապատասխանություն, վերջնական հաստատողը հսկման հերթից կարող է հեռացնել կամ հետ վերադարձնել գործարքը կատարողին՝ ուղղման:
4. Անհրաժեշտության դեպքում 401 գործարքից հետո գումարը կարող է ԲԳԿ-ի հաշվից փոխանցվել արտասահմանյան բանկ՝ 315 (usd/eur) / 316 (rub) գործարքներով՝ ըստ հանուր սահմանված կարգով:
5. Անհրաժեշտության դեպքում 401 գործարքից հետո ԲԳԿ-ի հաշվից գումարը կարող է փոխանցվել պետական բյուջեի եկամտային հաշվին կամ որևէ միջանկյալ գանձապետական հաշվին 402 ծախս կամ 701 ներքին կրեդիտային գործարքով:

Մուտքագրվող տվյալներ

ԳՁ-ՊԲ15/Մ/1

Ծախսերի ֆինանսավորման վարչությունից ստացվող .xls

Տվյալ	Նկարագրություն
ԲԳԿ-ի անունը	Տեղեկատու
Գերատեսչական կոդը	Տեղեկատու

Գործառնական դասակարգման բաժին, խումբ, դաս, ծրագիր	Տեղեկատու
Տնտեսագիտական դասակարգման հոդված	Տեղեկատու
Գումար	Դրամ ըստ ծրագրերի
Ճանաչություն	Տեքստային դաշտ /օր.՝ հավաստագրով/
Ամսաթիվ	Ընթացիկ օրվա ամսաթիվ

Վճարման պատվեր՝ 2502, ՊՆ
Պատվեր՝ 2500՝ այլ ԲԳԿ-ներ

Տվյալ	Նկարագրություն
Հղման համար	Ավտոմատ գեներացվող դաշտ համակարգի կողմից
Կապված համար	2502-ի դեպքում չի լրացվում, 2500-ի դեպքում գրվում է միջգանձապետական փոխանցագրի հղման համարը, որի միջոցով ապահովվում է գումարի ավտոմատ փոխանցումը ԲԳԿ-ից ԲՍԿ-ին
Գործարքի համար	
Վճարման շարժառիթ	Բացվող ցանկ, ավտոմատ ընտրություն
Դերետ հաշիվ	Ընդհանուր ռեսուրսների հաշից՝ 26000000013
Գործարքի ամսաթիվ	
Խումբ	Տեղեկատու, լրացվող դաշտ,
Ենթախումբ	Տեղեկատու, լրացվող դաշտ,
Կարգ	Տեղեկատու, լրացվող դաշտ,

Ծրագիր	Տեղեկատու, լրացվող դաշտ
Նախարարություն	Տեղեկատու, լրացվող դաշտ
Քաշիվ	Չի լրացվում
Յոդված	Չի լրացվում
Տոկոս	100
Ընդամենը	Յանրագումար, ավտոմատ հաշվարկվող դաշտ
Վճարման նպատակ	Ֆինանսավորում, ավտոմատ լրացվող դաշտ
Յոդվածներ` Քաշիվ, տևտ. Յոդված, Յին. գումար, գումար	Դաշտը ավտոմատ լրացվում է փոխանցագիրը ձևակերպելիս` ԲԳԿ-ի պատվերի հիման վրա

401 Բաշխում, վարկի ֆինանսավորում

Տվյալ	Նկարագրություն
Յուման համար	Ավտոմատ գներացվող դաշտ համակարգի կողմից
Գործարքի արժույթ	ՅՅ դրամ, ավտոմատ լրացվող
Գործարքի համար	Յերթական համար
Վճարման շարժառիթ	Բացվող ցանկ, ավտոմատ լրացվող
Գործարքի ամսաթիվ	Ընթացիկ օր
Դեբետ հաշիվ	26000000013
Կրեդիտ հաշիվ	900001037648` Բյուջետային վարկի տրամադրում ԼՂ կամ ԲԳԿ-ի հաշիվ
Գործարքի գումար	

Հողված՝	Տնտեսագիտական դասակարգման հողված՝ 6222
Հարկատուի կոդ	-
Վճարման նպատակ	Բյուջետային վարկի տրամադրում, լրացվող

Էլեկտրոնային փոխանցում՝ 201 100

Տվյալ	Նկարագրություն
Հղման համար	ԳԳՕ համակարգի կողմից փոխանցման ժամանակ ավտոմատ ձևավորվող համար
Գործարքի արժույթ	Դրամ
Գործարքի համար	Հերթական համար
Վճարման շարժանիթ	ավտոմատ լրացվող դաշտ ըստ վճարման տիպի
Գործարքի ամսաթիվ	Տվյալ օրվա ամսաթիվ
Դեբետ հաշիվ	900001037648 կամ այլ ԲԳԿ-ի հաշիվ
Խումբ, ենթախումբ, դաս, ծրագրի, նախարարություն	Չի լրացվում
Վճարողի բանկը	Գանձապետարան, կոդ՝ AM90000
Վճարողի հաշիվ	900001037648
Վճարող	Ավտոմատ լրացվող, \$Ն կամ ԲԳԿ
Ստացողի հաշիվ	
Ստացողի բանկ	
Ստացող	

Կրեդիտի հաշիվ	զանձապետական միջանկյալ հաշիվ՝ 900001111112, պետական բյուջեի գծով տարանցիկ հաշիվ, որից BankMail-ով կատարվում է խմբային 202 ֆորմատի փոխանցում
Ստաց. հաճախորդի տիպ	Բացվող ցանկ՝ իրավաբանական անձ, ֆիզիկական անձ
Գործարքի գումար	
Յոդված/Գումար/Անվանում	6222՝ գործառնական դաս. Յոդված, գումար՝ փոխանցվող գումար, անվանում՝ վարկեր այլ պետությունների կառ.
Վճարման նպատակ	Լրացվող տեքստային դաշտ

Միջզանձապետական փոխանցագիր 2600 պարտավոր. պատվեր

Տվյալ	Նկարագրություն
Յոդման համար	Ավտոմատ գեներացվող դաշտ համակարգի կողմից
Գործարքի համար	Չերթական համար
Վճարման շարժանիթ	Բացվող ցանկ, ավտոմատ լրացվող
Գործարքի ամսաթիվ	Տվյալ օրվա ամսաթիվ
Խումբ, ենթախումբ, Դաս, ծրագիր, նախարարություն	Չի լրացվում
Տոկոս	100
Ամսաթիվ	Նշվում է 2 ամսաթիվ՝ նախորդ փակված գործառնական օրվա ամսաթիվը և ընթացիկ օրվա ամսաթիվը
Յոդված	Տնտեսագիտական հոդված, տեղեկատու
Դեբետ	ԲԳԿ-ի հաշիվ, ավտոմատ լրացվող
Յաշիվ	ԲՄԿ-ի հաշիվ, ավտոմատ լրացվող

Պարտք	ավտոմատ լրացվող
Վճարել	ավտոմատ լրացվող
ՏԳԲ	Բազայի կողմ, ավտոմատ լրացվող
Համար	ավտոմատ լրացվող
Պայմանագրի կողմ	ավտոմատ լրացվող
Ընդամենը	Հաշվարկվող դաշտ

402 Ծախս


Տվյալ	Նկարագրություն
Հղման համար	Ավտոմատ գեներացվող դաշտ համակարգի կողմից
Գործարքի արժույթ	ՀՀ դրամ
Գործարքի համար	Հերթական համար
Վճարման շարժառիթ	Բացվող ցանկ, ավտոմատ լրացվող
Գործարքի ամսաթիվ	Տվյալ օրվա ամսաթիվ
Դեբետ հաշիվ	ԲԳԿ-ի հաշիվ
Կրեդիտ հաշիվ	Գանձապետական հաշիվ
Գործարքի գումար	
Հողված / գումար / անվանում	Տնտեսագիտական դասակարգման հողված
Հարկատուի կողմ	Ըստ անհրաժեշտության
Վճարման նպատակ	Տեքստային դաշտ

701 կրեդիտային գործարք


	Տվյալ	Նկարագրություն
	Չղման համար	Ավտոմատ գեներացվող դաշտ համակարգի կողմից
	Գործարքի արժույթ	ՋՋ դրամ
	Գործարքի համար	Չերթական համար
	Վճարման շարժանիթ	Բացվող ցանկ, ավտոմատ լրացվող
	Գործարքի ամսաթիվ	Տվյալ օրվա ամսաթիվ
	Դեբետ հաշիվ	ԲԳԿ-ի հաշիվ
	Կրեդիտ հաշիվ	Գանձապետական հաշիվ
	Գործարքի գումար	
	Չողված / գումար / անվանում	Տնտեսագիտական դասակարգման հողված
	Չարկատուի կոդ	Ըստ անհրաժեշտության
	Վճարման նպատակ	Տեքստային դաշտ
Ելքագրվող տվյալներ	Նույն մուտքագրվող տվյալների խումբ	
Վալիդացիա	Մնացորդների ստուգում, տեղեկատուների ստուգում	

Իրավական ակտեր՝ ՋՋ կառավարության 15.06.2018թ. N 706-Ն որոշում


Բյուջետային փոխանցագրերի ձևակերպում՝ հատուկ դեպքեր



ԲԳԿ-ների ամենօրյա ռեժիմով ֆինանսավորում



Ֆինանսավորման տրամադրում վարկի տեսքով



Ստորաբաժանում	Պետական բյուջեի հաշվառման բաժին
Անվանում	ԳԶ-ՊԲ16–Օտարերկրյա քաղաքացիներին ԱԱՀ-ի գումարների վերադարձ
Նպատակ	Օտարերկրյա ֆիզիկական անձանց ԱԱՀ-ի գումարների վերադարձ
Տիրույթ	ՀՀ ֆինանսների նախարարություն, Առևտրային բանկ, օտարերկրյա ֆիզիկական անձ, մաքսային մարմին, LS Finance
Դերակատարներ	ՀՀ ՖՆ պետական բյուջեի հաշվառման բաժին
Ընթացք 1	<ol style="list-style-type: none"> 1. Օտարերկրյա քաղաքացիների կողմից ՀՀ տարածքում ձեռք բերված ապրանքների արտահանման դեպքում դրանց գների մեջ ներառված և ՀՀ տարածքում վճարված ավելացված արժեքի հարկի գումարներն օտարերկրյա քաղաքացիներին փոխհատուցվում են ՀՀ կառավարության 29 հունիսի 2017 թվականի N 751-Ն որոշմամբ սահմանված կարգով: 2. Օտարերկրյա անձի պահանջով հարկ վճարողը ինտերնետային կապի միջոցով՝ իրական ժամանակում համակարգչային եղանակով դուրս է գրում ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշիվ կամ հսկիչ-դրամարկղային մեքենայի միջոցով ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշիվ, որի ստորագրված/կնքված թղթային օրինակը տրամադրվում է օտարերկրյա անձին: Օտարերկրյա անձի անվամբ ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշիվը դուրս է գրվում օտարերկրյա անձի տվյալներով: 3. Օտարերկրյա անձը ՀՀ սահմանը հատելիս ՀՀ մաքսային մարմիններին է ներկայացնում անձնագիրը, ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշվի թղթային տարբերակը կամ ՀԴՄ հարկային հաշիվը, արտահանման ենթակա ապրանքների դիմաց կատարած վճարումը հավաստող փաստաթուղթը, արտահանվող ապրանքը, օդանավով ՀՀ-ից մեկնելու դեպքում՝ նստեցման կտրոնը: 4. Մաքսային մարմինները ստուգում են օտարերկրացու կողմից ներկայացված փաստաթղթերի ամբողջականությունը և օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանությունը: 5. Եթե ներկայացված փաստաթղթերը կամ դրանց վավերապայմանները չեն համապատասխանում որոշմամբ սահմանված պահանջներին, ապա մաքսային մարմինը մերժում է ԱԱՀ-ի գումարի փոխհատուցումը: 6. Եթե ներկայացված փաստաթղթերը ամբողջական են և համապատասխանում են որոշմամբ սահմանված պահանջներին, ապա մաքսային մարմնի աշխատակիցը ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշվի կամ ՀԴՄ հարկային հաշվի վրա կատարում է «Ենթակա է փոխհատուցման» գրառումը, նշում է փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ի գումարը և կնքում դրոշմակնիքով:

ԱԱՀ-ի փոխհատուցում կանխիկ եղանակով

1. ԱԱՀ-ի փոխհատուցումը **կանխիկ եղանակով** ստանալու համար օտարերկրյա անձը փաստաթղթերի ամբողջական փաթեթը (մաքսային մարմնի կողմից կնքված հաշվի օրինակը, անձնագրի պատճեն, նստեցման կտրոնը /առկայության դեպքում/) ներկայացնում է ՀՀ պետական սահմանի անցման կետերում տեղաբաշխված որևէ բանկի գործառնական գրասենյակ:
2. Համապատասխան բանկի աշխատակիցը ուսումնասիրում է փաստաթղթերի փաթեթը և օտարերկրյա անձից վերցնում է տվյալ անձի անձնագրի պատճեն, ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշիվը, կատարված վճարումը հավաստող փաստաթուղթը, օդանավով մեկնելու դեպքում՝ նստեցման կտրոնի պատճեն և կատարում է վճարում օտարերկրյա անձին կանխիկ եղանակով:
3. Օտարերկրյա անձանց ԱԱՀ-ի գումարները փոխհատուցող բանկը յուրաքանչյուր ամսվա արդյունքներով ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացնում գործառնական գրասենյակների կողմից օտարերկրյա անձանց փոխհատուցված ԱԱՀ-ի գումարների փոխհատուցման հայտ՝ կցելով տվյալ ամսվա ընթացքում բանկի գործառնական գրասենյակների կողմից ԱԱՀ-ի գումարների փոխհատուցման համար հիմք հանդիսացող՝ ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշիվների (ՀԴՄ հարկային հաշիվ) և ապրանքի դիմաց կատարված վճարումը հավաստող փաստաթղթերի բնօրինակները, իսկ օդանավով ՀՀ-ից մեկնած օտարերկրացիների մասով՝ նաև նստեցման կտրոնների պատճենները:
4. Ֆինանսների նախարարության պետական բյուջեի հաշվառման բաժինը ուսումնասիրում է բանկի կողմից ներկայացված հայտը և բոլոր հիմնավորող փաստաթղթերը: Անհամապատասխանությունների առկայության դեպքում պետական բյուջեի հաշվառման բաժինը մերժում է հայտում ներառված այն գումարների փոխհատուցումը բանկին, որոնց հիմնավորող փաստաթղթերը ամբողջական չեն կամ որոնցում առկա են անհամապատասխանություններ: Այդ դեպքում պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը մերժված գործարքների մասով տեղեկատվությունը գրությամբ ներկայացնում է բանկին:
5. Եթե բանկի կողմից ներկայացված հայտը և հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ապա պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը 30 օրվա ընթացքում բանկին փոխհատուցում է համապատասխան գումարը:
6. Բաժնի աշխատակիցը մուտք է գործում LS Finance համակարգ և 707 դեբետային գործարքով (դաշտերը ներկայացված են ստորև) ընդհանուր ռեսուրսների հաշվից անհրաժեշտ գումարը տեղափոխում է ԱԱՀ-ի հաշվին 900005001020: Այնուհետև, աշխատակիցը 213 Արտաբյուջեի վերաբաշխում գործարքով (դաշտերը ներկայացված են ստորև) գումարը փոխանցում է բանկի համապատասխան հաշվին՝ ըստ հայտի:

Կատարող աշխատակցի կողմից գործարքի հաստատումից հետո, այն հայտնվում է վերադաս աշխատակցի հսկման հերթում:

7. Եթե առկա է սխալ/անհամապատասխանություն, վերջնական հաստատողը հսկման հերթից կարող է հեռացնել կամ հետ վերադարձնել գործարքը կատարողին՝ ուղղման:
8. Եթե առկա չէ անհամապատասխանություն, ապա գործարքը հաստատվում է հսկման հերթից, որից հետո փոխանցումը կատարվում է Bank Mail-ով:
9. Պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը փոխանցումը կատարելուց հետո տեղեկացնում է համապատասխան բանկին այդ մասին:

ԱԱՅ-ի փոխհատուցում անկանխիկ եղանակով

1. ԱԱՅ-ի փոխհատուցումը **անկանխիկ եղանակով** ստանալու համար օտարերկրյա անձը ԱԱՅ-ի վերադարձի հաշվում լրացնում է իր պլաստիկ վճարային քարտի տվյալները, կամ բանկային հաշվեհամարը և փաստաթղթերի փաթեթը թողնում է այդ նպատակով ՀՀ պետական սահմանի անցման կետերում տեղադրված՝ համապատասխան նշումով (Tax free invoices) արկղի մեջ:
2. Նշված փաստաթղթերը մաքսային մարմնի կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն են ուղարկվում յուրաքանչյուր շաբաթվա վերջին աշխատանքային օրը՝ կից գրությամբ, որի մեջ նշվում են օտարերկրյա անձի անուն, ազգանունը, անձնագրի տվյալները, բնակության երկիրը, ԱԱՅ-ի վերադարձի հաշվի սերիան և համարը, վերադարձման ենթակա գումարը /ՀՀ դրամ/:
3. Ֆինանսների նախարարության պետական բյուջեի հաշվառման բաժինը ուսումնասիրում է ստացված փաստաթղթերը:
4. Պետական բյուջեի հաշվառման բաժինը մերժում է այն օտարերկրյա անձանց փոխհատուցումը, ում փաստաթղթերը ամբողջական չեն կամ չեն համապատասխանում օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը մերժված փաթեթների մասով գրությամբ ծանուցում է մաքսային մարմնին:
5. Եթե փաստաթղթերը ամբողջական են և համապատասխանում են օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ապա պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը ընթացք է տալիս փոխհատուցմանը:
6. Անկանխիկ եղանակով վճարումները կարող են կատարվել օտարերկրյա անձի պլաստիկ վճարային քարտին կամ բանկային հաշվեհամարին փոխանցման միջոցով՝ ըստ օտարերկրյա անձի կողմից ԱԱՅ-ի վերադարձի հաշվում լրացված տվյալների:

7. Ստացված փաստաթղթերի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունն ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշվում նշված պլաստիկ վճարային քարտի կամ բանկային հաշվի համարին գումարները փոխանցում է ոչ ուշ, քան փաստաթղթերն ստանալուն հաջորդող 30-րդ օրը՝ առևտրային բանկերի հետ կնքված պայմանագրերի դրույթներին համապատասխան:

Գումարի փոխանցում պլաստիկ քարտերին

1. Եթե օտարերկրյա անձը ԱԱՀ-ի փոխհատուցման համար տրամադրել է պլաստիկ վճարային քարտի տվյալները, ապա տվյալ անձին փոխհատուցումը կատարվում է պլաստիկ վճարային քարտին: Ըստ որում, փոխհատուցումը կարող է կատարվել միայն VISA կամ MASTER տեսակի պլաստիկ վճարային քարտերին:
2. Պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը կազմում է օտարերկրյա քաղաքացիների պլաստիկ վճարային քարտերին վերադարձման ենթակա ԱԱՀ-ի գումարների ցուցակ և հաշվարկում փոխհատուցման ենթակա ընդհանուր գումարը:
3. Այնուհետև, աշխատակիցը կատարում է հաշվարկված գումարի փոխանցում տվյալ առևտրային բանկին, որի հետ ունի համապատասխան պայմանագիր՝ 213 Արտաբյուջեի վերաբաշխում գործարքով (դաշտերը ներկայացված են ստորև): Կատարող աշխատակցի կողմից գործարքի հաստատումից հետո, այն հայտնվում է վերադաս աշխատակցի հսկման հերթում: Եթե առկա է սխալ/անհամապատասխանություն, վերջնական հաստատողը հսկման հերթից կարող է հեռացնել կամ հետ վերադարձնել գործարքը կատարողին՝ ուղղման: Եթե առկա չէ անհամապատասխանություն, ապա գործարքը հաստատվում է հսկման հերթից, որից հետո փոխանցումը կատարվում է Bank Mail-ով:
4. Պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը կազմում է գրություն համապատասխան առևտրային բանկին՝ ներկայացնելով տեղեկանք օտարերկրյա անձանց վերադարձման ենթակա ԱԱՀ-ի գումարների վերաբերյալ, որը ներառում է օտարերկրյա անձի անուն ազգանունը, երկիրը, պլաստիկ քարտի համարը, փոխանցվող գումարը, ԱԱՀ-ի վերադարձի հաշվի սերիան և համարը, ինչպես նաև տեղեկատվություն բանկի համապատասխան հաշվին փոխանցված ընդհանուր գումարի մասին: Գրությունը և կից ցանկը ուղարկվում է բանկին Lotus ծրագրով:
5. Առևտրային բանկը, իր համապատասխան հաշվին գումարը ստանալուց հետո, ըստ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված տվյալների կատարում է փոխանցումները օտարերկրյա անձանց պլաստիկ վճարային քարտերին:
6. Պլաստիկ վճարային քարտերի տվյալների սխալ կամ ոչ ամբողջական լինելու դեպքում գումարները բանկի կողմից վերադարձվում են ֆինանսների նախարարության համապատասխան միջանկյալ հաշվին:

7. Նման դեպքերում պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը կապ է հաստատում (Էլ. փոստով՝ առկայության դեպքում, կամ փոստով) տվյալ օտարերկրյա անձի հետ՝ վճարման վավերապայմանները ճշտելու համար: Գրությունը կազմվում է երկու լեզվով՝ հայերեն և անգլերեն կամ ռուսերեն:
8. Նոր բանկային վավերապայմանները ստանալուց հետո պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը կատարում է 2-5-րդ կետերում նշված գործողությունների շրջափուլը:

Գումարի փոխանցում բանկային հաշվի համարին

1. Եթե օտարերկրյա անձը ԱԱՀ-ի փոխհատուցման համար տրամադրել է բանկային հաշվեհամար, ապա տվյալ անձին փոխհատուցումը կատարվում է տրամադրված բանկային հաշվեհամարին:
2. Պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը մուտք է գործում LS Finance համակարգ և 707 դեբետային գործարքով անհրաժեշտ գումարը ԱԱՀ-ի հաշվից (900005001020) տեղափոխում համապատասխան միջանկյալ հաշվին (900000000241՝ ԱԱՀ-ի վերադրած օտար. քաղաք.):
3. Այնուհետև, աշխատակիցը դրամային փոխանցման դեպքում՝ 201 Էլեկտրոնային փոխանցում գործարքով (դաշտերը ներկայացված են ստորև), ռուբլիով փոխանցման դեպքում՝ 316 դրամ. փոխ. RUB գործարքով (դաշտերը ներկայացված են ստորև), ԱՄՆ դոլարով կամ եվրոյով փոխանցման դեպքում՝ 315 գործարքով (դաշտերը ներկայացված են ստորև) գումարը փոխանցում է օտարերկրյա քաղաքացու բանկային հաշվեհամարին: Կատարող աշխատակցի կողմից գործարքի հաստատումից հետո, այն հայտնվում է վերադաս աշխատակցի հսկման հերթում: Եթե առկա է սխալ/անհամապատասխանություն, վերջնական հաստատողը հսկման հերթից կարող է հեռացնել կամ հետ վերադարձնել գործարքը կատարողին՝ ուղղման: Եթե առկա չէ անհամապատասխանություն, ապա գործարքը հաստատվում է հսկման հերթից, որից հետո փոխանցումը կատարվում է Bank Mail-ով:
4. Ստացողի բանկային տվյալների սխալ կամ ոչ ամբողջական լինելու դեպքում գումարները բանկի կողմից վերադարձվում են ֆինանսների նախարարության համապատասխան միջանկյալ հաշվին:
5. Նման դեպքերում պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը կապ է հաստատում (Էլ. փոստով՝ առկայության դեպքում, կամ փոստով) տվյալ օտարերկրյա անձի հետ՝ վճարման վավերապայմանները ճշտելու համար: Գրությունը կազմվում է երկու լեզվով՝ հայերեն և անգլերեն կամ ռուսերեն:
6. Նոր բանկային վավերապայմանները ստանալուց հետո պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը կատարում է 2-5-րդ կետերում նշված գործողությունների շրջափուլը:

Մուտքագրվող
տվյալներ

ԳՁ-ՊԲ16/Մ/1

ԱԱՀ-ի գումարների փոխհատուցման հայտ

Տվյալ	Նկարագրություն
Բանկի լրիվ անվանումը	
Գտնվելու վայրը	
Ժամանակահատված	Որի համար պահանջվում է փոխհատուցում
Գումարը բառերով, թվերով	
Կցվող փաստաթղթերի էջերի քանակ	
Բանկի հաշվեհամարը	
Ստորագրություններ	

ԳՁ-ՊԲ16/Մ/2

Դեբետային գործարք /707/

Տվյալ	Նկարագրություն
Ջղման համար	Ջամակարգի կողմից ավտոմատ լրացվող դաշտ
Գործարքի արժույթ	Ջամակարգի կողմից ավտոմատ լրացվող դաշտ
Գործարքի համար	Լրացվող դաշտ
Վճարման շարժառիթ	Բացվող ցանկ, ավտոմատ լրացվող
Դեբետ հաշիվ	Ընդհանուր ռեսուրսների հաշիվ 26000000013
Կրեդիտ հաշիվ	ԱԱՀ-ի հաշիվ, 900005001020

Գործարքի գումար	Լրացվող դաշտ
Ջողված, գումար, անվանում	Չի լրացվում
Ջարկատուի կոդ	Լրացվող դաշտ /2000000000/
Վճարման նպատակ	Դեբետային գործարք

Արտաբյուլջեի վերաբաշխում /213/

Տվյալ	Նկարագրություն
Ջղման համար	Ջամակարգի կողմից փոխանցման ժամանակ ավտոմատ ձևավորվող համար
Գործարքի արժույթ	Ջամակարգի կողմից ավտոմատ լրացվող դաշտ
Գործարքի համար	Լրացվող դաշտ
Վճարման շարժառիթ	ավտոմատ լրացվող դաշտ ըստ վճարման տիպի
Գործարքի ամսաթիվ	Տվյալ օրվա ամսաթիվ
Դեբետ հաշիվ	ԱԱՀ-ի հաշիվ 900005001020
Վճարողի բանկը	Գանձապետարան, կոդ` AM90000
Վճարողի հաշիվ	Գանձապետական հաշիվ, որից կատարվում է վճարում 900005001020
Վճարող	Ավտոմատ լրացվող` ՊԵԿ
Ստացողի հաշիվ	
Ստացողի բանկ	
Ստացող	

Կրեդիտի հաշիվ	գանձապետական միջանկյալ հաշիվ՝ 900001111112, պետական բյուջեի գծով տարանցիկ հաշիվ, որից BankMail-ով կատարվում է խմբային 202 ֆորմատի փոխանցում
Ստաց. հաճախորդի տիպ	Բացվող ցանկ՝ իրավաբանական անձ, ֆիզիկական անձ
Գործարքի գումար	
Յոդված/Գումար/Անվանում	Չի լրացվում
Վճարման նպատակ	Լրացվող տեքստային դաշտ
Յարկային կոդ	

ԳՁ-ՊԲ16/Մ/3

Էլեկտրոնային փոխանցում /201/

Տվյալ	Նկարագրություն
Յղման համար	Յամակարգի կողմից փոխանցման ժամանակ ավտոմատ ձևավորվող համար
Գործարքի արժույթ	Յամակարգի կողմից ավտոմատ լրացվող դաշտ
Գործարքի համար	Լրացվող դաշտ
Վճարման շարժառիթ	ավտոմատ լրացվող դաշտ ըստ վճարման տիպի
Գործարքի ամսաթիվ	Տվյալ օրվա ամսաթիվ
Դեբետ հաշիվ	Միջանկյալ հաշիվ
Խումբ, Ենթախումբ, դաս, ծրագիր, նախարարութ.	Չի լրացվում
Վճարողի բանկը	Գանձապետարան, կոդ՝ AM90000

Վճարողի հաշիվ	Գանձապետական հաշիվ, որից կատարվում է վճարում Միջանկյալ հաշիվ
Վճարող	Ավտոմատ լրացվող՝ \$Ն
Ստացողի հաշիվ	90000, ավտոմատ լրացվող
Ստացողի բանկ	
Ստացող	
Կրեդիտի հաշիվ	գանձապետական միջանկյալ հաշիվ՝ 900001111112, պետական բյուջեի գծով տարանցիկ հաշիվ, որից BankMail- ով կատարվում է խմբային 202 ֆորմատի փոխանցում
Ստաց. հաճախորդի տիպ	Բացվող ցանկ՝ իրավաբանական անձ, ֆիզիկական անձ
Գործարքի գումար	
Յոթված/Գումար/Անվանում	Չի լրացվում
Վճարման նպատակ	Լրացվող տեքստային դաշտ
Չարկային կոդ	Չի լրացվում

Դրամ. փոխ. RUB 316

Տվյալ	Նկարագրություն
Amount/ Գումար	Լրացվող դաշտ
Արժույթ	Ավտոմատ լրացվող , RUR
Յոթված	Տնտեսագիտական դասակարգման հոդված
Դեբետ հաշիվ	\$Ն միջանկյալ հաշիվ, ավտոմատ լրացվող
Ordering Customer Acc	/ \$Ն միջանկյալ հաշիվ, ավտոմատ լրացվող

Name and Address	\$Ն, ավտոմատ լրացվող
Ordering institution Acc	90000, ավտոմատ լրացվող
Intermediary BIC	Չի լրացվում
Name and Address	Չի լրացվում
Acc with Inst. BIC	Լրացվող դաշտ
Name and address	Լրացվող դաշտ
Details of payment	Լրացվող դաշտ
Sender to receiver information	Լրացվող դաշտ
Երկիր	Լրացվող դաշտ, բացվող ցանկ
Փոխարժեք	Ավտոմատ լրացվող դաշտ
Գործարքի գումարը	Լրացվող դաշտ
Վճարման նպատակը	Լրացվող դաշտ


Դրամ փոխ. SWIFT /315/

Տվյալ	Նկարագրություն
Ջղման համար	Ավտոմատ լրացվող
Գործարքի համար	Լրացվող դաշտ
Վճարման շարժառիթ	Բացվող ցանկ, ավտոմատ լրացվող
Transaction reference number	Ավտոմատ լրացվող
Դեբետի արժույթ	Դրամ, ավտոմատ լրացվող
Value Date	Ավտոմատ լրացվող
Amount/ Գումար	Լրացվող դաշտ, USD կամ EUR


	<table border="1"> <tr> <td>Ջողված</td> <td>Տնտեսագիտական դասակարգման հոդված</td> </tr> <tr> <td>Դեբետ հաշիվ</td> <td>\$Ն միջանկյալ հաշիվ, ավտոմատ լրացվող</td> </tr> <tr> <td>Ordering Customer Acc</td> <td>/ \$Ն միջանկյալ հաշիվ, ավտոմատ լրացվող</td> </tr> <tr> <td>Name and Address</td> <td>\$Ն, ավտոմատ լրացվող</td> </tr> <tr> <td>Ordering institution Acc</td> <td>90000, ավտոմատ լրացվող</td> </tr> <tr> <td>Account with Inst. BIC</td> <td>Լրացվող</td> </tr> <tr> <td>Name and Address</td> <td>Լրացվող</td> </tr> <tr> <td>Details of payment</td> <td>Լրացվող</td> </tr> <tr> <td>Երկիր</td> <td>Լրացվող, բացվող ցանկ</td> </tr> <tr> <td>Փոխարժեք</td> <td>Ավտոմատ լրացվող</td> </tr> <tr> <td>Վճարման նպատակ</td> <td>Լրացվող</td> </tr> </table>	Ջողված	Տնտեսագիտական դասակարգման հոդված	Դեբետ հաշիվ	\$Ն միջանկյալ հաշիվ, ավտոմատ լրացվող	Ordering Customer Acc	/ \$Ն միջանկյալ հաշիվ, ավտոմատ լրացվող	Name and Address	\$Ն, ավտոմատ լրացվող	Ordering institution Acc	90000, ավտոմատ լրացվող	Account with Inst. BIC	Լրացվող	Name and Address	Լրացվող	Details of payment	Լրացվող	Երկիր	Լրացվող, բացվող ցանկ	Փոխարժեք	Ավտոմատ լրացվող	Վճարման նպատակ	Լրացվող
Ջողված	Տնտեսագիտական դասակարգման հոդված																						
Դեբետ հաշիվ	\$Ն միջանկյալ հաշիվ, ավտոմատ լրացվող																						
Ordering Customer Acc	/ \$Ն միջանկյալ հաշիվ, ավտոմատ լրացվող																						
Name and Address	\$Ն, ավտոմատ լրացվող																						
Ordering institution Acc	90000, ավտոմատ լրացվող																						
Account with Inst. BIC	Լրացվող																						
Name and Address	Լրացվող																						
Details of payment	Լրացվող																						
Երկիր	Լրացվող, բացվող ցանկ																						
Փոխարժեք	Ավտոմատ լրացվող																						
Վճարման նպատակ	Լրացվող																						
Ելքագրվող տվյալներ	Նույն մուտքագրվող տվյալների խումբ																						
Վալիդացիա	Մնացորդների ստուգում, տեղեկատուների ստուգում																						

Իրավական ակտեր՝ ՀՀ կառավարության 751-Ն որոշում, 2017թ.

ԱՄՅ-ի փոխհատուցում կանխիկ եղանակով



ԱԱՀ-ի փոխհատուցում անկանխիկ եղանակով



Ստորաբաժանում	Պետական բյուջեի հաշվառման բաժին
Անվանում	ԳՁ-ՊԲ17–ՊՈԱԿ-ների գանձապետական հաշիվներին ՅԴՄ սարքերի միջոցով գանձումների գումարների մուտքագրում
Նպատակ	ՊՈԱԿ-ների կողմից մատուցված ծառայությունների դիմաց ՅԴՄ սարքերի կամ POS տերմինալներով վճարված գումարների մուտքագրում գանձապետական հաշիվներին
Տիրույթ	Ֆինանսների նախարարություն, ՊՈԱԿ, Ամերիաբանկ
Դերակատարներ	Պետական բյուջեի հաշվառման բաժին, ՊՈԱԿ, ՊԵԿ, Ամերիաբանկ
Ընթացք 1	<ol style="list-style-type: none"> 1. ՅՅ ֆինանսների նախարարության և Ամերիաբանկ ՓԲԸ-ի միջև կնքվել է պայմանագիր՝ ՊՈԱԿ-ների գանձապետական հաշիվներին Նոր սերնդի ՅԴՄ սարքերի կամ POS տերմինալների միջոցով գնորդների պլաստիկ քարտերի կիրառմամբ գործարքների գումարների մուտքագրման բանկային սպասարկման ծառայությունների ապահովման նպատակով: 2. Դրամարկղային գործառնությունների իրականացնող ՊՈԱԿ-ները ֆինանսների նախարարություն են ներկայացնում իրենց կողմից շահագործվող ՅԴՄ սարքերի վերաբերյալ տվյալները: 3. Անհրաժեշտ տվյալները ստանալուց հետո ֆինանսների նախարարությունը, համագործակցելով Ամերիաբանկ ՓԲԸ-ի հետ, կազմակերպում է ՊՈԱԿ-ների կողմից շահագործվող ՅԴՄ սարքերի վրա ծրագրային կարգավորումները՝ տերմինալը ակտիվացնելու համար: 4. ՊՈԱԿ-ը կատարում է դրամարկղային անկանխիկ գործառնություններ և կատարված դրամակրղային գործառնությունների գումարները մուտքագրվում են Ամերիաբանկի համար բացված միջանկյալ հաշվին (ՅԴՄ սարքերի միջոցով գործարքների միջանկյալ հաշիվ): 5. Գումարը հաշվին մուտքագրվելու նպատակով յուրաքանչյուր օր համակարգը ըստ ՅԿՅՅ-ի էլեկտրոնային հարցում է ուղարկում ՊԵԿ-ի համակարգին: Եթե հարցման պատասխանը դրական է, ապա գումարը ավտոմատ մուտքագրվում է ՊՈԱԿ-ի գանձապետական հաշվին գործարքին հաջորդող չորրորդ օրը: 6. Եթե հարցման պատասխանը բացասական է, ապա գումարը մնում է միջանկյալ հաշվին մինչև համապատասխան պարզաբանումների կատարումը: Պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը ըստ անհրաժեշտության գրություններով դիմում է ՊԵԿ, ինչպես նաև բանկ, կամ ՊՈԱԿ՝ անհրաժեշտ պարզաբանումները կատարելու համար: 7. Ամերիաբանկ ՓԲԸ-ն յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո կազմում է արձանագրություն՝ իր կողմից մատուցված ծառայությունների դիմաց տոկոսագումարների ստացման համար:

8. Ֆինանսների նախարարության ծրագրերի իրականացման վարչությունը կազմում է սահմանված փաստաթղթերը Ամերիաբանկ ՓԲԸ-ին վճարումը ապահովելու համար:

Մուտքագրվող տվյալներ

ԳՁ-ՊԲ17/Մ

Տվյալ	Նկարագրություն
Յղման համար	Համակարգի կողմից ավտոմատ լրացվող դաշտ
Գործարքի համար	Համակարգի կողմից ավտոմատ լրացվող դաշտ
Վճարման շարժառիթ	Բացվող ցանկ, ավտոմատ լրացվող
Դեբետ հաշիվ	
Կրեդիտ հաշիվ	
Գործարքի ամսաթիվ	Համակարգի կողմից ավտոմատ լրացվող դաշտ
Գործարքի գումար	Համակարգի կողմից ավտոմատ լրացվող դաշտ
Վճարման նպատակ	Համակարգի կողմից ավտոմատ լրացվող դաշտ
Չարկատուի կոդ	ՊՈԱԿ-ի ՉՎՅՅ
Վճարողի բանկ	Ամերիաբանկի կող, համակարգի կողմից ավտոմատ լրացվող դաշտ
Վճարողի հաշիվ	Ամերիաբանկի հաշիվ
Ստացողի հաշիվ	Միջանկյալ հաշիվ
Վճարողի տվյալներ	Համակարգի կողմից ավտոմատ լրացվող դաշտ
BANK MAIL	Համակարգի կողմից ավտոմատ լրացվող դաշտ


Ելքագրվող տվյալներ

Նույն մուտքագրվող տվյալների խումբ

Վալիդացիա

ՊԵԿ-ի հետ տվյալների ստուգում, մնացորդների ստուգում, տեղեկատուների ստուգում

Իրավական ակտեր՝ կիրառելի չԷ



Ստորաբաժանում	Պետական բյուջեի հաշվառման բաժին
Անվանում	ԳԶ-ՊԲ18– Պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով վճարումներ
Նպատակ	Պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով վճարումների հավաքագրում և մուտքագրում գանձապետական հաշիվներին
Տիրույթ	Ֆինանսների նախարարություն, պետական մարմիններ, համայնքներ, ՊՈԱԿ-ներ, ֆիզիկական և իրավաբանական անձինք, համակարգի սպասարկող
Դերակատարներ	Պետական բյուջեի հաշվառման բաժին, պետական մարմիններ, համայնքներ, ՊՈԱԿ-ներ, ֆիզիկական և իրավաբանական անձինք, համակարգի սպասարկող , վճարահաշվարկային այլ համակարգեր/տերմինալներ/,բանկեր
Ընթացք 1	<ol style="list-style-type: none"> 1. ՀՀ ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են կատարել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական տուրքի, տեղական տուրքի, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարների կամ վարչական տուգանքների վճարումները www.epayments.am էլեկտրոնային համակարգի միջոցով: Վճարումները կարելի է կատարել օգտագործելով ArCA, VISA կամ MasterCard վճարային քարտերը, ՄոբիԴրամ համակարգը, TellCell և EasyPay վճարային տերմինալները, որոնց հետ ՀՀ ֆինանսների նախարարությունը կնքել է պայմանագրեր, ինչպես նաև հյուպատոսական ծառայությունների դեպքում՝ PayPal համակարգը: www.epayments.am համակարգը շահագործվում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից, իսկ տեխնիկական սպասարկումը իրականացվում է Հելիքս Քոնսալթինգ ՍՊԸ-ի կողմից: 2. Պետական մարմինները www.epayments.am համակարգի միջոցով վճարումներ ընդունելու համար գրությամբ դիմում են ՀՀ ֆինանսների նախարարություն՝ ներկայացնելով անհրաժեշտ տվյալները, մասնավորապես գանձապետական հաշվի համարը, որի վրա պետք է մուտքագրվի գումարը, պետական տուրքի կամ գանձվող վճարի անվանումը, դրույքաչափը և/կամ գումարը /ըստ անհրաժեշտության/: 3. Ֆինանսների նախարարությունը գրությունը ստանալուց հետո ուսումնասիրում է գրությամբ ներկայացված տվյալները և անհամապատասխանությունների բացակայության դեպքում համակարգի ադմինիստրատորի միջավայրից անհրաժեշտ տվյալները մուտքագրում է www.epayments.am համակարգ: Ֆինանսների նախարարության պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը անհրաժեշտ տվյալները փոխանցում է համակարգի տեխնիկական սպասարկողին անհրաժեշտ կարգավորումները և համակցումները ապահովելու համար:

4. Պետական մարմինը խմբային վճարումներ ձևավորելու, ինչպես նաև այլ կայքերի միջոցով e-payments համակարգին համակցմամբ վճարումներ ընդունելու համար դիմում է համակարգի տեխնիկական սպասարկողին՝ անհրաժեշտ կարգավորումները և համակցումները իրականացնելու համար, կամ ՀՀ ֆինանսների նախարարություն, որը տվյալները փոխանցում է տեխնիկական սպասարկողին:
5. Այնուհետև, պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը ապահովում է, որպեսզի ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան տարանցիկ հաշիվները /անհրաժեշտության դեպքում բացելով նորը/, որոնց միջոցով մուտքագրվելու են վճարումներ epayments.am համակարգից, ընդգրկված լինեն LS Finance համակարգի No_HARK խմբում: Ընդգրկված չլինելու դեպքում գումարի մուտքագրում համապատասխան գանձապետական հաշվին տեղի չի ունենա և համակարգը սպասարկողը կստանա սխալի հաղորդագրություն:
6. Վերը նշված գործողությունները կատարելուց հետո ՀՀ ֆիզիկական և իրավաբանական անձինք www.epayments.am կայքի միջոցով ստանում են վճարումներ կատարելու հնարավորություն:
7. www.epayments.am համակարգում առկա է խմբային վճարումներ կատարելու հնարավորություն: Այս ֆունկցիոնալը հնարավորություն է տալիս մեկ գործողությամբ միանգամից կատարել մի քանի վճարում գանձապետական տարբեր հաշվեհամարներին: Խմբային վճարումները լայնորեն կիրառվում են մաքսային ծառայությունում, ԴԱՀԿ ծառայությունում, ՀՀ արտաքին գործերի և արդարադատության նախարարություններում՝ վերջիններիս կայքերը համակարգին ինտեգրման արդյունքում:

Վճարումների կատարում ArCA, VISA կամ MasterCard վճարային քարտերի միջոցով

1. ՀՀ ֆիզիկական և իրավաբանական անձինք մուտք են գործում www.epayments.am կայք, համապատասխան բաժնից ընտրում են վճարման տեսակը, որ պետք է իրականացնեն և սեղմում են «Վճարել» կոճակը, բացվող պատուհանում լրացնում են անհրաժեշտ տվյալները և հաստատում գործարքը:
2. Գործարքը հաստատելուց հետո գումարը նախ սառեցվում է, ապա գանձվում վճարային քարտից առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում: Գումարի գանձումից հետո վճարողը ստանում է անդորրագիր 20-նիշանոց ծածկագրով, որը հավաստում է վճարման կատարված լինելու փաստը: Անդորրագիրը ուղարկվում է վճարողի նշած էլեկտրոնային փոստի հասցեին: 20-նիշանոց ծածկագրով հնարավոր է կայքէջում իրականացնել փնտրում և տեսնել վճարման կարգավիճակը:
3. Վճարային քարտերով կատարված վճարումները հավաքագրվում և մշակվում են Արարատբանկ ՓԲԸ-ի կողմից /ՀՀ ֆինանսների նախարարության հետ կնքված պայմանագրի հիման վրա/ և փոխանցվում են ՀՀ ֆինանսների նախարարության 900000000175 տարանցիկ հաշվին: Արարատ բանկի կողմից ՀՀ ֆինանսների նախարարության 900000000175 տարանցիկ հաշվին գումարի մուտքագրումից հետո, գումարները

ավտոմատաբար ելքագրվում են այդ հաշվից՝ փոխանցվելով համապատասխան մարմինների գանձապետական հաշիվներին, իսկ խմբային վճարումների դեպքում՝ այդ նպատակով բացված տարանցիկ հաշիվներով շրջանառվելուց հետո:

Վճարումների կատարում TELLCELL, EASYPAY տերմինալների կամ MOBIDRAM-ի միջոցով

1. ՀՀ ֆիզիկական և իրավաբանական անձինք TELLCELL, EASYPAY տերմինալի կամ MOBIDRAM-ի միջոցով կատարում են վճարում՝ ընտրելով համապատասխան վճարման տեսակը:
2. TELLCELL, EASYPAY կամ MOBIDRAM ընկերությունները հավաքագրված գումարները փոխանցում են ՀՀ ֆինանսների նախարարություն՝ համապատասխան գանձապետական տարանցիկ հաշիվներին, այնուհետև՝ տարանցիկ հաշվից ավտոմատ փոխանցվում համապատասխան պետական մարմինների գանձապետական հաշիվներին: Գումարի ուշ մուտքագրման դեպքում վճարահաշվարկային ընկերությունների նկատմամբ հաշվարկվում են տույժեր:
3. TELCELL վճարահաշվարկային ընկերության համար պայմանագրի համաձայն բացված է երկու հաշիվ՝ մեկ հաշիվը ծառայում է հարկային մուտքերի համար, մյուսը՝ այլ մուտքերի համար: Հարկային հաշվի մուտքերը մուտքագրվում են ՀՀ \$Ն գանձապետական հաշիվներին նույն գործառնական օրը:

Վճարումների կատարում PAYPAL համակարգով

1. Օտարերկրյա քաղաքացիները հյուպատոսական ծառայությունների վճարները կարող են կատարել Paypal վճարային համակարգի միջոցով, որը ինտեգրված է epayments.am համակարգին: Paypal համակարգի միջոցով կատարված վճարումները՝ ընդհանուր գումարներով, ՀՀ ԱԳՆ-ի կողմից մուտքագրվում են ՀՀ ֆինանսների նախարարության տարանցիկ հաշիվներին, այնուհետև՝ համակարգը սպասարկողի կողմից բացթողնելուց/գործարկելուց/ հետո՝ տարանցիկ հաշվից ավտոմատ ելքագրվում են դրանց համապատասխան՝ տարբեր արժույթներից ՀՀ դրամի փոխարկված գումարները, և մուտքագրվում են ԱԳՆ-ի համապատասխան գանձապետական հաշիվներին ՀՀ դրամով:

www.epayments.am համակարգը այժմ գտնվում է արդիականացման փուլում, ծրագրի նոր, արդիականացված տարբերակը այժմ գտնվում է մշակման/թեստավորման փուլում:

Մուտքագրվող տվյալներ

ԳՁ-ՊԲ18/Մ


Տվյալ	Նկարագրություն
Հղման համար	Համակարգի կողմից ավտոմատ գեներացվող
Գործարքի համար	Լրացվող դաշտ
Վճարմ. շարժառիթ	Բացվող ցանկ, ավտոմատ լրացվող
Դեբետ հաշիվ	Գանձապետական տարանցիկ հաշիվ
Կրեդիտ հաշիվ	Գանձապետական տարանցիկ հաշիվ
Գործարքի արժույթ	AMD, ավտոմատ լրացվող
Գործարքի ամսաթիվ	Տվյալ օրվա ամսաթիվ, ավտոմատ լրացվող
ՀԾՀ	Հի լրացվում
Հարկատուի կոդ	
Վճարողի բանկ	AM15100, ավտոմատ լրացվող
Վճարողի հաշիվ	Արարատբանկի հաշիվ, ավտոմատ լրացվող
Վճարող	Ավտոմատ լրացվող
Ստացողի հաշիվ	Գանձապետական տարանցիկ հաշիվ
Ստացողի բանկ	Ավտոմատ լրացվող
Ստացող	Ավտոմատ լրացվող
Վճարողի տվյալներ	Ավտոմատ լրացվող
Bankmail	Ավտոմատ լրացվող

Տվյալ	Նկարագրություն
Հղման համար	Համակարգի կողմից ավտոմատ գեներացվող
Գործարքի արժույթ	AMD, ավտոմատ լրացվող


	Գործարքի համար	Լրացվող դաշտ
	Վճարմ. շարժառիթ	Բացվող ցանկ, ավտոմատ լրացվող
	Գործարքի ամսաթիվ	Տվյալ օրվա ամսաթիվ, ավտոմատ լրացվող
	Դեբետ հաշիվ	Գանձապետական տարանցիկ հաշիվ
	Կրեդիտ հաշիվ	Գանձապետական հաշիվ
	Գործարքի գումար	Ավտոմատ լրացվող դաշտ
	Յոդված, գումար, անվանում	Չի լրացվում
	Յարկատուի կոդ	Չի լրացվում
	Վճարման նպատակ	Ավտոմատ լրացվող դաշտ
Ելքագրվող տվյալներ	-	
Վալիդացիա	-	

Իրավական ակտեր՝ ՀՀ կառավարության որոշում 19.04.2012թ. N 496-Ն որոշում

Պետական մարմնի հաշվի ավելացում E-payments համակարգում



Վճարումների կատարում E-payments համակարգով



Ստորաբաժանում`	Պետական բյուջեի հաշվառման բաժին
Անվանում	ԳՁ-ՊԲ19– Պետական վճարումների էլեկտրոնային համակարգի սպասարկում
Նպատակ	Պետական վճարումների էլեկտրոնային համակարգի հետ առաջացած խնդիրների լուծում
Տիրույթ	Ֆինանսների նախարարություն, պետական մարմիններ, ֆիզիկական և իրավաբանական անձինք, համակարգի սպասարկող
Դերակատարներ	Պետական բյուջեի հաշվառման բաժին, պետական մարմիններ, ֆիզիկական և իրավաբանական անձինք, համակարգի սպասարկող, վճարահաշվարկային այլ համակարգեր/տերմինալներ/, բանկեր
Ընթացք 1	<ol style="list-style-type: none"> ՖՆ պետական բյուջեի հաշվառման բաժնի մասնագետը պետական վճարումների էլեկտրոնային համակարգի (այսուհետ` e-payments համակարգ) կառավարումը իրականացնում է համակարգի ադմինստրատորի միջավայրում: Բաժնի մասնագետը կարող է կատարել հետևյալ գործառնությունները ադմինիստրատորի միջավայրում. <ul style="list-style-type: none"> Ծառայություններ բաժնում ավելացնում, խմբագրում, հեռացնում է պետական մարմինների հաշվեհամարները` հիմք ընդունելով ստացված գրությունները: Օպերատորներ բաժնում ավելացնել, խմբագրել, հեռացնել պետական մարմինների օգտվողներին: Ադմինիստրատորներ բաժնում ավելացնել, խմբագրել, հեռացնել համակարգի խոր ադմինիստրատոր: Փոխել թարմացնել համակարգի ցանկացած օգտագործողի գաղտնաբառ: Այնուհետև ցանկացած օգտվող կարող է համակարգից փոփոխել իրեն տրամադրված գաղտնաբառը: Իրականացնել փնտրում ըստ ընտրանքների (20 նիշանոց ծածկագիր, ծառայության անվանում, հաշիվ, ամսաթիվ /սկսած և մինչև/, գումար, կարգավիճակ, քաղաքացիություն, վճարողի անուն, անվանում, վճարման աղբյուր, գերատեսչություն), ինչպես նաև արտահանել \$այլեր .xls ձևաչափով: Վճարումներ բաժնից տեսնել, փնտրել, ստուգել e-payments համակարգով կատարված վճարումները /որոնց համար գերենացվել է 20-նիշանոց ծածկագիր/: Բաժնի մասնագետը պատասխանում է ՀՀ քաղաքացիների, իրավաբանական անձանց և պետական մարմինների հարցումներին կատարված վճարումների և դրանց առնչվող վերաբերյալ` տալով համապատասխան լուծումներ իր իրավասության շրջանակներում: Ըստ անհրաժեշտության բաժնի աշխատակիցը հարցի կարգավորման համար դիմում է համակարգը սպասարկող ընկերությանը կամ ուղորդում է դիմողին համապատասխան մարմին կամ բանկ: Բաժնի մասնագետը յուրաքանչյուր ամսվա կտրվածքով ստանում և ստուգում է վճարահաշվարկային կազմակերպությունների տերմինալներով կատարված վճարումների վերաբերյալ փոխհաշվարկների

ստուգման ակտերը: Ակտերում արտացոլվում է հաշվետու ամիսը, հավաքագրված գումարը e-payments համակարգով, մարված պարտավորությունը, մարված պարտավորություն /հարկեր/:

Մուտքագրվող տվյալներ

ԳՁ-ՊԲ19/Մ

Պետական մարմնի հաշվի ավելացում

Տվյալ	Նկարագրություն
Բաժին	Բացվող ցանկ, օր` տուրքեր, տուգանքներ, ծառայության վճար
Տեսակ	Բացվող ցանկ, օր` լիցենզիաներ, նոտարական ծառայություն, տեղական տուրքեր, այլ եկամուտներ: Վճարման տեսակի/խմբի ընտրությունը կատարվում է բյուջետային բլոկի հետ համաձայնեցված կարգով, անհրաժեշտության դեպքում բացվում է նոր խումբ համակարգը սպասարկողի կողմից
Չափվ	Լրացվող դաշտ, պետական մարմնի գանձապետական հաշվի համար
Ծառայության անվանում /հայերեն, ռուսերեն, անգլերեն/	Լրացվող դաշտ պետական մարմնի գրության հիման վրա
Իրավական հիմք	Լրացվող դաշտ պետական մարմնի գրության հիման վրա
Ունի հաստատման կարիք Իրավաբանական անձինք Անհատ ձեռներեց Ֆիզիկական անձ	Այո, ոչ , նշվող դաշտ Նշվում է, թե ովքեր կարող են վճարում կատարել
Տարբերակ	Ընտրովի դաշտ` Գերատեսչություն, համայնք
Գերատեսչություն	Ընտրովի դաշտ
Փոխկապակցված ծառայություն	Լրացվում է հյուպատոսական ծառայությունների դեպքում
Հյուպատոսական	Բացվող ցանկ

Գումար	Լրացվող դաշտ /ըստ անհրաժեշտության/
Գումարի չափի նկարագրություն	Լրացվող դաշտ

Օպերատորներ


Տվյալ	Նկարագրություն
Անուն, ազգանուն	Լրացվող դաշտ ըստ գրության
Ծածկանուն	Ավտոմատ գեներացվող դաշտ
Էլ. փոստ	Լրացվող դաշտ
Գաղտնաբառ	Ավտոմատ գեներացվող դաշտ
Տիպ	Բացվող ցանկ, օպերատոր կամ վիճակագրություն Օպերատորը ունի գործարքը հաստատելու հնարավորություն Վիճակագրությունը ունի գործարքը դիտելու հնարավորություն
Պատկանելիություն	Բացվող ցանկ՝ Գերատեսչություն, համայնք, հյուպատոսություն
Գերատեսչություն	Բացվող ցանկ
Թույլ տալ միայն հետևյալ հաշիվները	Բացվող ցանկ

Ադմինիստրատոր

Տվյալ	Նկարագրություն
Անուն, ազգանուն	Լրացվող դաշտ ըստ գրության
Ծածկանուն	Ավտոմատ գեներացվող դաշտ
Տիպ	Բացվող ցանկ՝ Ադմինիստրատոր, վիճակագրություն, օպետարոր
Գաղտնաբառ	Լրացվող դաշտ

Ելքագրվող տվյալներ	-
Վալիդացիա	-

Իրավական ակտեր՝ ԶՅ կառավարության որոշում 19.04.2012թ. N 496-Ն որոշում



Ստորաբաժանում՝	Պետական բյուջեի հաշվառման բաժին
Անվանում	ԳԶ-ՊԲ20- ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից ներմուծման մաքսատուրքերի (ինչպես նաև հակազնազցման տուրքերի) գումարների հաշվեգրում, բաշխում և փոխանցում անդամ պետությունների բյուջեներ
Նպատակ	ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից հավաքագրված մաքսատուրքի գումարների (ինչպես նաև հակազնազցման տուրքերի) բաշխում անդամ պետությունների միջև
Տիրույթ	Ֆինանսների նախարարություն, ՊԵԿ, ԵԱՏՄ անդամ պետություններ, կենտրոնական բանկ
Դերակատարներ	Պետական բյուջեի հաշվառման բաժին, LS Finance
Ընթացք 1	<ol style="list-style-type: none"> 1. Գործընթացը ամբողջությամբ իրականացվում է Էլեկտրոնային եղանակով «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 5-րդ և 8-րդ Հավելվածներով սահմանված կարգով: 2. Ներմուծման մաքսատուրքի գումարները, ինչպես նաև հակազնազցման տուրքերը հավաքագրվում են այդ նպատակով բացված գանձապետական հաշիվներին և յուրաքանչյուր աշխատանքային օրվա դրությամբ կատարվում է հավաքագրված մաքսատուրքի գումարների, ինչպես նաև հակազնազցման տուրքերի, բաշխում ԵԱՏՄ անդամ պետությունների միջև՝ ըստ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի Հավելված 5-ով սահմանված համամասնությունների (բաշխման տոկոսների): 3. Մինչև ԵԱՏՄ անդամ պետությունների միջև ըստ սահմանված տոկոսների ներմուծման մաքսատուրքի գումարների բաշխումը հավաքագրված մաքսատուրքի գումարից կատարվում է վերադարձի ենթակա գումարի սառեցում: Վերադարձի գործարքը ձևավորվում է ՊԵԿ-ի կողմից Client Treasury համակարգում: 4. Յուրաքանչյուր գործառնական օրվա փակման ժամանակ LS Finance համակարգը ավտոմատ կերպով մաքսատուրքի հաշվին հաշվեգրված գումարը, ինչպես նաև հաշվանցված գումարը, տեղափոխում է այդ նպատակով բացված տարանցիկ հաշվին, այնուհետև ավտոմատ հաշվարկվում և սառեցնում/պակասեցնում է ՊԵԿ-ի կողմից ձևավորված գործարքով վերադարձման ենթակա գումարը, որից հետո ձևավորվում է ԵԱՏՄ երկրների միջև բաշխման ենթակա գումարը (Հաշվետվության տող 8): Այլ պարտավորությունների մարմանն ուղղված հաշվանցումներ չեն իրականացվում, օրենսդրությամբ նախատեսվելու դեպքում նախքան բաշխումը գումարից ենթակա է նվազեցման նաև վերջիններիս գումարը: 5. Գործառնական օրը փակելու ընթացքում բաշխման ենթակա գումարները փոխանցվում են տարանցիկ հաշիվներին տոկոսային համամասնություններով: Օրը փակվելուց հետո ժամը 10:10 -ին գումարները ավտոմատ փոխանցվում են ԿԲ-ում ԵԱՏՄ անդամ երկրների համար բացված դրամային հաշիվներին (յուրաքանչյուր անդամ պետության համար ԿԲ-ում բացված է մեկ հաշիվ՝, որին փոխանցվում են





մաքսատուրքի և հակազնագցման) գումարները: Հայաստանի մասնաբաժինը մուտքագրվում է պետական բյուջեի մաքսատուրքի և հակազնագցման եկամտային հաշիվներին: LS Finance համակարգը հրահանգը կրկնում է այնքան, քանի դեռ տարանցիկ հաշիվների մնացորդները չեն զրոյացվել: Սա արվում է այն նպատակով, որ եթե առկա է վերոնշյալ ժամին որևէ խոչընդոտ /օրը դեռ փակ չէ և այլն/, գումարների փոխանցումը ապահովելու համար: Այս գործարքի շրջանակներում ավտոմատ կերպով փոխանցվում են նաև վերադարձի գումարները վճարողներին՝ ըստ ՊԵԿ-ի կողմից ձևավորված տվյալների: Պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակցի կողմից ստուգվում է ավտոմատ փոխանցումը՝ BankMail-ի GO հերթի և ստացված ՀՏ900 հաղորդագրությունների միջոցով:

6. Նույն գործընթացը իրականացվում է ԵԱՏՄ անդամ մյուս պետություններում: Հայաստանի մասնաբաժինը մինչև տվյալ օրվա ժամը 14:00-ն պետք է փոխանցվի տվյալ անդամ պետության Կենտրոնական բանկում Հայաստանի համար բացված համապատասխան արտարժույթային հաշիվներին:
7. Յուրաքանչյուր անդամ պետության Կենտրոնական բանկը սահմանում է իր ազգային արժույթի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեք, որից հետո տվյալները փոխանցվում են անդամ պետությունների ԿԲ-ների միջև: ՖՆ պետական բյուջեի հաշվառման բաժինը BankMail-ի 900 հաղորդագրությամբ՝ ԵԱՏՄ անդամ պետություններից փոխարժեքների մասին տեղեկատվությունը ստանալուց հետո տվյալները ներմուծում է LS Finance համակարգի համապատասխան տեղեկատուի մեջ առնվազն մինչև ժամը 15:00:
8. ԵԱՏՄ անդամ պետության Կենտրոնական բանկը բաշխման/փոխանցման ենթակա ընդհանուր գումարը (մաքսատուրք և հակազնագցման տուրք) իր ազգային արժույթից վերածում է ԱՄՆ դոլարի և փոխանցում է մյուս անդամ պետությանը տեղեկություն հաշվարկված գումարի վերաբերյալ, փաստացի փոխանցվում է միմիայն դոլարային արտահայտությամբ դրական տարբերությունը: ՀՀ կենտրոնական բանկը յուրաքանչյուր երկրի մասով դոլարով արտահայտված գումարը փոխարկում է ՀՀ դրամի և մուտքագրում գանձապետական միասնական հաշվին՝ հաշվետու օրվանից հետո երրորդ աշխատանքային օրը: Հայաստանի գանձապետական միջանկյալ հաշվին գումարը մուտքագրվում է ՀՀ դրամով՝ տվյալ օրվա ՀՀ ԿԲ-ի փոխարժեքով BankMail-ի 910 հաղորդագրությանը համապատասխան՝ պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակցի կողմից: Միջանկյալ հաշիվներից /անկախ գումարի մուտքագրման հանգամանքից/ յուրաքանչյուր օր ժամը 15:30-ին գումարները բաշխվում են պետական բյուջեի ըստ երկրների համապատասխանաբար մաքսատուրքի և հակազնագցման հաշիվներին՝ ավտոմատ կերպով տեղեկատուի փոխարժեքներով փոխարկումներն իրականացնելով յուրաքանչյուր երկրից SWIFT-ով ստացված արտահաշվեկշռային հաշիվների նախորդ օրվա մնացորդներին համապատասխան: 15:30-ից

	<p>հետո պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը ստուգում է տարանցիկ հաշիվների մուտքերի և ելքերի համապատասխանությունը:</p> <p>9. Այն անդամ պետությունը, որը մյուս անդամ պետություններին չի փոխանցել ներմուծման մաքսատուրքերի կամ հակազնագցման տուրքի բաշխված գումարները, այդ մյուս անդամ պետություններին կետանցի համար գոյացած ամբողջ գումարի դիմաց վճարում է տոկոսներ՝ կետանցի յուրաքանչյուր օրացուցային օրվա համար: Ուշացումից հետո երրորդ օրը կողմերը կարող են կասեցնել փոխանցումները տվյալ երկրին: Կասեցման դեպքում տոկոսներ չեն հաշվարկվում և վճարվում:</p> <p>10. ԵԱՏՄ երկու անդամ պետությունների միջև փոխհաշվարկների իրականացման աշխատանքային օր է համարվում այն օրը, որը միաժամանակ աշխատանքային օր է համարվում տվյալ երկու անդամ պետությունների համար և ԱՄՆ-ի համար:</p> <p>11. ԵԱՏՄ անդամ պետության լիազոր մարմինը յուրաքանչյուր օր ոչ ուշ քան տեղական ժամանակով ընթացիկ օրվա 16:00-ն մյուս անդամ պետությունների լիազոր մարմիններ է ուղարկում Յաշվետվություններ մաքսատուրքի և հակազնագցման տուրքերի մասով (ներմուծված մաքսատուրքի գումարների, հաշվանցված և վերադարձված գումարների, անդամ պետությունների միջև բաշխման ենթակա գումարների, այլ անդամ պետությունների արտարժույթային հաշիվներին բաշխված գումարների և այլն.):</p> <p>12. ՖՆ պետական բյուջեի հաշվառման բաժինը Յաշվետվությունները արտահանում է LS Finance համակարգից: Արտահանված հաշվետվությունները ստուգվում են, ստորագրվում վարչության պետի կողմից և ուղարկվում համապատասխան անդամ պետությունների լիազոր մարմնի Էլ. փոստի հասցեներին:</p> <p>13. ՖՆ պետական բյուջեի հաշվառման բաժինը ստանում է նույնատիպ Յաշվետվություններ այլ անդամ պետություններից և իրականացնում է ստացված հաշվետվությունների ուսումնասիրություն, տվյալների համադրում:</p> <p>14. ԵԱՏՄ անդամ երկրների տվյալների միջև անհամապատասխանությունների առկայության դեպքում դրանք ճշգրտվում են և արձանագրվում լիազոր մարմինների միջև:</p>
<p>Մուտքագրվող տվյալներ</p>	<ul style="list-style-type: none"> - Եվրասիական տնտեսական միության կոլեգիայի 02.12.2014թ. N 222 որոշմամբ հաստատված հաշվետվություն հաշվեգրված և բաշխված մաքսատուրքի գումարների վերաբերյալ - Եվրասիական տնտեսական միության կոլեգիայի 18.12.2014թ. N 240 որոշմամբ հաստատված հաշվետվություն հակազնագցման տուրքերի գումարների վերաբերյալ

Ելքագրվող տվյալներ	<ul style="list-style-type: none"> - Եվրասիական տնտեսական միության կոլեգիայի 02.12.2014թ. N 222 որոշմամբ հաստատված հաշվետվություն հաշվեգրված և բաշխված մաքսատուրքի գումարների վերաբերյալ - Եվրասիական տնտեսական միության կոլեգիայի 18.12.2014թ. N 240 որոշմամբ հաստատված հաշվետվություն հակազնագցման տուրքերի գումարների վերաբերյալ
Վալիդացիա	-

Իրավական ակտեր՝ Եվրասիական տնտեսական միության մասին 29.05.2014թ. պայմանագիր, Չավելված 5, Չավելված 8



Ստորաբաժանում	Պետական բյուջեի հաշվառման բաժին
Անվանում	ԳԶ-ՊԲ21- ԲԳԿ-ների կողմից ֆինանսավորման հայտերի ներկայացում
Նպատակ	Ծախսերի ֆինանսավորում
Տիրույթ	Ֆինանսների նախարարություն, ԲԳԿ
Դերակատարներ	Պետական բյուջեի հաշվառման բաժին, ծախսերի ֆինանսավորման վարչություն
Ընթացք 1	<ol style="list-style-type: none"> 1. ԲԳԿ-ների կողմից ֆինանսավորման հայտերը ներկայացվում են բացառապես էլեկտրոնային եղանակով՝ Client Treasury համակարգի միջոցով: 2. ԲԳԿ-ները ֆինանսավորման հայտերը կարող են ներկայացնել տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով և եռամսյակային համամասնություններով ըստ տնտեսագիտական դասակարգիչների սահմանների շրջանակներում: 3. ԲԳԿ-ի համապատասխան լիազորություն ունեցող աշխատակիցը Client Treasury համակարգով ստեղծում է Հայտ՝ լրացնելով անհրաժեշտ դաշտերը և հաստատում գործարքը: Client Treasury համակարգի կողմից իրականացվում է հսկում ըստ տնտեսագիտական դասակարգիչների հաստատված եռամսյակային համամասնությունների հետ և եթե հայտի գումարը գերազանցում է սահմանված պլանը, ապա ծրագիրը տալիս է սխալի հաղորդագրություն: Այնուհետև հայտը հաստատվում է երկրորդ կարգի ստորագրության լիազորություն ունեցող աշխատակցի կողմից, այնուհետև՝ առաջին կարգի լիազորություն ունեցող աշխատակցի կողմից: ԲԳԿ-ն կարող է Client Treasury համակարգով նվազեցնել կամ չեղարկել արդեն ներկայացված հայտը: 4. LS Finance ծրագիրը հաջորդ աշխատանքային օրը ամփոփում է ԲՍԿ-ների կողմից նախորդ օրվա դրությամբ ստեղծված պարտավորությունները և ԲԳԿ-ների կողմից ներկայացված հայտերը, որից հետո պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը ձևավորում է միջգանձապետական փոխանցագիր և ամփոփ բյուջետային փոխանցագիր: Ծախսերի ֆինանսավորման վարչությունից հաստատում ստանալուց հետո, պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը հաստատում է ամփոփ բյուջետային փոխանցագիրը, այնուհետև՝ միջգանձապետական փոխանցագիրը, որից հետո գումարը ավտոմատ փոխանցվում է ընդհանուր ռեսուրսների հաշվից ԲԳԿ-ի հաշվին, և ԲԳԿ-ի հաշվից ԲՍԿ-ի հաշվին (Մանրամասն ներկայացված է ԳԶ-ՊԲ15– Ամփոփ բյուջետային փոխանցագրերի ձևակերպում գործընթացում):

5. Եթե ծախսերի ֆինանսավորման վարչությունից ստացված տեղեկատվության հիման վրա ԲԳԿ-ին հատկացվում է ֆինանսավորում առանց պարտավորության ձևավորման, ապա ԲԳԿ-ի հաշվից գումարի փոխանցումը ԲՍԿ-ի հաշվին կատարելու համար ԲԳԿ-ի համապատասխան լիազորություն ունեցող աշխատակիցը Client Treasury համակարգով ձևակերպում է 402 Ծախս գործարքը (դաշտերը ներկայացված են ստորև): Գործարքը հաստատվում է կատարող աշխատակցի կողմից, այնուհետև երկրորդ կարգի և առաջին կարգի ստորագրության իրավունք ունեցող աշխատակիցների կողմից:

Մուտքագրվող տվյալներ

ԳՁ-ՊԲ21/Մ
Ֆինանսավորման հայտ



Տվյալ	Նկարագրություն
Ամսաթիվ	Ավտոմատ լրացվող դաշտ, տվյալ օրվա ամսաթիվը
Ջաշիվ	Բացվող ցանկ, ծախսային ծրագրի/միջացառման հաշիվ
Տնտեսագիտական հոդված	Բացվող ցանկ
Գումար	Լրացվող դաշտ, լրացվում է ըստ տնտեսագիտական դասակարգիչների

Ծախս /402/

Տվյալ	Նկարագրություն
Ջղման համար	Ջամակարգի կողմից ավտոմատ լրացվող դաշտ
Գործարքի արժույթ	Ջամակարգի կողմից ավտոմատ լրացվող դաշտ
Գործարքի համար	Լրացվող դաշտ
Վճարման շարժառիթ	Ջամակարգի կողմից ավտոմատ լրացվող դաշտ, բացվող ցանկ
Գործարքի ամսաթիվ	Ջամակարգի կողմից ավտոմատ լրացվող դաշտ, տվյալ օրվա ամսաթիվ
Դեբետ հաշիվ	ԲԳԿ-ի հաշիվ
Կրեդիտ հաշիվ	ԲՍԿ-ի հաշիվ

	Գործարքի գումար	Լրացվող դաշտ
	Ջողված, գումար, անվանում	Լրացվող դաշտ
	Ջարկատուի կոդ	Չի լրացվում
	Վճարման նպատակ	Լրացվող դաշտ
Ելքագրվող տվյալներ	ԳՁ-ՊԲ21/Ե	
Վալիդացիա	Ֆինանսավորման հայտի ստուգում եռամսյակային համամասնությունների հետ Ստուգում բյուջեի պլանի հետ	

Իրավական ակտեր՝ ՅՅ կառավարության 15.06.2018թ. 706-Ն որոշում




Ստորաբաժանում	Պետական բյուջեի հաշվառման բաժին
Անվանում	ԳՁ-ՊԲ22- Եկամտային հարկի վերադարձ
Նպատակ	Եկամտային հարկի վերադարձ ֆիզիկական անձանց
Տիրույթ	Ֆինանսների նախարարություն, ՊԵԿ, ֆիզիկական և իրավաբանական անձինք
Դերակատարներ	Պետական բյուջեի հաշվառման բաժին
Բազմընթացք	Ոչ
Ընթացք 1	<p>Եկամտային հարկի վերադարձ հիպոտեքային վարկի սպասարկման շրջանակներում</p> <ol style="list-style-type: none"> 1. Ֆիզիկական անձը հաշվետու եռամսյակի ավարտից հետո, օրենքով սահմանված կարգով, ՊԵԿ Ե ներկայացնում եկամտային հարկի վերադարձի էլեկտրոնային դիմում վճարված տոկոսների մասով: 2. ՊԵԿ-ը իր համակարգերի միջոցով ստուգում է ստացված դիմումների ամբողջականությունը և համապատասխանությունը օրենքով սահմանված պահանջներին: Եթե դիմումում առկա է անհամապատասխանություն, ապա ՊԵԿ-ը էլեկտրոնային եղանակով մերժում է դիմումը՝ այդ մասին տեղեկացնելով վարկառու ֆիզիկական անձին: Եթե դիմումը բավարարում է օրենքով սահմանված պահանջներին, ՊԵԿ-ը ընթացք է տալիս դիմումին: 3. Դիմումը հաստատվելուց հետո էլեկտրոնային եղանակով ընդհանուր ռեսուրսներ հաշվից անհրաժեշտ գումարի չափով գումարը ավտոմատ փոխանցվում է եկամտային հարկի հաշվին (900005600136)՝ 707 ներքին դեբետային գործարքով: Այնուհետև ներքին դեբետային գործարքով գումարը ավտոմատ տեղափոխվում է տարանցիկ հաշվեհամարին (900000000399): 4. Տարանցիկ հաշվից գումարն անմիջապես ավտոմատ փոխանցվում է շահառուի բանկային հաշվին՝ անցնելով BANKMAIL համակարգի համապատասխան հերթերով: 5. Եթե որևէ փոխանցում մերժվում է բանկի կողմից շահառուի տվյալների ոչ ամբողջական կամ ոչ ճշգրիտ լինելու դեպքում, ապա գումարը մուտքագրվում է տարանցիկ հաշվին: Այդ դեպքերը ուսումնասիրվում են ՊԵԿ-ի կողմից և կրկին փոխանցվում բանկ ճիշտ վավերապայմաններով: <p>Եկամտային հարկի վերադարձ ուսանողներին</p> <ol style="list-style-type: none"> 1. Ֆիզիկական անձը հաշվետու ուսանողական տարվա ավարտից հետո, օրենքով սահմանված կարգով, ՊԵԿ Ե ներկայացնում եկամտային հարկի վերադարձի դիմում վճարված եկամտային հարկի մասով:

2. ՊԵԿ-ը իր համակարգերի միջոցով ստուգում է ստացված դիմումների ամբողջականությունը և համապատասխանությունը օրենքով սահմանված պահանջներին: Եթե դիմումում առկա է անհամապատասխանություն, ապա ՊԵԿ-ը մերժում է դիմումը՝ այդ մասին տեղեկացնելով ֆիզիկական անձին: Եթե դիմումը բավարարում է օրենքով սահմանված պահանջներին, ՊԵԿ-ը ընթացք է տալիս դիմումին:
3. ՊԵԿ-ը ֆիզիկական անձանց վերադարձման ենթակա եկամտային հարկի գումարների մասով կազմում է ամփոփ վճարման հանձնարարական .xls ֆայլի ձևաչափով, որը գրությամբ ուղարկում է ՀՀ ՖՆ պետական բյուջեի հաշվառման բաժին:
4. Պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը վճարման հանձնարարականի տվյալները տեղափոխում է LSOFT ընկերության կողմից մշակված հատուկ ձևաչափով .xls ֆայլի մեջ ներառելով հետևյալ դաշտերը՝ անուն և ազգանուն, անձնագիր, բանկային հաշվեհամար, տարանցիկ հաշիվը, գումար, ժամանակահատվածը, եզրակացության համարը: Աշխատակիցը կատարում է որոշ տվյալների ֆորմատի փոփոխություն:
5. Այնուհետև աշխատակիցը ընդհանուր ռեսուրսներ հաշվից անհրաժեշտ գումարի չափով փոխանցում է կատարում եկամտային հարկի հաշվին (900005600136)՝ 707 ներքին դեբետային գործարքով: Այնուհետև ներքին դեբետային գործարքով գումարը տեղափոխվում է տարանցիկ հաշվեհամարին (900000000381):
6. Տարանցիկ հաշվին գումարի մուտքագրումից հետո աշխատակիցը LS Finance ծրագրի Խնդիր՝ հայտեր բաժնից կատարում է .xls ֆայլի ներմուծում: Եթե հանրագումարները և ֆայլով ներմուծված բոլոր տվյալները ճշգրիտ են և ըստ սահմանված ձևաչափի, ապա ծրագիրը ավտոմատ ձևավորում է 201 էլեկտրոնային փոխանցում գործարքը յուրաքանչյուր ստացողի համար և կատարում փոխանցումը:
7. Եթե առկա է որևէ տվյալի սխալ, ապա ծրագիրը տալիս է սխալի հաղորդագրություն: Աշխատակիցը ստուգում է սխալի տեսակը, եթե սխալը առաջացել է որևէ տվյալի ոչ ճշգրիտ ֆորմատի պատճառով, ապա աշխատակիցը ուղղում է սխալը և շարունակում է նույն գործընթացը: Եթե սխալը վերաբերում է ստացողի բանկային հաշվեհամարի ոչ լիարժեք լինելուն, ապա աշխատակիցը .xls ֆայլից հեռացնում է տվյալ վարկառուի տվյալները՝ այդ մասին գրությամբ տեղեկացնելով ՊԵԿ-ին, թարմացնում է հանրագումարը ֆայլում, կատարում է գործարքի ուղղում՝ 900000000381 տարանցիկ հաշվից պակասեցված գումարը հետ տեղափոխելու համար, և կրկին կատարում է ֆայլի ներմուծում:
8. Փոխանցումը կատարվում է ֆիզիկական բանկային հաշվեհամարներին:
9. Եթե որևէ փոխանցում մերժվում է բանկի կողմից շահառուի տվյալների ոչ ամբողջական կամ ոչ ճշգրիտ լինելու դեպքում, ապա գումարը մուտքագրվում է տարանցիկ հաշվին: Այդ դեպքերը ուսումնասիրվում


	<p>են պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակցի կողմից: Աշխատակիցը գրությամբ դիմում է ՊԵԿ-ին՝ տեղեկացնելով ֆիզիկական անձի տվյալների ոչ ամբողջական և ոչ ճշգրիտ լինելու մասին:</p> <p>10. ՊԵԿ-ից ճշտված տվյալները ստանալուց հետո պետական բյուջեի հաշվառման բաժնի աշխատակիցը միջոցները փոխանցում է ֆիզիկական անձի հաշվին միջանկյալ հաշվից առանձին գործարքով (201 էլեկտրոնային գործարքով):</p>																
<p>Մուտքագրվող տվյալներ</p>	<p>ԳՁ-ՊԲ22/Մ</p> <table border="1" data-bbox="562 347 2056 1013"> <thead> <tr> <th data-bbox="562 347 1084 408">Տվյալ</th> <th data-bbox="1084 347 2056 408">Նկարագրություն</th> </tr> </thead> <tbody> <tr> <td data-bbox="562 408 1084 512">Ֆիզիկական անձի անուն, ազգանուն</td> <td data-bbox="1084 408 2056 512">Վարկառու կամ ուսանող</td> </tr> <tr> <td data-bbox="562 512 1084 576">ՀԾՅ</td> <td data-bbox="1084 512 2056 576"></td> </tr> <tr> <td data-bbox="562 576 1084 679">Ժամանակահատվածը</td> <td data-bbox="1084 576 2056 679">Որին վերաբերում է վերադարձվող գումարը Ուսանողների դեպքում՝ տարի</td> </tr> <tr> <td data-bbox="562 679 1084 783">Եկամտային հարկի հաշվեհամարը</td> <td data-bbox="1084 679 2056 783">Որից պետք է վերադարձվի գումարը</td> </tr> <tr> <td data-bbox="562 783 1084 887">Ստացողի բանկի անվանումը և հաշվեհամարը</td> <td data-bbox="1084 783 2056 887"></td> </tr> <tr> <td data-bbox="562 887 1084 951">Գումարի չափը</td> <td data-bbox="1084 887 2056 951"></td> </tr> <tr> <td data-bbox="562 951 1084 1013">Եզրակացության համար</td> <td data-bbox="1084 951 2056 1013"></td> </tr> </tbody> </table>	Տվյալ	Նկարագրություն	Ֆիզիկական անձի անուն, ազգանուն	Վարկառու կամ ուսանող	ՀԾՅ		Ժամանակահատվածը	Որին վերաբերում է վերադարձվող գումարը Ուսանողների դեպքում՝ տարի	Եկամտային հարկի հաշվեհամարը	Որից պետք է վերադարձվի գումարը	Ստացողի բանկի անվանումը և հաշվեհամարը		Գումարի չափը		Եզրակացության համար	
Տվյալ	Նկարագրություն																
Ֆիզիկական անձի անուն, ազգանուն	Վարկառու կամ ուսանող																
ՀԾՅ																	
Ժամանակահատվածը	Որին վերաբերում է վերադարձվող գումարը Ուսանողների դեպքում՝ տարի																
Եկամտային հարկի հաշվեհամարը	Որից պետք է վերադարձվի գումարը																
Ստացողի բանկի անվանումը և հաշվեհամարը																	
Գումարի չափը																	
Եզրակացության համար																	
<p>Ելքագրվող տվյալներ</p>	<p>ԳՁ-ՊԲ22/Ե 201 գործարք, էլեկտրոնային փոխանցում</p>																
<p>Վալիդացիա</p>	<p>Բանկային հաշվեհամարների ֆորմատի ստուգում Չանրագումարների ստուգում Ֆայլի բոլոր տվյալների ֆոնտերի և ֆորմատների ստուգում</p>																

Իրավական ակտեր՝ ՅՅ հարկային օրենսգրքի 160-րդ հոդված, ՅՅ կառավարության 24.09.2015թ. 205-Ն որոշում, 24.09.2021թ. 1578-Ն որոշում

Եկամտային հարկի վերադարձ հիպոտեքային վարկի սպասարկման շրջանակներում



Եկամտային հարկի վերադարձ ուսանողներին




Ստորաբաժանում՝	Պետական բյուջեի հաշվառման բաժին
Անվանում	ԳՁ-ՊԲ23- Գնումների օրենսդրության համաձայն վճարված գումարների վերադարձ
Նպատակ	Իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից գնումների օրենսդրության համաձայն կանխիկ եղանակով վճարված ապահովումների գումարների վերադարձ
Տիրույթ	Ֆինանսների նախարարություն, պետական մարմին, ֆիզիկական և իրավաբանական անձ, ԲԶԱ
Դերակատարներ	Պետական բյուջեի հաշվառման բաժին, համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժին, գնումների քաղաքականության վարչություն
Ընթացք 1	<ol style="list-style-type: none"> 1. Իրավաբանական և ֆիզիկական անձինք գնումների գործընթացին մասնակցելիս կարող են հայտի և պայմանագրի ապահովումների գումարները վճարել կանխիկ եղանակով՝ այս նպատակով բացված համապատասխան գանձապետական հաշիվներին՝ նպատակ դաշտում նշելով մրցույթի ծածկագիրը: Հայտի ապահովման, պայմանագրի ապահովման, որակավորման ապահովման և բողոքների վճարների համար գործում են առանձին գանձապետական հաշիվներ: 2. Պայմանագրի և որակավորման ապահովումների մասով ստանձնած պարտավորությունները ամբողջ ծավալով կատարելուց հետո ֆիզիկական կամ իրավաբանական անձանց պայմանագրի/որակավորման ապահովման գումարները վերադարձնելու համար Պատվիրատու հանդիսացող մարմինը գրությամբ դիմում է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ տրամադրելով անհրաժեշտ տվյալները: Հայտի ապահովման դեպքում այդ գրությունը ներկայացվում է ընտրված մասնակցի հետ պայմանագիր ստորագրելուց հետո կամ օրենքով սահմանված այլ դեպքերում: 3. Պատվիրատուի գրությունը ուսումնասիրվում է ՖՆ պետական բյուջեի հաշվառման բաժնի և համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժնի կողմից: Համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժինը ուսումնասիրում է գրությունը, ստուգում է պայմանագրի տվյալները՝ պայմանագրի հաշվառված լինելու և կատարումը հիմնավորող փաստաթղթերի առկայությունը համակարգում: Անհամապատասխանությունների դեպքում այդ մասին տեղեկացնում է պետական բյուջեի հաշվառման բաժնին, որը իր հերթին գրությամբ տեղեկացնում է Պատվիրատուին: 4. Եթե առկա չէ անհամապատասխանություն, ապա համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժինը հաղորդագրությամբ տեղեկացնում է պետական բյուջեի հաշվառման բաժնին տվյալների ճշտության մասին: 5. Անհամապատասխանությունների դեպքում այդ մասին գրավոր տեղեկացնում է պատվիրատուին: Եթե առկա չէ անհամապատասխանություն, ապա աշխատակիցը Պատվիրատուի գրության հիման վրա 201

	<p>Էլեկտրոնային փոխանցում գործարքով կատարում է գումարի վերադարձ տվյալ ֆիզիկական/իրավաբանական անձի բանկային հաշվին:</p> <p>6. Իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից գնումների ընթացակարգերի բողոքարկումների շրջանակներում վճարված գումարները վերադարձվում են տվյալ իրավաբանական և ֆիզիկական անձին բողոք քննող անձի կողմից բողոքարկման հայտի մասնակի կամ ամբողջական բավարարման դեպքում: Տվյալ դեպքում գումարի վերադարձի գրությունը ներկայացվում է պետական բյուջեի հաշվառման բաժին և գնումների քաղաքականության վարչություն բոքող քննող անձի կողմից: Պետական բյուջեի հաշվառման բաժինը կատարում է գումարի վերադարձ գնումների քաղաքականության վարչությունից դրական կարծիք ստանալուց հետո: Անհամապատասխանությունների առկայության դեպքում գնումների քաղաքականության վարչությունը այդ մասին տեղեկացնում է պետական բյուջեի հաշվառման բաժնին, որի մասին վերջինս տեղեկացնում է բողոք քննող անձի կողմից:</p> <p>7. Եթե գումարները վերադարձման ենթակա չեն, ապա Պատվիրատուի համապատասխան գրությամբ պետական բյուջեի հաշվառման բաժինը գումարը փոխանցում է պետական բյուջեի համապատասխան եկամտային հաշիվներին 701 գործարքով:</p>
Մուտքագրվող տվյալներ	ԳՁ-ՊԲ23/Մ
Ելքագրվող տվյալներ	ԳՁ-ՊԲ23/Ե 201 գործարք, Էլեկտրոնային փոխանցում
Վալիդացիա	Չանրագումարի ստուգում


Իրավական ակտեր՝ ՀՀ հարկային օրենսգրքի 160-րդ հոդված, ՀՀ կառավարության 24.09.2015թ. 205-Ն որոշում, 24.09.2021թ. 1578-Ն որոշում

ՀՀ կառավարության 03.07.2020թ.1125-Ն որոշում

Ապահովումների վերադարձ




Բողոքարկման վճարների վերադարձ



Ստորաբաժանում	Համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժին
Անվանում	ԳԶ-ՀՊ1– Գանձապետական հաշիվների բացում համայնքների, պետական հիմնարկների և իրավաբանական անձանց համար
Նպատակ	Համայնքների, պետական հիմնարկների և իրավաբանական անձանց ստացված ֆինանսավորման և ծախսերի հաշվառում, դրամական միջոցների հաշվառում, շրջանառում
Տիրույթ	ՀՀ ֆինանսների նախարարություն, Համայնքներ, պետական հիմնարկներ և իրավաբանական անձինք
Դերակատարներ	Համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժին, բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն, LS Finance, LS Budget համակարգեր
Ընթացք 1	<ol style="list-style-type: none"> 1. Գանձապետական հաշվի բացման համար մարմինը դիմում է ներկայացնում ՀՀ ՖՆ համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժին Mullbery փաստաթղթաշարժի համակարգի միջոցով, կամ թղթային տարբերակով: Եթե դիմումը ներկայացնում է նոր գրանցված հաճախորդ, ապա դիմումին կից ներկայացվում են ՀՀ կառավարության 706-Ն որոշմամբ սահմանված կարգի 92-րդ կետով նախատեսված փաստաթղթերը: 2. ՀՀ ՖՆ համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժնի (այսուհետ՝ բաժին) աշխատակիցը ուսումնասիրում է ստացված դիմումը և կից փաստաթղթերը: 3. Գանձապետական հաշվի բացման համար անհրաժեշտ է ծրագրի/միջոցառման համապատասխան բյուջետային դասակարգման առկայությունը LS Finance համակարգում: Դրա բացակայության դեպքում, դիմումը մերժվում է՝ բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության հետ համատեղ քննարկելուց հետո: 4. Բոլոր համայնքները, պետական հիմնարկները, իրավաբանական անձինք ունեն իրենց առանձնացված գանձապետական բազաները (ըստ քաղաքների) և նոր հաշիվներ բացելիս դրանք պետք է բացվեն համապատասխան գանձապետական բազայում (օրինակ՝ ք. Ապարան 045, ք. Հրազդան՝ 012): Ելնելով հաշիվների տիպերից՝ բյուջետային, արտաբյուջետային, եկամտային և սովորական, հաշիվները բացվում են համայնքների, պետական հիմնարկների և իրավաբանական անձերի համար առանձնացված եկամտային և ծախսային համապատասխան հաշվեկշիռներով: Դիմումի մեջ նշված տվյալների և բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության կողմից LS Finance համակարգում վարվող տվյալների հետ անհամապատասխանությունների, անճշտությունների դեպքում (օր.՝ սխալ ծրագիր, միջոցառում), բաժնի աշխատակիցը դիմում է բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն անհրաժեշտ ճշգրտումներ կատարելու համար: Ճշգրտումներից հետո անհրաժեշտության դեպքում կատարվում են ուղղումներ LS Finance համակարգում:

	<p>5. Դիմումում տվյալները թերի լինելու կամ անճշտությունների առկայության դեպքում բաժնի աշխատակիցը բանավոր տեղեկացնում է դիմումատուին շտկումներ կատարելու անհրաժեշտության մասին:</p> <p>6. Տվյալները ճշգրիտ և ամբողջական լինելու դեպքում բաժնի աշխատակիցը մուտք է գործում LS Finance համակարգ և «Ներմուծում՝ Հաշիվ» բաժնից «մուտք» հրահանգով մուտքագրում է նոր հաշվի բացման համար անհրաժեշտ տվյալները և պահպանում:</p> <p>7. Եթե դիմումատուի և օգտատերերի տվյալները արդեն առկա են LS Finance համակարգում, ապա գանձապետական հաշվի բացումից հետո բաժնի աշխատակիցը LS Finance համակարգի կառավարում բաժնից դիմումում ներկայացված անձանց տալիս է նոր բացված հաշիվը կառավարելու կամ դիտելու լիազորություններ՝ Client Treasury-ի համակարգում:</p> <p>8. Եթե դիմումատուն նոր հաճախորդ է և համակարգում դեռևս չունի օգտատերեր, ապա բաժնի աշխատակիցը գրանցում է որպես նոր հաճախորդ՝ տրամադրելով նոր հաճախորդի կոդ և գրությամբ դիմում է SS վարչություն տվյալ հաճախորդին Client Treasury համակարգից օգտվելու թույլտվություն տալու և համապատասխան օգտվողներին իրավասություններ տրամադրելու համար, որից հետո բաժնի աշխատակիցը օգտվողներին տալիս է անհրաժեշտ թույլտվությունները/լիազորությունները:</p> <p>9. 1-ին և 2-րդ կարգի ստորագրությունների իրավունք ունեցող օգտվողները մուտք են գործում Client Treasury համակարգ նույնականացման քարտերով, իսկ կատարողները և դիտման հնարավորություն ունեցող անձինք կարող են համակարգ մուտք գործել նաև Client Treasury-ի համակարգի սերտիֆիկատներով:</p> <p><u>Ավանդային (դեպոզիտային) հաշիվների բացում և հաշվառում</u></p> <p>Ավանդային հաշիվները բացվում են ՀՀ կառավարության որոշման հիման վրա և օրենքով նախատեսված դեպքերում (օրինակ՝ նոտարներ)՝ նույն ընթացակարգով: Հաշվի կարգը ընտրվում է սովորական, հաշվեկշռային հաշիվը՝ 2900: Տվյալ հաշիվներով չի ներմուծվում պլան և չի իրականացվում հսկողություն: Հսկողությունը իրականացվում է միայն հաշվի մնացորդի վերաբերյալ: Ավանդային հաշիվներից կատարվում են վերադարձի գործարքներ: Client Treasury համակարգով ավանդային հաշիվներից վճարումները իրականացվում են տարբեր գործարքներով՝ արտաբյուջեի վերաբաշխում, վերադարձ, վճարման հանձնարարագիր գործարքով:</p>
<p>Մուտքագրվող տվյալներ</p>	<p>ԳՁ-ՀՊ1/Մ</p> <p>Հաշվի կարգ (բացվող ցանկ) /արտաբյուջետային, սովորական, բյուջետային, եկամտային/ Հաճախորդ /տեղեկատու/ Հաշվի բացման ամսաթիվ Արժույթ Հաշվեկշռային հաշիվ (տեղեկատու), 2730, 2720, որևէ խմբի դասակարգման համար բացված հաշիվների խումբ ըստ տեսակների</p>

	<p>Մասնաճյուղ /ավտոմատ դաշտ/ Գանձապետական հաշիվ /գեներացնում է համակարգը/ Չաշվի տիպը (բացվող ցանկ) /պասիվ, ակտիվ, ակտիվ-պասիվային/ Ծրագրի անվանում /լրացվում է համակարգի կողմից ծրագրի գործառնական դասակարգումը մուտքագրելուց հետո/ Ծրագրի լրիվ անվանում /ավտոմատ լրացվող դաշտ/ Պատասխանատու նախարարություն /լրացվող դաշտ/ Տնտեսագիտական դասակարգման հոդված /ավտոմատ գեներացվող դաշտ պետական բյուջեով Ֆինանսավորվող հաշիվների համար, 7777/ Բաժին, խումբ, դաս, ծրագիր /բյուջետային բլոկ/ Չաշվի կարգավիճակ /բաց, փակ, արգելափակված/ Չաշվի փակման ամսաթիվ /ավտոմատ լիացվող/ Չաշվի փակման պատճառ /լրացվող դաշտ/ Իրավաբանական անձանց և արտաբյուջետային հաշիվների դեպքում հոդված դաշտը լրացվում է մուտքային համապատասխան հոդված /օրինակ ՊՈԱԿ-ների համար 0066, արտաբյուջեների դեպքում՝ 0018, 0025/</p>
<p>Ելքագրվող տվյալներ</p>	<p>Գանձապետական հաշվեհամար</p>
<p>Վալիդացիա</p>	<p>Տեղեկատուների տվյալների ստուգում՝ «Կարգը» դաշտի արժեքի ստուգում «Չաշվեկշռային հաշիվ» դաշտի արժեքի հետ «Պատասխանատու նախարարություն» դաշտի արժեքի ստուգում LS Finance համակարգում բյուջետայինն դասակարգման համապատասխան պատասխանատու մարմնի հետ</p>



Ստորաբաժանում՝ Անվանում	Համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժին ԳԶ-ՀՊԶ– Ճախսերի կատարման նախահաշիվների և վճարման ժամանակացույցերի ընդունում, ստուգում և հաշվառում
Նպատակ	Համայնքների, պետական հիմնարկների և իրավաբանական անձանց նախահաշիվների ընդունում, ստուգում, հաստատում
Տիրույթ	ՀՀ ֆինանսների նախարարություն, ԲԳԿ, ԲՍԿ՝ պետական հիմնարկներ, համայնքներ և իրավաբանական անձինք
Դերակատարներ	Համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժին, LS Finance, Client Treasury համակարգեր
Ընթացք	<ol style="list-style-type: none"> 1. Գործընթացն ամբողջությամբ իրականացվում է էլեկտրոնային համակարգով: 2. Բյուջետային հատկացումների ստորադաս կարգադրիչները (ԲՍԿ) յուրաքանչյուր բյուջետային ծրագրով հաստատված նախահաշիվները և վճարման ժամանակացույցերը մուտքագրում են Client Treasury համակարգ՝ պետական բյուջեի եռամսյակային համամասնությունները հաստատելուց հետո: Նախահաշիվները կազմվում են ամսական, եռամսյակային, կիսամսյակային, ինն ամսվա և տարեկան կտրվածքով: 3. Նախահաշիվներով սահմանվում է ծախսերի եռամսյակային բաշխումը ըստ տնտեսագիտական հոդվածների, իսկ վճարման ժամանակացույցով իրականացվում է վճարումների բաշխումը տնտեսագիտական հոդվածներով՝ ըստ ամիսների՝ աճողական կարգով: Նախահաշիվի ցուցանիշները ևս մուտքագրվում են աճողական կարգով: 4. Նախահաշիվները լրացվում են Client Treasury համակարգի գործարքներ բաժնի «պլանի ներմուծում» հրահանգների միջոցով՝ ըստ տնտեսագիտական հոդվածների սկզբում մուտքագրվում են տարեկան ցուցանիշները, հետո՝ եռամսյակային, հետո՝ ամսական: Համակարգը ցուցադրում է նախորդ տարվա համար հաստատված նախահաշիվի նույն ժամանակահատվածի ցուցանիշները: 5. ԲՍԿ-ի կողմից տվյալները լրացնելուց հետո նախահաշիվը/ժամանակացույցը ստորագրվում է կատարողի կողմից, հետո՝ 2-րդ կարգի ստորագրության լիազորություն ունեցող անձի կողմից, հետո՝ 1-ին կարգի ստորագրության լիազորություն ունեցող անձի կողմից:

6. Ժամանակացույցը ներմուծելուց հետո միայն հիմնարկները ստանում են ֆինանսական պարտավորությունն ստանձնելու և հաշվից վճարումներ կատարելու իրավունք: Համակարգը թույլ չի տալիս հաշվից իրականացնել ծախսեր մինչև ներմուծված չլինի վճարման ժամանակացույցը:
7. Կապի խափանումների դեպքում ԲՍԿ-ները նախահաշիվները կարող են ներկայացնել ՀՀ \$Ն համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժին թղթային եղանակով LS Finance համակարգում մուտքագրելու համար՝ ՀՀ ֆինանսների նախարարի 23.07.2007թ. 597-Ն և 30.01.2019թ. N 26-Ա հրամաններով սահմանված ձևանմուշներով: Վճարման ժամանակացույցի ձևանմուշը սահմանվում է ՀՀ կառավարության 15.06.2018թ. 706-Ն որոշմամբ:
8. Թղթային տարբերակով նախահաշիվները և ժամանակացույցը ներկայացնելու դեպքում բաժնի աշխատակիցը ուսումնասիրում է նախահաշիվները և ժամանակացույցերը՝ դրանց օրենսդրությամբ սահմանված լրացման պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար: Ներկայացված նախահաշիվները և ժամանակացույցերը բաշխվում են հիմնարկները սպասարկող մասնագետների միջև, որոնց կողմից կատարվում է ուսումնասիրություն՝ դրանց օրենսդրությամբ սահմանված լրացման պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար: Թերություններ և/կամ անհամապատասխանությունների առկայության դեպքում նախահաշիվները և վճարման ժամանակացույցերը վերադարձվում են ԲՍԿ-ներին լրամշակման: Թերությունների բացակայության դեպքում ճշտված նախահաշիվները և վճարման ժամանակացույցերը ներմուծվում են LS Finance ծրագիր և ներկայացվում են թղթային հաստատման բաժնի պետին, որի մեկ ստորագրված/կնքված օրինակը տրամադրվում է ԲՍԿ-ին:
9. Միջծրագրային, միջհոդվածային փոփոխությունների դեպքում նախահաշիվների և ժամանակացույցերի ներկայացման գործընթացը նույն հերթականությամբ կրկնվում է: Նախահաշիվի ավելացման դեպքում նախ փոփոխվում են տարեկան ցուցանիշները, հետո՝ եռամսյակային, հետո՝ ամսական: Նախահաշիվի նվազեցման դեպքում նախ փոփոխվում են ամսական ցուցանիշները, հետո՝ եռամսյակային, հետո՝ տարեկան:
10. ՊՈԱԿ-ների դեպքում ՊՈԱԿ-ը իր նախահաշիվը մուտքագրելուց հետո իրականացնում է «Պլանի ներմուծում՝ ՊՈԱԿ» գործարքը, որով մուտքագրված նախահաշիվը ուղարկվում է վերադասի հաստատմանը:

**Մուտքագրվող
տվյալներ**

ԳՁ-ՀՊԶ/Մ

Տարի, ամիս

Հիմնարկի անվանում /տեղեկատու/

Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կողմն ըստ

բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման /տեղեկատու/

ՀՀ պետական կառավարման (տեղական ինքնակառավարման) մարմնի անվանում /տեղեկատու/

Ֆինանսավորման աղբյուրի կողմ (ՀՀ պետական բյուջե՝ 1, համայնքի բյուջե՝ 2)

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգ. ծածկագիր

Ծրագրի անվանումը

Ծրագրի կոդը

ՀՀ պետական կառավարման (ՏԻ) մարմնի կողմն ըստ բյուջետային ծախսերի գերատեսչակ.

դասակարգման

Չափման միավոր /հազ. դրամ/

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերը /տեղեկատու/

Նույն ժամանակահատվածի համար նախկինում հաստատված՝ գործող նախահաշվի ցուցանիշները

Նախահաշվում կատարված փոփոխությունները (ավելացումը՝ /+/, պակասեցումը՝ /-/)

Նախահաշվով հաստատվող ցուցանիշները այդ թվում՝ ըստ եռամսյակների (եռամսյակի ամիսների) աճողական

Իրավաբանական անձանց դեպքում

Կազմակերպության անվանում /տեղեկատու/

ՀՎՀՀ

Հասցե

Կազմակերպության տեղաբաշխման մարզի կողմն ըստ բյուջետային ծախսերի տարածքային

դասակարգման

ՀՀ պետական կառավարման մարմնի անվանումը

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգ. ծածկագիր/բաժին, խումբ

Չափման միավոր /հազ. դրամ/


Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերը /տեղեկատու/

Նախահաշիվ (ըստ եռամսյակների, ըստ կիսամյակի, ինն ամսվա, տարվա)

	Նախահաշվում փոփոխություններ /ավելացումներ, պակասեցումներ/ (ըստ եռամսյակների, ըստ կիսամյակի, ինն ամսվա, տարվա) Չաստատված /ճշտված նախահաշիվ (ըստ եռամսյակների, ըստ կիսամյակի, ինն ամսվա, տարվա)
Ելքագրվող տվյալներ	Բոլոր մուտքային տվյալները Client Treasury համակարգից արտացոլվում են LS Finance համակարգում
Վալիդացիա	Բոլոր տեղեկատուների տվյալների ստուգում Բոլոր թվային ցուցանիշների ստուգում բյուջեով հաստատված պլանի հետ

Իրավական ակտեր`

1. ՀՀ Ֆինանսների նախարարի 23.07.2007թ. 597-Ն հրաման
2. ՀՀ Ֆինանսների նախարարի 30.01.2019թ. 26-Ա հրաման
3. ՀՀ կառավարության 15.06.2018թ. 706-Ն որոշում



Ստորաբաժանում	Համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժին
Անվանում	ԳԶ-ՀՊՅ– ԲՍԿ-ներից պայմանագրերից քաղվածքների մուտքագրում/ընդունում, ստուգում, հաշվառում և հաստատում
Նպատակ	Համայնքների և պետական հիմնարկների կողմից կնքված պայմանագրերի քաղվածքների, ներառյալ վճարման ժամանակացույցերի ներմուծում Client Treasury համակարգ
Տիրույթ	ՀՀ \$ինանսների նախարարություն, ԲՍԿ՝ Համայնքներ, պետական հիմնարկներ, ՊՈԱԿ-ներ և իրավաբանական անձինք
Դերակատարներ	Համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժին LS Finance, Client Treasury համակարգեր
Ընթացք 1	<ol style="list-style-type: none"> Պետական հիմնարկի կամ համայնքի պայմանագրերից քաղվածքների ներմուծման թույլտվություն ունեցող աշխատակիցը պայմանագրից քաղվածք ներմուծելու համար մուտք է գործում Client Treasury համակարգի Պայմանագրեր բաժին: Այնուհետև ընտրում է «ժամանակացույցի ներմուծում» գործարքը: Բոլոր անհրաժեշտ դաշտերը (ներկայացված են ստորև) մուտքագրելուց և պահպանելուց հետո, աշխատակիցը նույն բաժնից կատարում է «Քաղվ. պայմ. ներմուծում»՝ բացվող պատուհանում լրացնելով բոլոր անհրաժեշտ դաշտերը (ներկայացված են ստորև): Client Treasury համակարգով պայմանագրի քաղվածք ներմուծելու դեպքում առկա է \$այլեր կցելու հնարավորություն (պայմանագիր, կանխավճարի ապահովում բանկային երաշխիքի տեսքով): Ներմուծված տվյալները պահպանվում են և հաստատվում համայնքի / պետական հիմնարկի կատարող աշխատակցի կողմից, այնուհետև՝ 2-րդ կարգի ստորագրության իրավունք ունեցող աշխատակցի կողմից, այնուհետև՝ 1-ին կարգի ստորագրության իրավունք ունեցող աշխատակցի կողմից: 1-ն կարգի ստորագրության իրավունք ունեցող անձի կողմից սխալների հայտնաբերման դեպքում գործարքը հսկման հերթից վերադարձվում է՝ կատարող աշխատակցին խմբագրման: Եթե ժամանակացույցով ներմուծվող գումարը գերազանցում է հաստատված պլանը, ապա հաստատման ժամանակ համակարգը կատարողին ցուցադրում է սխալի հաղորդագրություն՝ «գերազանցում է թույլատրելի պլանը» բովանդակությամբ: Այդ

դեպքում, աշխատակիցը պետք է Ջանրագումար բաժնից ստուգի տվյալ հոդվածի գծով թույլատրելի պլանը և վճարման ժամանակացույցը համապատասխանեցնի թույլատրելի պլանին:

3. Այն պայմանագրի քաղվածքները, որտեղ գնման ձևը նշված է «գնում չհանդիսացող» ենթակա են ստուգման և հաստատման \$Ն համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժնի կողմից: \$Ն-ի կողմից հաստատում պահանջող վերոհիշյալ քաղվածքները հայտնվում են LS Finance համակարգի «Գործարքներ` հսկում» բաժնում:
4. \$Ն համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժնում հաշվառվում են կանխավճարային պայմանագրերը (100%-ի չափով, 30%-ի չափով, կամ պայմանագրով նախատեսված չափով):
5. \$Ն համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժնի կողմից հաստատվում են կանխավճարային պայմանագրերում կատարվող փոփոխությունները:
6. \$Ն համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժնի աշխատակիցը ուսումնասիրում է հաստատում պահանջող վերոհիշյալ պայմանագրի քաղվածքները: Սխալներ չհայտնաբերելու դեպքում` լիազորված օգտատերը հաստատում է պայմանագրից քաղվածքը, իսկ սխալներ հայտնաբերելու դեպքում հսկում բաժնից հեռացնում է քաղվածքը` թողնելով սխալի հաղորդագրություն: ՀՀ \$Ն-ի կողմից հեռացված/մերժված քաղվածքները հայտնվում են ներկայացնող հիմնարկի 2-րդ կարգի ստորագրության իրավունք ունեցող օգտվողի հսկման հերթում, որը հնարավորություն ունի կամ ուղղելու քաղվածքում առկա սխալները կամ հեռացնելու այն:
7. \$Ն-ի կողմից հաստատում չեն պահանջում այն պայմանագրերի գծով քաղվածքները, որոնք հաշվառվում են \$Ն գնումների PPCM համակարգում, որտեղից տվյալները մուտք են լինում LS Finance համակարգ, որի հիման վրա մուտքագրվում է պայմանագրից քաղվածքը: Պահանջվող տվյալներում նշելով «դրական եզրակացություն» դաշտը «Այո»` իրականացվում է տվյալների նույնականացում PPCM համակարգում մուտքագրված պայմանագրի տվյալների հետ: Գործարքը 1-ին կարգի ստորագրողի կողմից հաստատվելուց հետո ավտոմատ գրանցվում է համակարգում:
8. Եթե պայմանագրով նախատեսված է գումարի վճարում կանխավճարի տեսքով, քաղվածքի «Երաշխիք» դաշտում լրացվում է «այո»:

9. ՊՈԱԿ-ների, ՅՈԱԿ-ների, համայնքների, հիմնադրամների դեպքում «դրական եզրակացություն» դաշտը չի նշվում, քանի որ իրենց կողմից կնքվող պայմանագրերը չեն հաշվառվում \$Ն-ի գնումների PPCM համակարգում:

Պայմանագրից քաղվածքի ներմուծում \$Ն-ի կողմից

1. Կապի խափանումների դեպքում համայնքը, ՊՈԱԿ-ը, հիմնադրամը, պետական հիմնարկը կարող է պայմանագրից քաղվածքը ներկայացնել \$Ն համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժին թղթային ստորագրված տարբերակով՝ համակարգ մուտքագրելու համար: Նման դեպքերում պայմանագրերից քաղվածքները բաշխվում են հիմնարկները սպասարկող մասնագետների միջև, որոնց կողմից կատարվում է ուսումնասիրություն՝ դրանց օրենսդրությամբ սահմանված լրացման պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար:
2. Թերություններ և/կամ անհամապատասխանությունների առկայության դեպքում պայմանագրի քաղվածքը վերադարձվում է ներկայացնողին լրամշակման:
3. Թերությունների բացակայության դեպքում պայմանագրից քաղվածքը ներմուծվում է LS Finance համակարգ:
4. \$Ն համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժնի լիազորված աշխատակիցը մուտք է գործում համակարգի «Խնդիր՝ պայմանագրեր» բաժինը, ընտրում է այն գերատեսչության հաշիվը, որի շրջանակներում պետք է մուտքագրվի տվյալ պայմանագրից քաղվածքը: «Ընտրում» պատուհանի միջոցով մուտքագրում է անհրաժեշտ տվյալները՝ հաշիվը, գանձապետարանի ստորաբաժանման համարը և սեղմում է կիրառել կոճակը: Քաղվածք պայմանագրից ներմուծումը իրականացվում է երկու փուլով՝ առաջին փուլով ներմուծվում է տվյալ պայմանագրի վճարման ժամանակացույցը՝ «1721 ժամանակացույցի ներմուծում» գործարքով: Բոլոր անհրաժեշտ դաշտերը (ներկայացված են ստորև) մուտքագրելուց հետո, աշխատակիցը սեղմում է հաստատել կոճակը: Եթե ժամանակացույցով ներմուծվող գումարը գերազանցում է հաստատված պլանին, ապա հաստատման ժամանակ համակարգը կատարողին ցուցադրում է սխալի հաղորդագրություն՝ «գերազանցում է թույլատրելի պլանը» բովանդակությամբ: Այնուհետև, երկրորդ քայլով աշխատակիցը մուտք է գործում Պայմանագրեր բաժին, կանգնում է ներմուծված ժամանակացույցի վրա և կատարում է «Քաղվ.

պայմ. ներմուծում» գործարքը: Բացվող պատուհանում լրացնում է անհրաժեշտ դաշտերը (ներկայացված են ստորև):

5. Պետական հիմնարկների դեպքում «Պայմանագրի հիմնակ. համար» դաշտը աշխատակցի կողմից լրացնելուց հետո, եթե հիմնական համարը համապատասխանում է PPCM համակարգում մուտքագրված պայմանագրի համար հետ, ապա համակարգի կողմից ավտոմատ կերպով լրացվում են քաղվածք պայմանագրերի լրացման ենթակա մյուս բոլոր դաշտերը (ՅՎՅՅ, գնման ձևը, գործընկերոջ տվյալներ, գործընկերոջ հաշվի համարը, գումարը, կնքման ամսաթիվ, պայմանագրի ավարտ): Այս ֆունկցիոնալ հնարավորությունը առկա է միայն LS Finance համակարգում:
6. Համակարգ մուտքագրված տվյալները հաստատվում են կատարող աշխատակցի կողմից, որից հետո պայմանագրից քաղվածքը, սխալների բացակայության դեպքում, գրանցվում է LS Finance և Client Treasury համակարգերում: Սխալների առկայության դեպքում (օրինակ՝ հաշվեհամարի սխալ) համակարգը թույլ չի տալիս գրանցել գործարքը:
7. Այնուհետև պայմանագրերից քաղվածքը ներկայացվում է թղթային հաստատման բաժնի պետին, որի մեկ ստորագրված/կնքված օրինակը տրամադրվում է համայնքին/պետական հիմնարկին:

Պայմանագրեր կանխավճարի մարում

1. Համակարգում հաշվառված կանխավճարային պայմանագրերից կատարվում են կանխավճարների մարումներ ինչպես Պատվիրատուի կողմից, այնպես էլ համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժնի կողմից: Այն դեպքում երբ կանխավճարի մարումը պետք է իրականացվի ընթացիկ տարում Պատվիրատուն Client Treasury համակարգով կատարում է կանխավճարի մարում գործարքը (դաշտերը ներկայացված են ստորև): Գործարքը հաստատվում է կատարող աշխատակցի կողմից, այնուհետև՝ երկրորդ կարգի ստորագրողի, այնուհետև՝ առաջին կարգի ստորագրողի կողմից:

2. Եթե կանխավճարի մարումը պետք է իրականացվի հաջորդ տարի, Պատվիրատուն գրություն է ներկայացնում համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժնի՝ կցելով հիմնավորող փաստաթղթերը դիմումով իրականացնել կանխավճարի մարում: Գրությունները բաշխվում են հիմնարկը սպասարկող մասնագետների միջև և ուսումնասիրվում: Եթե առկա չէ անհամապատասխանություն, ապա բաժնի մասնագետը LS Finance ծրագրով մուտք է գործում Պատվիրատուի պայմանագրեր բաժին, ընտրում է համապատասխան պայմանագիրը և կատարում է

փաստաթղթի ներմուծում՝ կանխավճարի մարում գործարքը՝ լրացնելով անհրաժեշտ դաշտերը և հաստատում է գործարքը:

3. Կանխավճարը վճարելուց հետո գործընկերը հաշիվ է դուրս գրում ամբողջ գումարի չափով: Տվյալ դեպքում կանխավճարի մարումը իրականացվում է ավտոմատ կերպով Հավաստագիր գործարքի միջոցով:

Պայմանագրերի դիտում
 LS Finance և Client Treasury համակարգի օգտվողները կարող են դիտել մուտքագրված պայմանագրերը և դրանց շրջանակներում մուտքագրված պարտավորությունները:

Մուտքագրվող տվյալներ

ԳՁ-ՀՊՅ/Մ
 «Ժամանակացույցի ներմուծում»

Տվյալ	Նկարագրություն
Հղման համար	Համակարգի կողմից գեներացվող դաշտ
Պայմանագրի համարը	Ստորագրված պայմանագրի համար
Պայմանագրի սկիզբը	Ամսաթիվ
Պայմանագրի ավարտը	Ամսաթիվ
Հաշիվ / Հաշվի համար	Գերատեսչության ծախսային հաշիվ Client Treasury համակարգում՝ բացվող ցանկ
Պայմանագրի գումարը	Լրացվող դաշտ
Հոդվածների ցուցակ	Տնտեսագիտական դասակարգման հոդվածներ, կարող է նշվել մեկից ավել հոդված Client Treasury համակարգում մուտքագրվում է հերթականությամբ (հոդված, գումար)

Վճարումների ժամանակացույց	Վերը նշված տողերում նշված հոդված, ժամանակահատված (ամիս), գումար
Վճարման նպատակ	Տեքստային լրացվող դաշտ

«Քաղվ. պայմ. ներմուծում»

Տվյալ	Նկարագրություն
Հաշիվ	Համակարգի կողմից ավտոմատ լրացվող դաշտ
Ստորաբաժանում	Ճախսերի ֆինանսավորման վարչություն
Անվանում	ԳԶ-ՆՏ1- Պետական բյուջեի ծախսային ծրագրերի ֆինանսավորման կազմակերպում
Նպատակ	Պետական բյուջեի ծախսերի լիարժեք և ամբողջական ֆինանսավորում, բյուջետային միջոցների արդյունավետ կառավարում
Տիրույթ	ՀՀ ֆինանսների նախարարություն, ԲԳԿ-ներ, ԲՍԿ-ներ, LS Finance, Client Treasury համակարգ
Դերակատարներ	Ճախսերի ֆինանսավորման վարչություն, գործառնական վարչություն, բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն (բյուջետային բլոկ)
Բազմընթացք	Ոչ
Ընթացք 1	<p><u>Ֆինանսավորման գործընթացի կազմակերպում /ամենօրյա ռեժիմով/</u></p> <ol style="list-style-type: none"> 1. Պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման գործառույթը սահմանված է «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրությամբ և կատարվում է ՀՀ կառավարության 15.06.18թ թիվ 706-Ն որոշմամբ սահմանված կարգով: 2. Ճախսերի ֆինանսավորման վարչության աշխատակիցը յուրաքանչյուր գործառնական օրվա սկզբին LS Finance Rep համակարգի միջոցով կազմում է պետական բյուջեի ծախսերի ամփոփ ֆինանսավորման տեղեկանք: Աշխատակիցը մուտք է գործում LS Finance Rep համակարգ և «Տեղեկատու՝ Հաշվետվություններ՝ Quick Reports» քայլերի հաջորդականությամբ ընտրում է A_0275 հաշվետվական ձևը («Ֆիլտր» դաշտ նշելու դեպքում հաշվետվությամբ արտահանվում են միայն այն հոդվածները, որոնց մասով առկա է ֆինանսավորման ելթակա գումար): Աշխատակիցը նույն ընտրացանկից նշելով A_0259 հաշվետվական ձևը կազմում է նաև աճողական ֆինանսավորման տեղեկանք: 3. Ճախսերի ֆինանսավորման վարչության աշխատացիկը ամփոփ ֆինանսավորման տեղեկանքը ձևավորելուց անմիջապես հետո այդ մասին տեղեկացնում է գործառնական վարչությանը: 4. Գործառնական վարչությունը LS Finance համակարգով ձևավորվում է ամփոփ բյուջետային փոխանցագիր և .doc ֆայլի ձևաչափով տվյալները Mulberry համակարգով ուղարկում է Ճախսերի ֆինանսավորման վարչության պատասխանատու աշխատակցին: 5. Ճախսերի ֆինանսավորման վարչությունը ստանում է LS Finance ծրագրից արտահանված .doc ձևաչափով Հայտերի վճարման ամփոփ բյուջետային փոխանցագիրը, որը ներառում է բյուջետային հատկացումների կարգադրիչների կողմից ծախսերի ֆինանսավորման նպատակով Client Treasury համակարգ ներմուծված

պարտավորությունների ամփոփման արդյունքում բոլոր ծախսային ծրագրերի գծով գանձապետական հաշիվներով նախորդ օրվա ավարտին արտացոլված ամբողջական տեղեկատվությունը: Այն պարունակում է տվյալներ բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների կողմից ներկայացված ֆինանսավորման հայտերի, ստորադաս կարգադրիչների կողմից ստանձնած պարտավորությունների, գրանցված պայմանագրերի, ծախսերի նախահաշիվների, վճարումների, թղթակցային հաշիվների մնացորդների վերաբերյալ:

6. Ֆինանսավորման տեղեկանքը արտացոլում է ըստ գերատեսչական, գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների առկա հաշվի մնացորդը, վճարման ենթակա ընդհանուր պարտավորության գումարը, ֆինանսավորման ենթակա գումարը, ԲԳԿ-ների հայտերի գումարները:
7. Ծախսերի ֆինանսավորման վարչության պատասխանատու աշխատակիցը ֆինանսավորման տեղեկանքը ուղարկում է վարչության տվյալ ոլորտի պատասխանատու մասնագետներին՝ անհրաժեշտ ստուգումներ և վերլուծություններ կատարելու համար՝ իրավական ակտերի պահանջներին, բյուջետային ծախսերի գործառնական, գերատեսչական, ծրագրային դասակարգմանը, հաստատված ցուցանիշներին և եռամսյակային համամասնությունների չափաքանակներին համապատասխան: Այդ աշխատանքները բաշխվում են վարչության աշխատողների միջև՝ հիմք ընդունելով բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինները:
8. Վարչության աշխատակիցները իրականացնում են ֆինանսավորման տեղեկանքի ըստ բյուջետային դասակարգման բաժինների ուսումնասիրություն և վերլուծություն՝ կատարելով նշումներ ֆայլում և ամփոփված տվյալները ուղարկում են վարչության պատասխանատու աշխատակցին՝ ամփոփման: Եթե ստուգումների և վերլուծությունների ընթացքում պարզվում է, որ ֆինանսավորման տեղեկանքից առկա են հեռացման հոդվածներ (օր ԲՍԿ-ի կողմից ներկայացված պարտավորության համար առկա չէ ԲԳԿ-ի հայտ, կամ պարտավորության գումարը գերազանցում է տվյալ հոդվածով բյուջեի պլանը կամ պլանի մնացորդը, ինչպես նաև ժամկետային, կամ պայմանով ծախսերը՝ (օրինակ՝ աշխատավարձի և կենսաթոշակի հոդվածներով ծախսերը, որոնք պետք է վճարվեն ամսվա սկզբին), ապա աշխատակիցը .xls ֆայլից հեռացնում է տվյալ տողերը և հեռացումների կամ պակասեցումների մասով կազմում է .doc ձևաչափով «հեռացում» անունով ֆայլ, որտեղ ներառվում են հեռացման ենթակա տվյալները՝ հիմնավորումներով: Հեռացվում են նաև այն ծախսատեսակները, որոնց հատկացումը պետք է կատարվի պետ պատվերի շրջանակներում, որոնց մասով ԲԳԿ-ն դեռևս տվյալները չի հրապարակել իր պաշտոնական վեբ կայքում: Հեռացման ենթակա են նաև մեկ ամսվա չափաքանակը գերազանցող սուբսիդիաների և դրամաշնորհների գծով պարտավորությունները: Հատուկ դեպքերում \$Ն պաշտոնատար անձի

հանձնարարականով կարող են կիրառվել օրենսդրության սահմաններում ֆինանսավորման այլ սահմանափակումներ:

9. Վարչության պատասխանատու աշխատակիցը ամփոփում է վարչության բոլոր աշխատակիցների կողմից մշակումների և վերլուծությունների արդյունքները և տվյալները ամփոփելուց հետո .xls ձևաչափով ֆինանսավորման ամփոփ տեղեկանքը ներկայացնում է վարչության պետի հաստատմանը: Վարչության պատասխանատու աշխատակիցը կապ է հաստատում ԲԳԿ-ի հետ ֆինանսավորման տեղեկանքից պակասեցված կամ հեռացված հոդվածների մասով անհրաժեշտ տվյալները փոխանցելու համար:
10. Այնուհետև վարչության պետը կամ պատասխանատու մասնագետը ստուգում է գանձապետական միասնական հաշվի մնացորդը, որը համեմատվում է օրվա ֆինանսավորման ենթակա ցուցանիշների հանրագումարի հետ: Մնացորդի բավարար լինելու դեպքում տրվում է հանձնարարարական ֆինանսավորման ընթացքը սկսելու վերաբերյալ: Հակառակ դեպքում մնացորդին համապատասխան գումարի սահմաններում ֆինանսավորվում են առաջնահերթ ծախսատեսակները, մասնավորապես՝ աշխատավարձ, սոցիալական ոլորտի ծախսեր, ռազմական ծախսեր և այլն: Այդ նպատակով վարչության պետը վերադարձնում է ամփոփ ֆինանսավորման տեղեկանքը պատասխանատու մասնագետին՝ անհրաժեշտ կրճատումները կատարելու նպատակով: Պատասխանատուն ամփոփ ֆինանսավորման տեղեկանքը ուղարկում է համապատասխան ոլորտը սպասարկող մասնագետներին՝ համապատասխան շրջաբերականով տրված կրճատումները կատարելու նպատակով:
11. Որոշտի պատասխանատուները ԲԳԿ-ների հետ բանավոր համաձայնեցնում են կրճատումները և ճշտված տեղեկանքը ուղարկում են պատասխանատու մասնագետին: Այնուհետև ամփոփ ֆինանսավորման տեղեկանքը նորից ուղարկվում է վարչության պետին:
12. Վարչության պետի հաստատումից հետո բաժնի պատասխանատու աշխատակիցը ամփոփում է հեռացումների ֆայլը .doc ձևաչափով և այն Mulberry համակարգով ուղարկում է Գործառնական վարչություն:
13. Գործառնական վարչությունը հեռացումների ֆայլի հիման վրա փոփոխում է ամփոփ բյուջետային փոխանցագիրը և ճշտված տվյալները .doc ձևաչափով Mulberry համակարգով ուղարկում է ծախսերի ֆինանսավորման վարչության պատասխանատուին:
14. Բաժնի պատասխանատուն համոզվելով, որ .xls ձևաչափով ֆինանսավորման տեղեկանքի և .doc ձևաչափով ամփոփ բյուջետային փոխանցագրի տվյալները համընկնում են, Mulberry համակարգով .doc ձևաչափով ամփոփ բյուջետային փոխանցագրի տվյալները ուղարկում է վարչության պետի հաստատմանը: Հակառակ դեպքում, եթե առկա են անհամապատասխանություններ ծախսերի ֆինանսավորման վարչության պատասխանատուն Mulberry համակարգով ֆայլը կրկին ուղարկում է

գործառնական վարչություն ճշգրտման: Այս գործընթացը շարունակվում է մինչև տվյալների ամբողջական համընկնումը:

15. Վարչության պետը հաստատում է փոխանցագիրը և ուղարկում է Mulberry համակարգով գործառնական վարչությանը:
16. Գործառնական վարչությունը ուղարկում է միջգանձապետական փոխանցագիրը և ամփոփ բյուջետային փոխանցագիրը, որից հետո դրամական միջոցները պետական ընդհանուր ռեսուրսների հաշվից փոխանցվում են ԲԳԿ-ի գանձապետական հաշվին, որից հետո ԲՍԿ-ի գանձապետական հաշվին, որից հետո ավտոմատ կատարվում են LS Finance համակարգով ձևավորված պարտավորությունները և փոխանցվում են ստացողների բանկային հաշիվներին:

Պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և ՀՀ ԱԺ ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների կորուստների փոխհատուցում

1. ՀՀ պետական բյուջեի մասին օրենքով, այնուհետև եռամսյակային համամասնություններով սահմանվում են համայնքների բյուջեներին դոտացիաների և կորուստների փոխհատուցման հատկացումները՝ ըստ մարզերի և համայնքների:
2. Ծախսերի ֆինանսավորման վարչության պատասխանատու մասնագետի կողմից կատարվում է եռամսյակային համամասնություններով հատկացումների բաշխումը ըստ ամիսների և ըստ համայնքների հաշվեհամարների /.xls ֆայլի/:
3. Յուրաքանչյուր ամսվա 25-27-ը ընկած ժամանակահատվածում իրականացվում է նշված ծրագրի ֆինանսավորման գործընթացը: Ծախսերի ֆինանսավորման վարչության պատասխանատու մասնագետը կազմում է ամփոփ բյուջետային փոխանցագիր .xls ձևաչափով, որտեղ ներառվում է տվյալ ամսվա վճարման ենթակա ընդհանուր գումարը երկու ուղղություններով՝ դոտացիաների և կորուստների: Կազմվում է նաև ամփոփ տեղեկանք .xls ձևաչափով, որը ներառում է ֆինանսավորման տվյալները ըստ համայնքների՝ նշված ուղղություններով, ինչպես նաև տեղեկանքներ ըստ համայնքների հաշվեհամարների և ֆինանսավորման ենթակա գումարների՝ ըստ ուղղությունների:
4. Ամբողջ տեղեկատվությունը բաժնի մասնագետի կողմից կազմվելուց հետո ուղարկվում է վարչության պետին՝ հաստատման: Եթե առկա են անհամապատասխանություններ, վարչության պետը ամբողջական փաթեթը վերադարձնում է մասնագետին խմբագրման: Ծղթան կրկնվում է մինչև տվյալները լինեն ճշգրիտ և ամբողջական:

5. Վարչության պետը ամբողջական փաթեթը հաստատելուց հետո Mulberry համակարգով ուղարկում է գործառնական վարչություն կատարման:
6. Գործառնական վարչությունը \$այլի հիման վրա կազմում է բյուջետային փոխանցագիրը և տվյալները .doc ձևաչափով Mulberry համակարգով ուղարկում է ծախսերի ֆինանսավորման վարչության պատասխանատուին:
7. Ծախսերի ֆինանսավորման վարչությունը թերությունների բացակայության դեպքում Mulberry համակարգով հաստատում է տվյալների ճշտությունը և կատարում է փոխանցումը:

Վարկային և դրամաշնորհային ծրագրերի համաֆինանսավորման գործընթաց

1. Ծախսերի ֆինանսավորման վարչության մասնագետի կողմից ամենօրյա ռեժիմով կատարվում է վարկային և դրամաշնորհային ծրագրերի համաֆինանսավորման հայտերի հավաքագրման և վերլուծության գործընթացը:
2. Վարկային և դրամաշնորհային ծրագրերի մասով համաֆինանսավորման գործընթացը իրականացվում է ոչ թե ըստ պարտավորությունների, այլ տվյալ ծրագրերը իրականացվող ԲԳԿ-ների կողմից Client Treasury համակարգ ներմուծված հայտերի հիման վրա:
3. Բաժնի մասնագետը LS Finance Rep ծրագրից ձևավորում է A_3259 հաշվետվության ձևը՝ նշելով հաշիվը, վարկային ծրագրերի դեպքում՝ 2703, դրամաշնորհային ծրագրերի դեպքում՝ 2704՝ նշելով համաֆինանսավորման ընտրանքը: Ձևավորված \$այլը արտահանվում է .xls ձևաչափով:
4. Արտահանված \$այլում առանձնացվում են կառավարության որոշումների նախագծերով առաջարկվող նվազեցումները, կամ արդեն իսկ կայացված որոշումներով նվազեցումները, որոնք դեռևս մուտքագրված չեն LS Finance համակարգ (այդ մասով բաժնի մասնագետը վարում է առանձնացված հաշվառում .xls \$այլի ձևաչափով):
5. Ամենօրյա աշխատանքային ռեժիմով կատարվում է յուրաքանչյուր ծրագրի վերլուծություն, հայտերի հայտնաբերում, դրանց եռամսյակային համամասնությունների չափաքանակների հետ համեմատում, համաֆինանսավորման միջոցների մնացորդների վերլուծություն:
6. Եթե ԲԳԿ-ն հայտը ներմուծել է ամբողջ եռամսյակի չափաքանակով, ապա ծախսերի ֆինանսավորման վարչության կողմից պահանջվում է գրավոր հիմնավորում: Ֆինանսավորումը կատարվում է համապատասխան հիմնավորումը ստանալուց հետո:
7. Այնուհետև ծախսերի ֆինանսավորման վարչության մասնագետը ֆինանսավորման ենթակա գումարների մասով կազմում է Էլեկտրոնային բյուջետային փոխանցագիր .xls ձևաչափով և ներկայացնում է այն գործառնական վարչություն:

8. Գործառնական վարչությունը կազմում է բյուջետային փոխանցագիր, որը .doc Ֆայլի տեսքով ուղարկում է ծախսերի ֆինանսավորման վարչություն ստուգման և հաստատման:
9. Ծախսերի ֆինանսավորման վարչության աշխատակիցը ստուգում է բյուջետային փոխանցագիրը: Սխալներ հայտնաբերելու դեպքում այդ մասին տեղեկացնում է գործառնական վարչությանը: Ծրջափուլը կրկնվում է մինչև տվյալների ամբողջական համընկնումը:
10. Ծախսերի ֆինանսավորման վարչության աշխատակիցը Mulberry համակարգով .doc ձևաչափով Ֆայլը ներկայացնում է վարչության պետի հաստատմանը:
11. Առարկություններ չունենալու դեպքում վարչության պետը Mulberry համակարգով բյուջետային փոխանցագիրը ներկայացնում է գործառնական վարչություն կատարման:

Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ միջոցառմամբ (1185-11002) ֆինանսավորում

1. Արտասահմանյան պաշտոնական գործուղումների (ապարատի պահպանման ծախսերում չնախատեսված) գծով ԲԳԿ-ն ֆինանսների նախարարություն է ներկայացնում ՀՀ վարչապետի որոշման նախագիծ՝ համապատասխան հիմնավորումներով, որի առաջին հասցեատեր է հանդիսանում բյուջետային բյուրո, իսկ անհրաժեշտության դեպքում նաև՝ ծախսերի ֆինանսավորման վարչությունը:
2. Ծախսերի ֆինանսավորման վարչության համապատասխան մասնագետը՝ հասցեատեր լինելու դեպքում ուսումնասիրում է որոշման նախագիծը և ներկայացնում է կարծիք բյուջետային բյուրոին՝ ըստ անհրաժեշտության համապատասխան տեղեկատվությամբ:
3. Ծախսերի ֆինանսավորման վարչության համապատասխան մասնագետը ստուգում է համապատասխան նախագծով առաջարկվող ֆինանսավորման հատկացման վերաբերյալ տեղեկատվությունը իր իսկ կողմից վարվող .xls ձևաչափով Ֆայլում ներառված տեղեկատվության հետ: Եթե մասնագետը պարզում է, որ նախկինում ընդունված որոշմամբ արդեն իսկ հատկացվել է ֆինանսավորումն ամբողջությամբ, ապա բյուջետային բյուրոին ներկայացնում է կարծիք, որի հիման վրա բյուջետային բյուրո մերժում է ԲԳԿ-ի կողմից առաջարկվող նախագիծը:
4. Եթե մասնագետը պարզում է, որ նախկինում ֆինանսավորում չի հատկացվել, կամ հատկացվել է մասնակի ֆինանսավորում, ապա մասնագետը բյուջետային բյուրոին ներկայացնում է կարծիք՝ համապատասխան տեղեկատվությամբ: Բյուջետային բյուրո նախագծին տալիս է դրական ընթացք:
5. Վարչապետի որոշման ընդունումից հետո ծախսերի ֆինանսավորման վարչությունը տեղեկանում է այդ մասին վարչապետի աշխատակազմից Mulberry համակարգով կամ gov.am կայքից:
6. Ծախսերի ֆինանսավորման վարչության մասնագետը հաշվառում է և գրանցում է որոշման տվյալները .xls ձևաչափով վարվող Ֆայլում /տվյալները ներկայացված են ստորև/:

7. ԲԳԿ-ն ծախսերի ֆինանսավորման վարչությունն է ներկայացնում գրություն կից հաշվարկով, որը արտացոլում է «արտասահմանյան պաշտոնական գործուղումներ 1185-11002» միջոցառմամբ ֆինանսավորման ենթակա գումարը: Գրության մեջ նշվում են որոշման բոլոր տվյալները:
8. Ծախսերի ֆինանսավորման վարչության մասնագետը ուսումնասիրում է ստացված գրությունը և կից հաշվարկը՝ ստուգվում են ՀՀ կառավարության 2335-Ն որոշմամբ սահմանված նորմատիվները, արտարժույթի փոխարժեքները, գործուղման օրերը, համոզվում է, որ հաշվարկում ներառված են միայն 1185-11002 միջոցառմամբ որոշման մեջ ներառված տվյալները: Անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում մասնագետը այդ մասին բանավոր տեղեկացնում է ԲԳԿ-ին, որից հետո ԲԳԿ-ն ներկայացնում է ճշտված հաշվարկը: Շղթան կրկնվում է մինչև տվյալները լինեն ճշգրիտ և ամբողջական:
9. Եթե ԲԳԿ-ի կողմից ներկայացված բոլոր տվյալները ճշգրիտ են և ամբողջական, ապա ծախսերի ֆինանսավորման վարչության մասնագետը Mulberry համակարգով բյուջետային բլոկին ներկայացնում է գրություն՝ ծախսերի չափաքանակ բացելու վերաբերյալ կից ներկայացված տեղեկանքին համապատասխան:
10. Բյուջետային բլոկը մասնագետի գրության հիման վրա LS Finance համակարգում մուտքագրում է տեղեկանքով ներկայացված գումարը՝ համապատասխան գործառնական և գերատեսչական դասակարգմամբ, որից հետո Mulberry համակարգով այդ մասին տեղեկացնում է ծախսերի ֆինանսավորման վարչության աշխատակցին:
11. Ծախսերի ֆինանսավորման վարչության աշխատակիցը LS Finance համակարգով ստուգում է մուտքագրված գումարի և համապատասխան ցուցանիշների ճշտությունը: Անհամապատասխանության դեպքում ծախսերի ֆինանսավորման վարչության աշխատակիցը այդ մասին տեղեկացնում է բյուջետային բլոկին: Շղթան կրկնվում է մինչև տվյալները լինեն ճշգրիտ և ամբողջական:
12. ԲԳԿ-ն Client Treasury համակարգով ներկայացնում է ֆինանսավորման հայտ: Ծախսերի ֆինանսավորման վարչության աշխատակիցը հայտը տեսնելուց հետո կազմում է էլեկտրոնային բյուջետային փոխանցագիր, որը ներկայացվում է գործառնական վարչություն:
13. Գործառնական վարչությունը կազմում է բյուջետային փոխանցագիրը, որը արտահանում է .doc ձևաչափով և ուղարկում է ծախսերի ֆինանսավորման վարչություն հաստատման:
14. Ծախսերի ֆինանսավորման վարչության աշխատակիցը ստուգում է բյուջետային փոխանցագիրը: Անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում այդ մասին տեղեկացնում է գործառնական վարչությանը: Այս շղթան կրկնվում է մինչև տվյալների ամբողջական համապատասխանությունը:
15. Ծախսերի ֆինանսավորման վարչության աշխատակիցը վերջնական ճշտված .doc ձևաչափով ֆայլը Mulberry համակարգով ներկայացնում է վարչության պետին՝ հաստատման: Վարչության պետը

անհամապատասխանությունների բացակայության դեպքում մինչև ժամը 16:00-ն Mulberry համակարգով փոխանցագիրը ներկայացնում է գործառնական վարչություն կատարման: Անհամապատասխանությունների առկայության դեպքում վարչության պետը վերադարձնում է \$այլը բաժնի աշխատակցին ուղղման:

Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների միջոցառմամբ (1185-11001) Ֆինանսավորում

1. Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների գծով ԲԳԿ-ն Ֆինանսների նախարարություն է ներկայացնում ՀՀ վարչապետի որոշման նախագիծ՝ համապատասխան հիմնավորումներով, որի առաջին հասցեատեր է հանդիսանում բյուջետային բյուջե, իսկ անհրաժեշտության դեպքում նաև՝ ծախսերի ֆինանսավորման վարչությունը:
2. Ծախսերի ֆինանսավորման վարչության համապատասխան մասնագետը՝ հասցեատեր լինելու դեպքում ուսումնասիրում է որոշման նախագիծը և ներկայացնում է կարծիք բյուջետային բյուջեին՝ ըստ անհրաժեշտության համապատասխան տեղեկատվությամբ:
3. Ծախսերի ֆինանսավորման վարչության համապատասխան մասնագետը ստուգում է համապատասխան նախագծով առաջարկվող ֆինանսավորման հատկացման վերաբերյալ տեղեկատվությունը իր իսկ կողմից վարվող .xls ձևաչափով \$այլում ներառված տեղեկատվության հետ: Եթե մասնագետը պարզում է, որ նախկինում ընդունված որոշմամբ արդեն իսկ հատկացվել է ֆինանսավորումն ամբողջությամբ, ապա բյուջետային բյուջեին ներկայացնում է կարծիք, որի հիման վրա բյուջետային բյուջե մերժում է ԲԳԿ-ի կողմից առաջարկվող նախագիծը:
4. Եթե մասնագետը պարզում է, որ նախկինում ֆինանսավորում չի հատկացվել, կամ հատկացվել է մասնակի ֆինանսավորում, ապա մասնագետը բյուջետային բյուջեին ներկայացնում է կարծիք՝ համապատասխան տեղեկատվությամբ: Բյուջետային բյուջե նախագծին տալիս է դրական ընթացք:
5. Վարչապետի որոշման ընդունումից հետո ծախսերի ֆինանսավորման վարչությունը տեղեկանում է այդ մասին վարչապետի աշխատակազմից Mulberry համակարգով կամ gov.am կայքից:
6. Ծախսերի ֆինանսավորման վարչության մասնագետը հաշվառում է և գրանցում է որոշման տվյալները .xls ձևաչափով վարվող \$այլում /տվյալները ներկայացված են ստորև/:
7. Վարչապետի որոշմամբ կարող է ա) նախատեսված լինել ֆինանսավորման գումարի չափը և ստացող մարմինը, բ) կարող է նշված լինել միայն ստացող մարմինը, սակայն գումարի չափ նշված չլինի, գ) կարող է նշված լինել ընդամենը գումար, որը ենթակա է հատկացման ըստ որոշման մեջ նշված ստացող մարմինների:

Ա) դեպքում ծախսերի ֆինանսավորման վարչության աշխատակիցը վարչապետի որոշմամբ ընդգրկված գումարի չափով գրություն է ներկայացնում բյուջետային բյուջին կից տեղեկանքով ծախսերի չափաքանակ բացելու վերաբերյալ:

8. Բյուջետային բյուջը մասնագետի գրության հիման վրա LS Finance համակարգում մուտքագրում է տեղեկանքով ներկայացված գումարը՝ համապատասխան գործառնական և գերատեսչական դասակարգմամբ, որից հետո Mulberry համակարգով այդ մասին տեղեկացնում է ծախսերի ֆինանսավորման վարչության աշխատակցին:
9. Ծախսերի ֆինանսավորման վարչության աշխատակիցը LS Finance համակարգով ստուգում է մուտքագրված գումարի և համապատասխան ցուցանիշների ճշտությունը: Անհամապատասխանության դեպքում ծախսերի ֆինանսավորման վարչության աշխատակիցը այդ մասին տեղեկացնում է բյուջետային բյուջին: Ծղթան կրկնվում է մինչև տվյալները լինեն ճշգրիտ և ամբողջական:
10. ԲԳԿ-ն ծախսերի ֆինանսավորման վարչություն է ներկայացնում գրություն կից հաշվետվությամբ: Մասնագետը ստուգում է հաշվետվությամբ ներկայացված տվյալների ճշտությունը՝ համադրելով վարչապետի որոշման հետ: Եթե չկա անհամապատասխանություն, մասնագետը տեղեկացնում է ԲԳԿ-ին ֆինանսավորման հայտ և պարտավորություն ներկայացնելու վերաբերյալ:
11. ԲԳԿ-ն Client Treasury համակարգով ձևավորում է հայտ և պարտավորություն:
12. ԲԳԿ-ի կողմից ստանձնած պարտավորությունը արտացոլվում է ծախսերի ֆինանսավորման վարչության կողմից հաջորդ աշխատանքային օրվա սկզբին ձևավորվող ամփոփ ֆինանսավորման տեղեկանքում:
13. Ծախսերի ֆինանսավորման վարչության համապատասխան աշխատակցի կողմից կատարվում է ամփոփ ֆինանսավորման տեղեկանքի վերլուծությունը նշված միջոցառման մասով:
14. Եթե առկա չէ անհամապատասխանություն, ապա ԲԳԿ-ին ֆինանսավորումը հատկացվում է ընդհանուր սահմանված կարգով (Գործընթաց՝ ֆինանսավորման գործընթացի կազմակերպում):
15. Անհամապատասխանությունների դեպքում, մասնագետը այդ մասին տեղեկացնում է ԲԳԿ-ին և կրճատում կամ հեռացնում է ԲԳԿ-ի ֆինանսավորման ենթակա գումարը:

Բ) դեպքում ԲԳԿ-ն ծախսերի ֆինանսավորման վարչություն է ներկայացնում գրություն կից հաշվետվությամբ, որը արտացոլում է «Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություններ» միջոցառմամբ ֆինանսավորման ենթակա գումարը: Գրության մեջ նշվում են որոշման բոլոր տվյալները:

16. Ծախսերի ֆինանսավորման վարչության մասնագետը ուսումնասիրում է ստացված գրությունը և կից հաշվետվությունը: Անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում մասնագետը այդ մասին

բանավոր տեղեկացնում է ԲԳԿ-ին, որից հետո ԲԳԿ-ն ներկայացնում է ճշտված հաշվետվությունը: Ծղթան կրկնվում է մինչև տվյալները լինեն ճշգրիտ և ամբողջական:

17. Եթե ԲԳԿ-ի կողմից ներկայացված բոլոր տվյալները ճշգրիտ են և ամբողջական, ապա ծախսերի ֆինանսավորման վարչության մասնագետը Mulberry համակարգով բյուջետային բլոկին ներկայացնում է գրություն՝ ծախսերի չափաքանակ բացելու վերաբերյալ կից ներկայացված տեղեկանքին համապատասխան:
18. Բյուջետային բլոկը մասնագետի գրության հիման վրա LS Finance համակարգում մուտքագրում է տեղեկանքով ներկայացված գումարը՝ համապատասխան գործառական և գերատեսչական դասակարգմամբ, որից հետո Mulberry համակարգով այդ մասին տեղեկացնում է ծախսերի ֆինանսավորման վարչության աշխատակցին:
19. Ծախսերի ֆինանսավորման վարչության աշխատակիցը LS Finance համակարգով ստուգում է մուտքագրված գումարի և համապատասխան ցուցանիշների ճշտությունը: Անհամապատասխանության դեպքում ծախսերի ֆինանսավորման վարչության աշխատակիցը այդ մասին տեղեկացնում է բյուջետային բլոկին: Ծղթան կրկնվում է մինչև տվյալները լինեն ճշգրիտ և ամբողջական:
20. ԲԳԿ-ն ծախսերի ֆինանսավորման վարչություն է ներկայացնում գրություն կից հաշվետվությամբ: Մասնագետը ստուգում է հաշվետվությամբ ներկայացված տվյալների ճշտությունը՝ համադրելով վարչապետի որոշման հետ: Եթե չկա անհամապատասխանություն, մասնագետը տեղեկացնում է ԲԳԿ-ին ֆինանսավորման հայտ և պարտավորություն ներկայացնելու վերաբերյալ:
21. ԲԳԿ-ն Client Treasury համակարգով ձևավորում է հայտ և պարտավորություն:
22. ԲԳԿ-ի կողմից ստանձնած պարտավորությունը արտացոլվում է ծախսերի ֆինանսավորման վարչության կողմից հաջորդ աշխատանքային օրվա սկզբին ձևավորվող ամփոփ ֆինանսավորման տեղեկանքում:
23. Ծախսերի ֆինանսավորման վարչության համապատասխան աշխատակցի կողմից կատարվում է ամփոփ ֆինանսավորման տեղեկանքի վերլուծությունը նշված միջոցառման մասով:
24. Եթե առկա չէ անհամապատասխանություն, ապա ԲԳԿ-ին ֆինանսավորումը հատկացվում է ընդհանուր սահմանված կարգով (Գործընթաց՝ ֆինանսավորման գործընթացի կազմակերպում):
25. Անհամապատասխանությունների դեպքում, մասնագետը այդ մասին տեղեկացնում է ԲԳԿ-ին և կրճատում կամ հեռացնում է ԲԳԿ-ի ֆինանսավորման ենթակա գումարը:

Գ) դեպքում ԲԳԿ-ները ծախսերի ֆինանսավորման վարչություն են ներկայացնում գրություն կից հաշվետվությամբ, որը արտացոլում է «Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություններ» միջոցառմամբ ֆինանսավորման ենթակա գումարը: Գրության մեջ նշվում են որոշման բոլոր տվյալները:

26. Ծախսերի ֆինանսավորման վարչության մասնագետը ուսումնասիրում է ստացված գրությունները և կից հաշվետվությունները և ԲԳԿ-ների կողմից ներկայացված ֆինանսավորման ենթակա գումարների հանրագումարի և վարչապետի որոշմամբ նշված ընդամենը գումարի համապատասխանությունը: Անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում մասնագետը այդ մասին բանավոր տեղեկացնում է ԲԳԿ-ին, որից հետո ԲԳԿ-ն ներկայացնում է ճշտված հաշվետվությունը: Շղթան կրկնվում է մինչև տվյալները լինեն ճշգրիտ և ամբողջական:
27. Եթե ԲԳԿ-ների կողմից ներկայացված բոլոր տվյալները ճշգրիտ են և ամբողջական, ապա ծախսերի ֆինանսավորման վարչության մասնագետը Mulberry համակարգով բյուջետային բլոկին ներկայացնում է գրություն՝ ծախսերի չափաքանակ բացելու վերաբերյալ կից ներկայացված տեղեկանքին համապատասխան:
28. Բյուջետային բլոկը մասնագետի գրության հիման վրա LS Finance համակարգում մուտքագրում է տեղեկանքով ներկայացված գումարը՝ համապատասխան գործառնական և գերատեսչական դասակարգմամբ, որից հետո Mulberry համակարգով այդ մասին տեղեկացնում է ծախսերի ֆինանսավորման վարչության աշխատակցին:
29. Ծախսերի ֆինանսավորման վարչության աշխատակիցը LS Finance համակարգով ստուգում է մուտքագրված գումարի և համապատասխան ցուցանիշների ճշտությունը: Անհամապատասխանության դեպքում ծախսերի ֆինանսավորման վարչության աշխատակիցը այդ մասին տեղեկացնում է բյուջետային բլոկին: Շղթան կրկնվում է մինչև տվյալները լինեն ճշգրիտ և ամբողջական:
30. ԲԳԿ-ն ծախսերի ֆինանսավորման վարչություն է ներկայացնում գրություն կից հաշվետվությամբ: Մասնագետը ստուգում է հաշվետվությամբ ներկայացված տվյալների ճշտությունը՝ համադրելով վարչապետի որոշման հետ: Եթե չկա անհամապատասխանություն, մասնագետը տեղեկացնում է ԲԳԿ-ին ֆինանսավորման հայտ և պարտավորություն ներկայացնելու վերաբերյալ:
31. ԲԳԿ-ն Client Treasury համակարգով ձևավորում է հայտ և պարտավորություն:
32. ԲԳԿ-ի կողմից ստանձնած պարտավորությունը արտացոլվում է ծախսերի ֆինանսավորման վարչության կողմից հաջորդ աշխատանքային օրվա սկզբին ձևավորվող ամփոփ ֆինանսավորման տեղեկանքում:
33. Ծախսերի ֆինանսավորման վարչության համապատասխան աշխատակցի կողմից կատարվում է ամփոփ ֆինանսավորման տեղեկանքի վերլուծություն նշված միջոցառման մասով:
34. Եթե առկա չէ անհամապատասխանություն, ապա ԲԳԿ-ին ֆինանսավորումը հատկացվում է ընդհանուր սահմանված կարգով (Գործընթաց՝ ֆինանսավորման գործընթացի կազմակերպում):
35. Անհամապատասխանությունների դեպքում, մասնագետը այդ մասին տեղեկացնում է ԲԳԿ-ին և կրճատում կամ հեռացնում է ԲԳԿ-ի ֆինանսավորման ենթակա գումարը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների և որոշումների հիման վրա արտարացի ֆինանսական հատուցումների տրամադրում միջոցառման ֆինանսավորում

1. Ծախսերի ֆինանսավորման վարչությունը ՀՀ վարչապետի աշխատակազմից Mulberry համակարգով ստանում է վարչապետի հանձնարարական ՄԻԵԴ-ի վճիռ/որոշման հիման վրա ֆիզիկական կամ իրավաբանական անձին գումարի հատուցումը ապահովելու նպատակով:
2. Ծախսերի ֆինանսավորման վարչության մասնագետը ուսումնասիրում է հանձնարարականը կից փաստաթղթերի փաթեթով, անհրաժեշտ տվյալները մուտքագրում է .xls ձևաչափով վարվող ֆայլում: Մասնագետը արտարժույթով արտահայտված գումարը փոխարկում է դրամի՝ հիմք ընդունելով տվյալ օրվա դրությամբ ԿԲ-ի կողմից սահմանված արտարժույթի անկանխիկ վաճառքի փոխարժեքը: Այդ նպատակով մասնագետը մուտք է գործում LS Finance համակարգի Տեղեկատու՝ Արժույթ՝ Փոխարժեքներ բաժին և այդտեղից տեղեկանում է փոխարժեքի անխանխիկ վաճառքի փոխարժեքին և մուտքագրում է տվյալները .xls ձևաչափով վարվող ֆայլում:
3. Այնուհետև մասնագետը կազմում է ծառայողական գրություն բյուջետային բլոկին՝ ներկայացնելով անհրաժեշտ իրավական հիմքերը՝ համապատասխան գումարի չափով չափաքանակ բացելու վերաբերյալ:
4. Մասնագետը, համագործակցելով բյուջետային բլոկի հետ, ապահովում է, որպեսզի ժամանակին բացվի համապատասխան չափաքանակը: Բյուջետային բլոկը համապատասխան չափաքանակը բացելուց հետո Mulberry համակարգով այդ մասին տեղեկացնում է ծախսերի ֆինանսավորման վարչության մասնագետին:
5. Մասնագետը LS Finance համակարգով ստուգում է բացված չափաքանակի ճշտությունը: Անհամապատասխանությունների առկայության դեպքում այդ մասին տեղեկացնում է բյուջետային բլոկին: Այս շղթան կրկնվում է մինչև տվյալների ամբողջական համապատասխանությունը:
6. Ծախսերի ֆինանսավորման վարչության աշխատակիցը տեղեկացնում է ԲԳԿ-ին համապատասխան գումարի չափով հայտ բացելու անհրաժեշտության վերաբերյալ:
7. ԲԳԿ-ն Client Treasury ծրագրով ներկայացնում է ֆինանսավորման հայտ:
8. Ծախսերի ֆինանսավորման վարչության մասնագետը ստուգում է ԲԳԿ-ի կողմից ներկայացված հայտը: Անհամապատասխանությունների առկայության դեպքում այդ մասին տեղեկացնում է համապատասխան մասնագետին: Այս շղթան կրկնվում է մինչև տվյալների ամբողջական համապատասխանությունը:
9. Ծախսերի ֆինանսավորման վարչության մասնագետը կազմում է բյուջետային փոխանցագիր .xls ձևաչափով և ներկայացնում է Գործառնական վարչություն՝ կատարման:

10. Գործառնական վարչությունը LS Finance ծրագրով կազմում է Էլեկտրոնային վճարման փոխանցագիր, որի արտահանված .doc ձևաչափով օրինակը ներկայացնում է ծախսերի ֆինանսավորման վարչություն հաստատման:
11. Մասնագետը ստուգում է տվյալների ճշտությունը: Անհամապատասխանությունների առկայության դեպքում այդ մասին տեղեկացնում է Գործառնական վարչությանը, որը անհրաժեշտ ուղղումները կատարելուց հետո կրկին ուղարկում է .doc ֆայլը հաստատման: Այս շղթան կրկնվում է մինչև տվյալների ամբողջական համապատասխանությունը:
12. Տվյալները ճշգրիտ լինելու դեպքում վարչության մասնագետը .doc ձևաչափով Էլեկտրոնային բյուջետային փոխանցագիրը ուղարկում է վարչության պետին հաստատման: Անհամապատասխանությունների առկայության դեպքում վարչության պետը վերադարձնում է գործը մասնագետին ուղղման: Այս շղթան կրկնվում է մինչև տվյալների ամբողջական համապատասխանությունը:
13. Վարչության պետը Էլեկտրոնային բյուջետային փոխանցագիրը ներկայացնում է գործառնական վարչություն՝ ֆինանսավորման համար:

Մուտքագրվող տվյալներ

ԳՁ-ՃՖ1/Մ/1
Ֆինանսավորման տեղեկանք

Տվյալ	Նկարագրություն
Բյուջետային ծախսերի դասակարգում	Գերատեսչական, գործառնական, ծրագրային, տնտեսագիտական դասակարգման հոդվածներ
Ժամանակ	տվյալ ժամանակահատվածի եռամսյակային համամասնությունների ցուցանիշները
Ֆինանսավորում	տվյալ օրվա դրությամբ աճողական ֆինանսավորում
Ծախս	տվյալ օրվա դրությամբ ԲՄԿ-ի կատարված դրամարկղային ծախսը
Մնացորդ	ԲՄԿ-ի թղթակցային հաշվների մնացորդը՝ չծախսված գումարը
Պայմանագ.	ԲՄԿ-ի պայմանագրային պարտավորությունների գումարներ

Վճարման ենթակա ընդհանուր պարտավորություն	Նախորդ օրվա դրությամբ ԲՍԿ-ների կողմից Client Treasury համակարգում ստանձնած պարտավորությունները
Ֆինանսավորման ենթակա	«Վճարման ենթակա ընդամենը պարտավորության» և «Մնացորդ» դաշտերի տարբերություն Տվյալ օրվա դրությամբ պահանջվող ֆինանսավորում
Ծանոթություն	Տեքստային դաշտ
Չայտեր	ԲԳԿ-ի կողմից ներկայացվող ֆինանսավորման հայտ

ԳՁ-ՃՖ1/Մ/2
Դոտացիաներ

Տվյալ	Նկարագրություն
Մարզերի և համայնքների անուններ	Լրացվող տվյալ
Դոտացիայի գումար	Լրացվող տվյալ
Կորուստների գումար	Լրացվող տվյալ

Բյուջետային փոխանցագիր

Տվյալ	Նկարագրություն
Նախարարություն	Լրացվող տվյալ
Բաժին, խումբ, դաս, ծրագիր	Լրացվող տվյալ
Չողված	Տնտեսագիտական դասակարգման հոդված, Լրացվող տվյալ

Գումար ՀՀ դրամ	Լրացվող տվյալ
Ծանոթություն	Լրացվող տվյալ
Ընդամենը	Հանրագումար, հաշվարկվող դաշտ

ԳՁ-ՇՖ1/Մ/3

Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ

Վարչապետի որոշում

Տվյալ	Նկարագրություն
Վարչապետի որոշման հերթական համար	Աշխատակցի կողմից լրացվող հերթական համար
Վարչապետի որոշման ընդունման ամսաթիվը և որոշման համարը	Վարչապետի որոշման տվյալները
Բովանդակությունը	Ով և ուր է գործուղվում
ԲԳԿ-ի անվանում	ԲԳԿ-ների անունները գերատեսչական կողերով
Գումար	Ֆինանսավորված գումարը
Հանրագումարը	Ըստ որոշումների և ըստ մարմինների

Տեղեկանք .xls

Տվյալ	Նկարագրություն
Վարչապետի որոշման ամսաթիվ, համար	Լրացվող դաշտ

ԲԳԿ-ի անվանում	Լրացվող դաշտ
Բաժին, խումբ, դաս	Լրավում է բաժնի աշխատակցի կողմից՝ բյուջետային բյուջեից ստացված տեղեկատվության հիման վրա
Գումարը	Որքան պլան պետք է բացվի
Ժամանակահատված	Ըստ որոշման մեջ նշված ժամանակահատվածի

Էլեկտրոնային բյուջետային փոխանցագիր

Տվյալ	Նկարագրություն
Նախարարության կողմից և անվանում	Գերատեսչական կողմից և անուն
Բաժին, խումբ, դաս, ծրագիր	Գործառնական դասակարգում
Յուրացված	Տնտեսագիտական հոդված
Գումար	Փոխանցման ենթակա գումար
Ամսաթիվ	Տվյալ օրվա ամսաթիվ

ԳՁ-ՆՖ1/Մ/4

Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություններ
Վարչապետի որոշում

Տվյալ	Նկարագրություն
Վարչապետի որոշման հերթական համար	Աշխատակցի կողմից լրացվող հերթական համար

Վարչապետի որոշման ընդունման ամսաթիվը և որոշման համարը	Վարչապետի որոշման տվյալները
Բովանդակությունը	Պատվիրակության վերաբերյալ տեղեկատվություն
ԲԳԿ-ի անվանում	ԲԳԿ-ների անունները գերատեսչական կողերով
Գումար	Ֆինանսավորված գումարը /առկայության դեպքում/
Չանրագումարը	Ըստ որոշումների և ըստ մարմինների

Տեղեկանք .xls

Տվյալ	Նկարագրություն
Վարչապետի որոշման ամսաթիվ, համար	Լրացվող դաշտ
ԲԳԿ-ի անվանում	Լրացվող դաշտ
Բաժին, խումբ, դաս	Լրավում է բաժնի աշխատակցի կողմից՝ բյուջետային բյուջեից ստացված տեղեկատվության հիման վրա
Գումարը	Որքան պլան պետք է բացվի
Ժամանակահատված	Ըստ որոշման մեջ նշված ժամանակահատվածի

ԳՁ-ԾՖ1/Մ/5

ՄԻԵԴ .xls

Տվյալ	Նկարագրություն
Գործի անվանում	Ում հայցն է ում դեմ
Վճռի համարը	Չերթական համար

	Վճարման ենթակա գումարը EURO	
	Վճարման ենթակա գումարը ՀՀ դրամ	
	Հատկացման ամիս, ամսաթիվ	

Ելքագրվող
տվյալներ

ԳՁ-ՃՖ1/Ե

Տվյալ	Նկարագրություն
Չեռացման ենթակա պարտավորություններ	Գերատեսչական, գործառական, ծրագրային, տնտեսագիտական դասակարգման հոդվածներ համապատասխան գումարներով
Բյուջետային ծախսերի դասակարգում	Գերատեսչական, գործառական, ծրագրային, տնտեսագիտական դասակարգման հոդվածներ
Ֆինանսավորման ենթակա գումար	Տվյալ օրվա դրությամբ ֆինանսավորման ենթակա գումար

Դոտացիաներ

Տվյալ	Նկարագրություն
Մարզերի և համայնքների անուններ	Լրացվող տվյալ
Դոտացիայի գումար	Լրացվող տվյալ
Կորուստների գումար	Լրացվող տվյալ

Տվյալ	Նկարագրություն
Նախարարություն	Լրացվող տվյալ
Բաժին, խումբ, դաս, ծրագիր	Լրացվող տվյալ
Հոդված	Տնտեսագիտական դասակարգման հոդված, Լրացվող տվյալ
Գումար ՀՀ դրամ	Լրացվող տվյալ

Ճանաթություն	Լրացվող տվյալ
Ընդամենը	Հանրագումար, հաշվարկվող դաշտ

Տեղեկանք

Տվյալ	Նկարագրություն
Վարչապետի որոշման ամսաթիվ, համար	Լրացվող դաշտ
ԲԳԿ-ի անվանում	Լրացվող դաշտ
Բաժին, խումբ, դաս	Լրավում է բաժնի աշխատակցի կողմից՝ բյուջետային բյուջեի ստացված տեղեկատվության հիման վրա
Գումարը	Որքան պլան պետք է բացվի
Ժամանակահատված	Ըստ որոշման մեջ նշված ժամանակահատվածի

Էլեկտրոնային բյուջետային փոխանցագիր


Տվյալ	Նկարագրություն
Նախարարության կողմ և անվանում	Գերատեսչական կողմ և անուն
Բաժին, խումբ, դաս, ծրագիր	Գործառնական դասակարգում
Հոդված	Տնտեսագիտական հոդված
Գումար	Փոխանցման ենթակա գումար
Ամսաթիվ	Տվյալ օրվա ամսաթիվ

Վալիդացիա


ԲԳԿ-ի «հայտի» գումարի ստուգում ԲՍԿ-ների «Ֆինանսավորման ենթակա» գումարների հետ Ֆինանսավորման տեղեկանքում պարտավորության գումարների ստուգում տվյալ ծախսային հոդվածի պլանի մնացորդի հետ /LS Finance ծրագրով/

Իրավական ակտեր` Գանձապետական համակարգի մասին օրենք, ՀՀ կառավարության 2018թ. 706-Ն որոշում


Ֆինանսավորման գործընթացի կազմակերպում /ամենօրյա ռեժիմով/





Պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և ՀՀ ԱԺ ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների կորուստների փոխհատուցում






Վարկային և դրամաշնորհային ծրագրերի համաֆինանսավորման գործընթաց




Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ միջոցառմամբ (1185-11002) ֆինանսավորում



Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների միջոցառմամբ (1185-11001) ֆինանսավորում



Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների և որոշումների հիման վրա արտարացի ֆինանսանակ հատուցումների տրամադրում միջոցառման ֆինանսավորում



Ստորաբաժանում	Ճախսերի ֆինանսավորման վարչություն
Անվանում	ԳԶ-ՃՏԶ- Իրավական ակտերով կատարված ֆինանսավորումների տվյալների հաշվառում, պարբերական և ըստ պահանջի հաշվետվությունների և տեղեկանքների կազմում
Նպատակ	Իրավական ակտերով կատարված ֆինանսավորումների տվյալների հաշվառում, պարբերական և ըստ պահանջի հաշվետվությունների և տեղեկանքների կազմում
Տիրույթ	ՀՀ ֆինանսների նախարարություն, LS Finance
Դերակատարներ	Ճախսերի ֆինանսավորման վարչություն, բյուջեների կատարման հաշվետվությունների վարչություն, ՖՆ այլ ստորաբաժանումներ
Ընթացք 1	<p>Ճախսերի ֆինանսավորման վարչությունը իրականացնում է հետևյալ պարբերական և ըստ պահանջի տեղեկանքների կազմում և ներկայացնում ՖՆ այլ ստորաբաժանումներին.</p> <p>«ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» տեղեկանքը կազմվում է .xls ձևաչափով և ներկայացվում է պետական բյուջեի կատարման հաշվետվությունների վարչություն, բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն և նախարարին յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո: Տեղեկանքը նաև ներկայացվում է ըստ պահանջի բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն: Տեղեկանքում ներառվող բոլոր տվյալները վարվում են .xls ձևաչափով ֆայլերում օրական կտրվածքով` ՀՀ կառավարության կողմից պահուստային ֆոնդ ծրագրով հատկացումների վերաբերյալ որոշումների ընդունումից հետո: Վարչության մասնագետը հաշվառումը վարում է .xls ձևաչափով մի շարք ֆայլերի տեսքով` ըստ որոշումների, ըստ մարմինների, ըստ վերաբաշխումների, ըստ պահուստային ֆոնդից գուտ հատկացումների, այդ թվում Covid-19-ի համար:</p> <p>Ճախսերի ֆինանսավորման վարչության մասնագետը ամենօրյա ռեժիմով հսկում է պլանի մնացորդը պահուստաֆոնդից գուտ հատկացումների նկատմամբ, ինչպես նաև արդեն իսկ շրջանառվող, սակայն դեռևս չընդունված որոշումների նախագծերով առաջարկվող գումարների հանրագումարի հետ:</p> <p>ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ միջոցառման միջոցներից գուտ հատկացման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագծով հասցեատեր լինելու դեպքում Ճախսերի ֆինանսավորման վարչության մասնագետը սույն տեղեկանքը ծառայողական գրությամբ ներկայացնում է բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն: Եթե նոր նախագծով առաջարկվող հատկացման գումարը մեծ է պահուստային ֆոնդ միջոցառման չհատկացված պլանի մնացորդից, ինչպես նաև վերը նշված շրջանառվող նախագծերով առաջարկված հատկացումների հանրագումարից, վարչության մասնագետը, վարչության պետի հաստատումից</p>

հետո, բյուջետային գործընթացի կազմակերպման վարչությանը ներկայացնում է բացասական եզրակացություն: Տեղեկանքը կազմելուց հետո այն ներկայացնում է վարչության պետի հաստատմանը: Անհամապատասխանությունների բացակայության դեպքում վարչության պետը հաստատում է տեղեկանքը և ներկայացնում այն բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն:

Ծախսերի ֆինանսավորման վարչության մասնագետը ամենօրյա ռեժիմով LS Finance Rep համակարգից արտահանում է 4300 հաշվետվական ձևը և տվյալները համադրում է իր կողմից .xls ձևաչափով վարվող հաշվառման տվյալների հետ: Անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում մասնագետը այդ մասին տեղեկացնում է բյուջետային գործընթացի կազմակերպման վարչությանը՝ անհրաժեշտ շտկումները կատարելու համար:

«Վարկային և դրամաշնորհային նպատակային ծրագրեր» տեղեկանքը կազմվում է ամսական կտրվածքով /և ըստ անհրաժեշտության/ և ներկայացվում է նախարարին: Այն արտացոլում է ՀՀ պետական բյուջեով արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող ծրագրերի կատարման վերաբերյալ տեղեկատվություն՝ ներառյալ վարկային միջոցների, դրամաշնորհային միջոցների և դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների հատվածները: Տեղեկանքում ներառվող անհրաժեշտ տեղեկատվությունը արտահանվում է LS Finance ծրագրից տարբեր տեղեկանքների տեսքով, որից հետո վարչության մասնագետը համադրում է բոլոր ծրագրերի գծով ցուցանիշները և անհրաժեշտ տվյալները տեղափոխում տեղեկանք:

LS Finance ծրագրից արտահանվող տեղեկանքները, որոնց հիման վրա կազմվում է սույն տեղեկանքը՝

- Վարկերի և համաֆինանսավորումների տարեկան բյուջե
- Դրամաշնորհների և համաֆինանսավորումների տարեկան բյուջե
- Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների և դրանց գծով համաֆինանսավորումների տարեկան բյուջե
- Վարկերի և համաֆինանսավորումների եռամսյակային բյուջե
- Դրամաշնորհների և համաֆինանսավորումների եռամսյակային բյուջե
- Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների և դրա գծով համաֆինանսավորումների եռամսյակային բյուջե
- Վարկային միջոցների գծով փաստացի մասնահումներ և փաստացի ծախսեր
- Դրամաշնորհային միջոցների գծով փաստացի մասնահումներ և փաստացի ծախսեր
- Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների փաստացի մասնահումներ և փաստացի ծախսեր
- Վարկային միջոցների գծով փաստացի մասնահումներ և փաստացի ծախսերից գումարների հետվերդարձ

- Դրամաշնորհային միջոցների գծով փաստացի մասնահումներ և փաստացի ծախսերից գումարների հետվերադարձ
- Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների փաստացի մասնահումներ և փաստացի ծախսերից գումարների հետվերադարձ
- Վարկային միջոցների համաֆինանսավորման ֆինանսավորում և փաստացի ծախսեր
- Դրամաշնորհային միջոցների համաֆինանսավորման ֆինանսավորում և փաստացի ծախսեր
- Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների համաֆինանսավորման ֆինանսավորում և փաստացի ծախսեր
- Վարկային միջոցների համաֆինանսավորման ֆինանսավորում և փաստացի ծախսերից գումարների հետվերադարձ
- Դրամաշնորհային միջոցների համաֆինանսավորման ֆինանսավորում և փաստացի ծախսերից հետվերադարձ
- Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների համաֆինանսավորման ֆինանսավորում և փաստացի ծախսերից հետվերադարձ

Ըստ անհրաժեշտության, կիրառելով excel ծրագրի ֆիլտրը, առանձնացվում են որոշ ԲԳԿ-ների կողմից կատարվող ծրագրերի գծով ծախսերը, կամ որոշակի ծրագրերի կամ միջոցառումների, կամ ոլորտի գծով ծախսերը: Վարչության մասնագետը կազմում է նաև Տեղեկանք միայն համաֆինանսավորման գծով ամփոփ տեղեկատվություն, որը ներառում է տվյալ հաշվետու ամսվա կատարման ցուցանիշները՝ համադրելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ:

Վարչության մասնագետը հաշվետու ամսվա ավարտից հետո պետական պարտքի վարչությունից ստանում է տեղեկատվություն վարկերի և դրամաշնորհների և դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների գծով ուղղակի վճարումների վերաբերյալ, այդ տեղեկատվությունը ստուգում է LS Finance համակարգում արտացոլված փաստացի ծախսերի հետ և եթե տվյալները բացակայում են, այն ներառում է տեղեկանքի տվյալ ծրագրի գծով փաստացի ծախսերում:

«Համահարթեցման դոտացիաներ» տեղեկանքը կազմվում է յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո առաջին տասնօրյակում ըստ մարզերի /տարեկանի դեպքում նաև՝ ըստ համայնքների/ .xls ձևաչափով և կից ծառայողական գրությամբ ուղարկվում է Ծախսերի ֆինանսավորման վարչության պետին համաձայնեցման: Առարկություններ չունենալու դեպքում վարչության պետը տեղեկանքը ներկայացվում է բյուջեների կատարման

հաշվետվությունների վարչություն: Հաշվեքննիչ պալատի կողմից իրականացվող ստուգման ժամանակ ըստ համայնքների տեղեկատվությունը ուղարկվում է ՖՆ-ի համապատասխան ստորաբաժանումներին: Տեղեկանքում արտացոլված բոլոր տվյալները ստացվում են .xls ձևաչափով կատարված հաշվառման արդյունքում:

Դոտացիաների մասով կազմվում է նաև եռամսյակային հաշվետվություն .xls Ֆայլի ձևաչափով` ՖՆ նախարարի հրամանով հաստատված ձևին համապատասխան, որը ծառայողական գրությամբ ներկայացվում է ՖՆ ծրագրերի իրականացման վարչություն: Տվյալ տեղեկանքով ներկայացվում են արդյունքային ցուցանիշներ, ինչպես նաև տարեկան հաստատված և ճշտված նախահաշվի, բացված ֆինանսավորման, դրամարկղային և փաստացի ծախսերի վերաբերյալ տվյալներ, իսկ տարեկանի դեպքում կազմվում է նաև .doc ձևաչափով Ֆայլ նախորդ տարվա ցուցանիշներով:

«Ռազմական դրությամբ պայմանավորված ծրագրեր» տեղեկանքը կազմվում է .xls ձևաչափով և յուրաքանչյուր ամսվա վերջին ներկայացվում է պետական բյուջեի կատարման հաշվետվությունների վարչություն, բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն և նախարարին: Տեղեկանքում ներառվող բոլոր տվյալները վարվում են .xls ձևաչափով Ֆայլերում օրական կտրվածքով` ՀՀ կառավարության կողմից համապատասխան հատկացումների վերաբերյալ որոշումների ընդունումից հետո: Վարչության մասնագետը վարում է հաշվառում ըստ տվյալ ծրագիր/միջոցառման պատասխանատուների, կատարողների, որոշման համարների: Տեղեկանքը կազմելուց հետո այն ներկայացվում է վարչության պետի հաստատմանը: Անհամապատասխանությունների բացակայության դեպքում վարչության պետը հաստատում է տեղեկանքը և ներկայացնում համապատասխան ստորաբաժանումներին:

«Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ» և «Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություններ» տեղեկանքները կազմվում են .xls ձևաչափով և յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո ներկայացվում են պետական բյուջեի կատարման հաշվետվությունների վարչություն: Տեղեկանքներում արտացոլվող տվյալները վարվում են վարչության մասնագետի կողմից .xls ձևաչափով Ֆայլերի տեսքով` ՀՀ վարչապետի համապատասխան որոշումների ընդունումից հետո: Տեղեկանքները կազմելուց հետո դրանք ներկայացվում են վարչության պետի հաստատմանը: Անհամապատասխանությունների բացակայության դեպքում վարչության պետը հաստատում է տեղեկանքները և ներկայացնում համապատասխան ստորաբաժանումներին:

«Հակահամաճարակային միջոցառումներ /Covid 19/» տեղեկանքը կազմվում է .xls ձևաչափով և յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո ներկայացվում է պետական բյուջեի կատարման հաշվետվությունների վարչություն:

Տեղեկանքում արտացոլվող բոլոր տվյալները արտահանվում են LS Finance համակարգից: Տեղեկանքը կազմելուց հետո այն ներկայացվում է վարչության պետի հաստատմանը: Անհամապատասխանությունների բացակայության դեպքում վարչության պետը հաստատում է տեղեկանքը և ներկայացնում համապատասխան ստորաբաժանումներին:

«Արցախի աջակցության ծրագրեր» տեղեկանքը կազմվում է .xls ձևաչափով և յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո ներկայացվում է պետական բյուջեի կատարման հաշվետվությունների վարչություն:

Տեղեկանքում արտացոլվող բոլոր տվյալները արտահանվում են LS Finance համակարգից: Տեղեկանքը կազմելուց հետո այն ներկայացվում է վարչության պետի հաստատմանը: Անհամապատասխանությունների բացակայության դեպքում վարչության պետը հաստատում է տեղեկանքը և ներկայացնում համապատասխան ստորաբաժանումներին:

«Բյուջեի կատարման վերաբերյալ ամսական տեղեկանքներ» կազմվում են .xls ձևաչափով ֆայլերի տեսքով յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը և ներկայացվում են նախարարին Էլ. փոստով:

Ամսական տեղեկանքները բաղկացած են՝ ըստ տնտեսագիտական դասակարգման, ըստ գործառական դասակարգման ծախսերի, ինչպես նաև վերլուծական տվյալներից՝ նախորդ տարվա նմանատիպ ցուցանիշների համեմատականով: Հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող երկրորդ աշխատանքային օրվա ընթացքում նշված տեղեկանքների ցուցանիշները ճշգրտվում են, ինչպես նաև ավելացվում է վարկային և դրամաշնորհային նպատակային ծրագրերի գծով տեղեկանքը: Տեղեկանքներում արտացոլվող տվյալները հիմնականում արտահանվում են LS Finance համակարգից, մյուս տվյալները՝ հաշվարկվող տվյալներ են: Եռամսյակային կտրվածքով ավելացվում է նաև խոշոր ծրագրերի գծով թերակատարումների տեղեկանքը:

Մուտքագրվող
տվյալներ

ԳՁ-ՃՖ2/Մ/1

ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ /ամփոփ/, .xls

Տվյալ	Նկարագրություն
Ժամանակահատված	Տարի, եռամսյակ, կիսամյակ, ինը ամիս
Բյուջեի պլան	Տվյալ տարվա բյուջեի մասին օրենքով նախատեսված
Բյուջեի պլան	ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված չափաքանակներ ըստ ժամանակահատվածների
Փոփոխություն ՀՀ կառավարության որոշումներով և վերադասի կողմից /ընդամենը/	
Փոփոխություն ՀՀ կառավարության որոշումներով	
Փոփոխություն վերադասի կողմից	ԲԳԿ-ի նախաձեռնությամբ իրականացվող
Ճշտված պլան	
ՀՀ կառավարության որոշումներով հատկացված	Վերաբաշխումների և փոփոխությունների արդյունքում կատարված հատկացումներ
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ ծրագրից կատարված ուղիղ հատկացումներ	ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ միջոցառման ծախսային ծրագրից զուտ հատկացումներ իրավական ակտերով
ՀՀ կառավարության որոշումներով չհատկացված պլանի մնացորդ	Ճշտված պլանի և ՀՀ կառավարության որոշումներով հատկացված գումարի տարբերություն
Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներ	Ըստ ժամանակահատվածների /եռամսյակ, կիսամյակ, իննը ամիս, տարի/

/ըստ որոշումների/ .xls

Տվյալ	Նկարագրություն
Որոշման համար, ամսաթիվ	
Որոշման վերնագիր	
Կատարող մարմնի անվանում	
Հատկացման նպատակ	
Ծրագրի և միջոցառման անվանումներ և տնտեսագիտական հոդվածը	
Տարեկան հատկացված գումար	
Եռամսյակային համամասնությամբ հատկացված գումար	Եռամսյակ, կիսամյակ, ինն ամիս

/վերաբաշխումներ/ .xls

Տվյալ	Նկարագրություն
Որոշման համար, ամսաթիվ	
Փոփոխությունը կառավարության որոշմամբ ըստ եռամսյակային համամասնությունների	Եռամսյակ, կիսամյակ, ինն ամիս

ԳՁ-ԾՖՁ/Մ/2

«Վարկային և դրամաշնորհային նպատակային ծրագրեր»

Տվյալ	Նկարագրություն
Ծրագիր, միջոցառում, ԲԳԿ	Ավտոմատ գեներացվող դաշտ
Բաժին, ծրագիր	Նախկին դասակարգմամբ ծրագրի անվանում, Ավտոմատ գեներացվող դաշտ
Վարկեր և դրամաշնորհներ /համաֆինանսավորումներով/ տարեկան բյուջե ընդամենը	Ավտոմատ գեներացվող դաշտ
Վարկեր և դրամաշնորհներ /համաֆինանսավորումներով/ եռամսյակի բյուջե ընդամենը	Ավտոմատ գեներացվող դաշտ
Վարկեր և դրամաշնորհներ /համաֆինանսավորումներով/ գծով փաստացի ծախս	Հաշվարկվող ծախս
Վարկերի և դրամաշնորհների պլան	Հաշվարկվող դաշտ
Վարկային և դրամաշնորհային ծրագրերի գծով փաստացի մասհանումներ և փաստացի ծախս	Հաշվարկվող դաշտ /հանած հետվերադարձերը/
Ջետ վերադարձ	Ավտոմատ գեներացվող դաշտ
Համաֆինանսավորման բյուջե	Ավտոմատ գեներացվող դաշտ
Համաֆինանսավորում փաստացի ֆինանսավորում	Ավտոմատ գեներացվող դաշտ
Համաֆինանսավորում փաստացի ծախս	Հաշվարկվող դաշտ /հանած հետվերադարձերը/

Չեռ վերադարձ	Ավտոմատ գեներացվող դաշտ
Կատարման տոկոս տարեկան պլանի նկատմամբ	Չաշվարկվող դաշտ
Կատարման տոկոս կիսամյակային պլանի նկատմամբ	Չաշվարկվող դաշտ
Կատարման տոկոս նախորդ տարվա կիսամյակի պլանի հետ	Չաշվարկվող դաշտ
Ընդամենը դեֆիցիտի ֆինանսավորման հետ միասին	Չաշվարկվող դաշտ
Ընդամենը առանց դեֆիցիտի ֆինանսավորման	Չաշվարկվող դաշտ
Կապիտալ ծախսերի հանրագումար	Չաշվարկվող դաշտ
Վարկային միջոցների հանրագումար	Չաշվարկվող դաշտ
Կապիտալ ծախսերի ծրագրեր	Չաշվարկվող դաշտ
Վարկային միջոցների հանրագումար	Չաշվարկվող դաշտ
Դրամաշնորհային ծրագրերի հանրագումար	Չաշվարկվող դաշտ
Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների հանրագումար	Չաշվարկվող դաշտ

ԳՁ-ՇՖ2/Մ/3

Չամահարթեցման դոտացիաներ .xls

Տվյալ	Նկարագրություն
--------------	-----------------------

	ՀՀ մարզերի և համայնքների անուկներ	
	Ընդամենը նախատեսված դոտացիաներ	Ստորև նշված երկու դաշտերի հանրագումար
	Ֆինանսական համահարթեցման դոտացիայի նախատեսված գումար	
	ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման գումար	
	Ընդամենը առաջին եռամսյակի ֆինանսավորում	
	Ֆինանսական համահարթեցման դոտացիայի գումարը /ֆինանսավորում/	
	ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման գումարը /ֆինանսավորում առաջին եռամսյակ/	
	Հաշվետվություն .xls	
	Տվյալ	Նկարագրություն

Ծրագրային և գործառական դասիչներ և հոդվածներ	
Տարեկան հաստատված պլան	
Փոփոխություններ	
Տարեկան ճշտված պլան	
Ֆինանսավորում	Տրամադրված ֆինանսավորում
Դրամարկղային ծախս	Փաստացի վճարված գումար
Փաստացի ծախս	ԲԳԿ-ի կողմից հաշվեգրված ծախս
Ծրագրի պատասխանատու և կատարող	
Շահառուների քանակ	
Շեղումների դեպքում տարբերության պատճառը	

ԳՁ-ՇՖ2/Մ/4

Ռազմական դրությամբ պայմանավորված ծրագրեր .xls

Տվյալ	Նկարագրություն
Որոշման համար, ամսաթիվ	
ԲԳԿ /պատասխանատու, կատարող/	
Ծրագիր, միջոցառում	Գործառական դասակարգում, նաև նախկին դասակարգման ծրագիրը

Տարեկան ճշտված չափաքանակ	
Ֆինանսավորման աղբյուր	Բացվող ցանկ՝ ըստ կառավարության պահուստային ֆոնդի, վերաբաշխումների, ըստ դրամաշնորհների
Ֆինանսավորում	Տրամադրված ֆինանսավորում
Մնացորդ	Ամսվա վերջի դրությամբ
Ընդամենը	Ըստ ԲԳԿ-ների

ԳՁ-ՃՖ2/Մ/5

Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ .xls

Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություններ .xls

Տվյալ	Նկարագրություն
Վարչապետի որոշման ամսաթիվ, համար	
ԲԳԿ-ի անվանում	
Բաժին, խումբ, դաս	Լրացվում է բաժնի աշխատակցի կողմից՝ բյուջետային բլոկից ստացված տեղեկատվության հիման վրա
Գումարը	Որքան պլան պետք է բացվի
Ժամանակահատված	Ըստ որոշման մեջ նշված ժամանակահատվածի
Ընդամենը տարեկան հաստատված բյուջե	
Ընդամենը տարեկան ճշտված բյուջե	Հաշվարկվող դաշտ

Ընդամենը եռամսյակային համամասնություններով բյուջե	Ըստ եռամսյակների, կիսամյակի, ինն ամսվա
Աճողական ֆինանսավորում	Հաշվարկվող դաշտ
Որոշումներով ընդունված գումարը	
Կիսամյակի չբաշխված ծախս	Հաշվարկվող դաշտ
Որոշումների համաձայն ԲԳԿ-ի կողմից ներկայացված և ֆինանսավորման ենթակա գումար	
Հատկացված ֆինանսավորման մնացորդ /չբաշխված ծախս/	Հաշվարկվող դաշտ
Ընդունված որոշումների թիվը	Հաշվարկվող դաշտ
Մեկ գործուղման կամ ընդունելության համար կատարված միջին ծախսը	Հաշվարկվող դաշտ
Տվյալները նախորդ տարվա դրությամբ	

ԳՁ-ԾՖ2/Մ/6

«Հակահամաճարակային միջոցառումներ /Covid 19/»

Տվյալ	Նկարագրություն
Ծրագիր, միջոցառում	LS Finance ծրագրից արտահանվող
Կատարողի անուն	LS Finance ծրագրից արտահանվող
Ընթացք 1	<p>1. ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի քարտուղարությունը 1 աշխատանքային օրվա ընթացքում՝ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության համապատասխան ստորաբաժանման (այսուհետ՝ ԴԱՀԿ) կողմից ուղարկված գրությունը, որին կից ներկայացված են դատական ակտերը (դատավճիռ, վճիռ, որոշում), կատարողական թերթը, հարկադիր կատարողի կողմից կատարողական վարույթ հարուցելու մասին կայացրած որոշումը, պարտատիրոջ պետական գրանցման վկայականի պատճենը (բոլոր ներդիրների հետ), կամ անձնագրի պատճենը (գրանցման էջի հետ)՝ որոնք վերաբերվում են ՀՀ պետական բյուջեից գումարներ բռնագանձելուն, հասցեագրում է հետևյալ հերթականությամբ.</p> <ul style="list-style-type: none"> • ՀՀ \$Ն պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչություն, • ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչություն, <p>2. ՀՀ \$Ն իրավաբանական վարչությունը՝ փաստաթղթերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ \$Ն պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչությանն է ներկայացնում իրավաբանական եզրակացություն, դրանում ամրագրելով՝</p> <ul style="list-style-type: none"> ա) ենթակա է տրամադրման փոխանցելի մուրհակ, թե ոչ, բ) պետական բյուջեից բռնագանձման ենթակա պարտավորությունների մարման աղբյուրը (բյուջետային կամ արտաբյուջետային միջոցների հաշվին), գ) պետական բյուջեից բռնագանձման ենթակա պետական տուրքի վճարման աղբյուրը, դ) վճռով ծագած պարտավորությունը՝ միատեսակ, հանդիպական և այլ պարտավորությունների հետ հաշվանցման հնարավորության առկայության դեպքում առաջարկություն՝ վճռով ծագած պարտավորությունը համապատասխան փաստաթղթով ամրագրված միատեսակ, հանդիպական և այլ պարտավորության հետ հաշվանցման մասին, ե) մուրհակի տրամադրումը մերժելու դեպքում դրա իրավական հիմքը:

3. ՀՀ ֆինանսների նախարարության պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչությունը եզրակացությունը փոխանցելի մուրհակ թողարկելու վերաբերյալ ստանալուց հետո, 2 աշխատանքային օրվա ընթացքում նախապատրաստում և սահմանում է փոխանցելի մուրհակի վավերապայմանները և ծանուցում է տպարանին մուրհակի տպագրության համար:
4. ՀՀ ՖՆ պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչությունը տպագրված փոխանցելի մուրհակը տպարանից ստանալուց հետո, 2 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է ՀՀ ՖՆ գլխավոր քարտուղարին՝ ստորագրման և կնքման համար, այնուհետև 2 աշխատանքային օրվա ընթացքում փոխանցելի մուրհակը համապատասխան գրանցամատյանում հաշվառվում և համապատասխան գրությամբ ուղարկում է ԴԱՀԿ ստորաբաժանում:
5. ՀՀ ՖՆ պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչությունը յուրաքանչյուր փոխանցելի մուրհակի թողարկումից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում նախապատրաստում է գրություն ՀՀ ՖՆ բյուջետային գործընթացի կառավարման վարչությանը՝ կցելով հաջորդ բյուջետային տարում մարվող փոխանցելի մուրհակների վերաբերյալ տեղեկանք:
6. Փոխանցելի մուրհակները հաշվառում են փաստաթղթային (գրանցամատյան) և էլեկտրոնային տարբերակներով:
7. Եթե, ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության եզրակացությունը համապատասխանում է 2-րդ կետի «դ» պարբերությանը ապա՝ ՀՀ ՖՆ պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչությունը այն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հաշվանցման վերաբերյալ ծանուցում է ԴԱՀԿ համապատասխան ստորաբաժանմանը:
8. Մուրհակատերերի կողմից փոխանցված տուրքի հետ վերադարձի վերաբերյալ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության կողմից դրական եզրակացություն ստանալուց հետո՝ ՀՀ ՖՆ պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին ծանուցում է ՀՀ ՖՆ գործառնական վարչություն:
9. ՀՀ ՖՆ գործառնական վարչությունը տեղեկատվությունը ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում կատարում է տուրքի փոխանցում:
10. Մուրհակի մարման ժամկետը լրանալու օրվանից սկսած 15-օրյա պարբերությամբ, մինչև մուրհակի փաստացի մարումը, ՀՀ կենտրոնական բանկին ներկայացվում է տեղեկատվություն՝ տվյալ օրվա դրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունում վարվող գրանցամատյանում գրանցված մուրհակատիրոջ տվյալների մասին: Մուրհակատերը մուրհակը ներկայացնում է կենտրոնական բանկ և իրականացվում է մուրհակի մարումը:
11. ՀՀ կենտրոնական բանկի կողմից մուրհակով պայմանավորված վճարումն իրականացնելու վերաբերյալ տեղեկությունները ստանալուց հետո պատրաստվում և գործառնական վարչությանն է ներկայացվում բյուջետային փոխանցագիր և վճարման հանձնարարագիր՝ մուրհակի վճարմամբ պայմանավորված ծախսերը համապատասխան ձևակերպում տալու համար:


<p>Ընթացք 2</p>	<ol style="list-style-type: none"> 1. ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի քարտուղարությունը 1 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ՖՆ կողմից թողարկված փոխանցելի մուրհակի մուրհակատիրոջ հետ կնքված պահանջի իրավունքը զիջելու մասին պայմանագիրը՝ գնորդի կողմից ներկայացված գրությանը կից ստանալուց և գրանցելուց հետո հասցեագրում է հետևյալ հերթականությամբ. <ul style="list-style-type: none"> • ՀՀ ՖՆ պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչությանը, • ՀՀ ՖՆ իրավաբանական վարչությանը: 2. ՀՀ ՖՆ իրավաբանական վարչությունը՝ փաստաթղթերը ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում՝ ՀՀ ՖՆ պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչությանն է ներկայացնում իրավաբանական եզրակացություն՝ <ul style="list-style-type: none"> ա) մուրհակատիրոջ համապատասխան փոփոխություն կատարելու վերաբերյալ, բ) մերժման դեպքում ներկայացնում է նաև դրա իրավական հիմքը: 3. ՀՀ ՖՆ պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչությունը եզրակացությունը ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում արդյունքների մասին գրավոր տեղեկացնում է պայմանագրի կողմերին: 		
<p>Ընթացք 3</p>	<ol style="list-style-type: none"> 1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մուրհակների տպագրության ծառայությունների ձեռքբերման համար գնման գործընթացի իրականացման պատասխանատու ստորաբաժանում սահմանվում է վարչությունը, որն էլ նախագծում է գնման ժամանակացույցը և ներկայացնում նախարարության համապատասխան ստորաբաժանմանը՝ գործընթացն սկսելու և մրցույթի հաղթող ճանաչված անձի հետ ծառայությունների ձեռքբերման պայմանագիրը կնքելու համար: 2. Իրականացվում է մուրհակի մարման հաշվառում, ինչպես նաև պատրաստվում է տեղեկանք՝ մուրհակի մարման վերաբերյալ, որը տրամադրվում է բյուջեների կատարման հաշվետվությունների և վերլուծության վարչություն: 		
<p>Մուտքագրվող տվյալներ</p>	<p>Դատարանի վճիռ:</p> <table border="1" data-bbox="427 1241 2179 1331"> <tr> <td data-bbox="427 1241 1301 1331" style="text-align: center;">Տվյալ</td> <td data-bbox="1301 1241 2179 1331" style="text-align: center;">Նկարագրություն</td> </tr> </table>	Տվյալ	Նկարագրություն
Տվյալ	Նկարագրություն		

	Մուրհակի սերիա	տեքստային և թվային դաշտ
	Մուրհակի համար	թվային դաշտ
	Մուրհակի բովանդակություն	տեքստային դաշտ
	Մուրհակի վճարման ժամկետ	ցպահանջ կամ ժամկետային
	Մուրհակի վճարման վայր	տղեկատու
	Մուրհակի կազմման ամսաթիվ և վայր	տեքստային և թվային
	Մուրհակի տոկոսադրույք	անտոկոս կամ տոկոսային
Ելքագրվող տվյալներ	Փոխանցելի մուրհակ:	
Վալիդացիա	Չկա:	



Ստորաբաժանում	Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչություն
Անվանում	ԳՁ - ՊԿՎՅ - Բարեգործական ծրագրեր որակելու վերաբերյալ կարծիքների ներկայացում
Նպատակ	Ճրագիրը որպես բարեգործական ծրագրի որակում
Տիրույթ	Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչություն, Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով
Դերակատարներ	ՀՀ ՖՆ, Բարեգործության ոլորտը համակարգող ՀՀ փոխվարչապետ - լիազորված մարմին
Ընթացք 1	<ol style="list-style-type: none"> 1. Բարեգործի կողմից հայտը լիազորված մարմին ստացվելուց հետո, մինչև դրա վերաբերյալ որոշում ընդունելը, բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովը ապահովում է ՀՀ շահագրգիռ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կարծիքների ստացումը հայտի վերաբերյալ և դրանց հիման վրա՝ քննարկման արդյունքում առաջարկություն է ներկայացնում լիազորված մարմին: 2. Հանձնաժողովի կողմից հայտի տեսքով ներկայացվում են ծրագրերը և բարեգործության ոլորտը համակարգող ՀՀ փոխվարչապետի որոշումների նախագծերը: Ստացված հայտերը, ծրագրերը՝ ներառյալ ծրագրի բյուջեները, ժամկետները, հանրապետության ներսում ապրանքների և ծառայությունների ձեռքբերման, արտերկրից բեռների ներմուծման գործարքները, ինչպես նաև ծրագրով նախատեսված բարեգործական նախաձեռնության նպատակները ուսումնասիրվում են ՀՀ ՖՆ պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչության կողմից, ստուգվում են դրանց համապատասխանությունը «Բարեգործության մասին» ՀՀ օրենքով սահմանված բարեգործության սկզբունքներին և ՀՀ կառավարության 16.01.2003թ. N 66-Ն որոշմամբ սահմանված կարգին, ուսումնասիրվում են հայտով ներկայացված ծրագրերը, ծրագրերը բարեգործական որակելու, կամ արդեն բարեգործական որակված ծրագրերի շրջանակներում որպես հարակից գործարքներ որակելու մասին ՀՀ փոխվարչապետի որոշման նախագծերը, ծրագրերի բյուջեներն ու ժամկետները, ծրագիրը բարեգործական որակելու, այդպիսի ծրագրերի հետ անմիջականորեն կապված ու դրանց համար զգալի նշանակություն ունեցող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների շրջանակը: 3. Այնուհետև ներկայացված հայտի և ՀՀ փոխվարչապետի որոշումների նախագծերի վերաբերյալ ներկայացվում են համապատասխան առաջարկություններ և դիտողություններ: 4. Վարչության պետը մասնակցում է հանձնաժողովի նիստերին՝ որպես հանձնաժողովի անդամ: 5. ՀՀ փոխվարչապետի կողմից հաստատված բարեգործական ծրագրերի և հարակից գործարքների մասին որոշումները ստանալուց հետո դրանք հաշվառվում են էլեկտրոնային եղանակով, գրանցվում են ծրագրերի


	բյուջեները՝ ներառյալ յուրաքանչյուր բյուջետային տարվա ընթացքում բարեգործական որակված ծրագրերի արժեքները, դրանց հարակից գործարքները և մեկանգամյա ներմուծման կամ ձեռքբերման գործարքները:
Մուտքագրվող տվյալներ	
Ելքագրվող տվյալներ	տես այստեղ և այստեղ :
Վալիդացիա	Չկա:



Ստորաբաժանում Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչություն

Անվանում	ԳՁ - ՊԿՎԿ - ՀՀ օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրամադրված ապրանքային և ոչ ապրանքային դրամաշնորհների հաշվառում
Նպատակ	Դրամաշնորհների հաշվառում
Տիրույթ	Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչություն, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին
Դերակատարներ	ՀՀ ՖՆ, ՀՀ կառավարության մարմիններ
Բազմընթացք	Եռամսյակային և տարեկան պարբերականությամբ
Ընթացք 1	<ol style="list-style-type: none"> 1. Հայաստանի Հանրապետությանն օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև այլ անձանց կողմից տրամադրված դրամաշնորհների վարաբերյալ պայմանագրերի հաշվառումն իրականացնելու նպատակով յուրաքանչյուր պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում այդ պայմանագրերում ՀՀ կառավարությունը ներկայացնող մարմինները (այսուհետ՝ պատասխանատու պետական մարմիններ) ՀՀ ՖՆ են ներկայացնում պայմանագրի պատճեն: 2. Փաստաթղթերը ՀՀ ՖՆ աշխատակազմի քարտուղարություն մուտք գործելուց հետո ուղարկվում են ՀՀ ՖՆ պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչություն, այնուհետև դրամաշնորհների, դրամայնեցման, ծրագրային վարկերի և մուրհակների բաժին: 3. Առաջարկություններ, կամ դիտողություններ (եթե այպիսիք կան) ներկայացնելուց հետո՝ դրամաշնորհների, դրամայնեցման, ծրագրային վարկերի և մուրհակների բաժինը դրամաշնորհը ստացող պատասխանատու պետական մարմնին տեղեկացնում է համապատասխան պայմանագրերի շրջանակներում փաստացի ստացված դրամաշնորհների և դրանց հետագա օգտագործման վերաբերյալ եռամսյա և տարեկան պարբերականությամբ հաշվետվություններ ներկայացնելու մասին: 4. Պայմանագրերը նախարարության կողմից հաշվառվում են այդ նպատակով վարվող գրանցամատյանում: 5. Պայմանական դրամաշնորհների տրամադրման հետ կապված պայմանագրերի շրջանակներում որևէ պայմանի փոփոխության դեպքում պատասխանատու պետական մարմինը 5 աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է նախարարությանը՝ վերջինիս տրամադրելով կատարված փոփոխությունը պարունակող փաստաթղթերի պատճենները: 6. Եթե պայմանական դրամաշնորհների շրջանակներում կնքված պայմանագրերում նշված պայմանների կատարման համար սահմանված են ժամկետներ, ապա տվյալ ժամկետները լրանալուց հետո պատասխանատու

	<p>պետական մարմինը 10 աշխատանքային օրվա ընթացքում դրանց կատարման և ընթացքի մասին հաշվետվություններ է ներկայացնում նախարարություն:</p> <p>7. Դրամաշնորհների, դրամայնեցման, ծրագրային վարկերի և մուրհակների բաժինը եռամսյակային պարբերականությամբ, մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 20 աշխատանքային օրվա ընթացքում ամփոփելով նախարարություն ներկայացված հաշվետվությունները՝ համադրված տեսքով դրանք տրամադրում է տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին, որն էլ հրապարակում է նախարարության ինտերնետային էջում (տարեկան կտրվածքով, նաև առանձին տեղեկագրում):</p> <p>8. Դրամաշնորհների, դրամայնեցման, ծրագրային վարկերի և մուրհակների բաժինը ապահովում է դրամաշնորհների ու դրանց օգտագործման ուղղությունների վերաբերյալ տեղեկատվության արտացոլումը ՀՀ պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության առանձին հավելվածում:</p>
<p>Մուտքագրվող տվյալներ</p>	<ul style="list-style-type: none"> ● դրամաշնորհի տրամադրման պայմանագրի, կամ համաձայնագրի կնքման հերթական համարը և ամսաթիվը ● դրամաշնորհը տրամադրող օտարերկրյա պետության անունը, միջազգային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը, կամ այլ անձի անունը և բնակվելու վայրը ● պայմանագրով կամ համաձայնագրով սահմանված՝ դրամաշնորհի ծրագրի անվանումը ● պայմանագրով, կամ համաձայնագրով սահմանված՝ դրամաշնորհի տրամադրման ուղղությունը (պետական բյուջե, արտաբյուջետային հաշիվներ կամ այլ) և դրա շրջանառման եղանակը (գանձապետական հաշիվներով կամ գանձապետական հաշիվներից դուրս) ● պայմանագրով, կամ համաձայնագրով նախատեսված (հատկացվելիք) դրամաշնորհի ընդհանուր գումարը և ուղղությունները: ● պայմանագրով, կամ համաձայնագրով հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված (հատկացվելիք) դրամաշնորհի գումարը և ուղղությունները ● պայմանագրի կամ համաձայնագրի շրջանակներում փաստացի ստացված (հատկացված) դրամաշնորհի ընդհանուր գումարը և դրա ծախսման ուղղությունները ● պայմանագրի կամ համաձայնագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում փաստացի ստացված (հատկացված) դրամաշնորհի գումարը և ուղղությունները
<p>Ելքագրվող տվյալներ</p>	<p>Դրամաշնորհային ծրագրի հաշվետվություն տես այստեղ:</p>
<p>Վալիդացիա</p>	



Ստորաբաժանում	Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչություն
Անվանում	ԳՅ - ՊԿԿԵ - Բյուջետային վարկերի և ենթավարկերի տրամադրում


Նպատակ	Վարկավորում
Տիրույթ	ՀՀ կառավարություն, ՀՀ \$Ն
Դերակատարներ	ՀՀ \$Ն քարտուղարություն, պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչություն, իրավաբանական վարչություն
Ընթացք 1	<p>Իրավաբանական անձանց, տեղական ինքնակառավարման մարմինների և ֆիզիկական անձանց կողմից բյուջետային վարկ ստանալու վերաբերյալ ներկայացված առաջարկությունների մասով կատարվում է անհրաժեշտ ցուցանիշների վերլուծություն, իրականացվում է քննարկում և առաջարկության վերաբերյալ հայտնվում է դիրքորոշում, բյուջետային վարկի տրամադրումը նպատակահարմար գտնելու դեպքում մշակվում է համապատասխան որոշման նախագիծ: Իրականացվում է առաջիկա տարվա և միջնաժամկետ ժամանակահատվածում բյուջետային վարկերի գծով պետական բյուջե վարկերի հիմնական գումարի և տոկոսագումարների մուտքերի կանխատեսումներ՝ ելնելով մուտքերի ռիսկայնությունից գնահատելով նաև դրանց իրատեսականությունը: Կանխատեսումների վերաբերյալ ցուցանիշները ներկայացվում է համապատասխան ստորաբաժանում՝ տարեկան և միջնաժամկետ ծախսային ծրագրերում ընդգրկելու նպատակով:</p> <ol style="list-style-type: none"> 1. Ուսումնասիրվում է բյուջետային վարկ ստանալու համար ներկայացված հայտում ընդգրկված փաստաթղթերը. <ul style="list-style-type: none"> • ընկերության ակտիվները և պասիվները, երկարաժամկետ և կարճաժամկետ պարտավորությունները, • ընկերության կանխիկ դրամական հոսքերը, • գնահատվում է բյուջետային վարկի միջոցով ներգրավվող ֆինանսական միջոցների ազդեցությունը ընկերության տնտեսական ցուցանիշների վրա և ստանձնող պարտավորությունների ռիսկայնությունը: <p>Հայտը ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում վերլուծության և քննարկումների հիման վրա ներկայացնում է դիրքորոշում բյուջետային վարկի տրամադրման նպատակահարմարության վերաբերյալ՝</p> <ul style="list-style-type: none"> ա) հայտը ոչ հիմնավոր ճանաչելու դեպքում այն գրությամբ վերադարձնում է համապատասխան մարմին՝ նշելով հայտը մերժելու պատճառները. բ) մշակվում է ՀՀ կառավարության կողմից բյուջետային վարկ տրամադրելու մասին որոշման նախագիծ ու տրամադրվում ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան ստորաբաժանումների քննարկմանը: 2. ՀՀ ֆինանսների նախարարության ստորաբաժանումների կողմից տրված առաջարկությունների, կամ դիտողությունների հիման վրա կատարվում է ՀՀ կառավարության որոշման նախագծի լրամշակում, որից հետո որոշման նախագիծը ներկայացվում է շահագրգիռ մարմինների քննարկմանը և փորձագիտական եզրակացությանը:

3. Շահագրգիռ կողմերի կարծիքները ամփոփելուց հետո լրամշակված որոշման նախագիծը համապատասխան հիմնավորումներով և տեղեկանքներով ներկայացվում է ՀՀ կառավարության քննարկմանը: ՀՀ կառավարության կողմից դիտողությունների առկայության դեպքում բյուջետային վարկ տրամադրելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը լրամշակվում է:
4. Ներկայացված որոշման նախագիծը ՀՀ կառավարության կողմից հավանության արժանանալու և ընդունվելու դեպքում գրությամբ կամ հեռախոսազանգով ծանուցվում է վարկառուին անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու համար:
5. Ուսումնասիրվում են վարկառուի կողմից ներկայացված փաստաթղթերը և, եթե դրանցում առկա են թերություններ կամ չեն համապատասխանում պահանջներին՝ լրացուցիչ տեղյակ է պահվում վարկառուին:
6. Փաստաթղթերի ամբողջականության ու համապատասխանության դեպքում կազմվում են գրավի և բյուջետային վարկի տրամադրման պայմանագրերի նախագծեր, որոնք ներկայացվում են քննարկման ՀՀ ֆինանսների նախարարության շահագրգիռ ստորաբաժանումներին, վերջիններիս կողմից դիտողությունների առկայության դեպքում լրամշակվում են և ներկայացվում ստորագրության:
7. Կողմերի միջև կնքված գրավի պայմանագրի հիման վրա սահմանված կարգով իրականացվում է վարկառուի կամ երրորդ կողմ հանդիսացող անձի անշարժ (նոտարական վավերացմամբ) և շարժական գույքի պետական գրանցում:
8. Վարկային պայմանագրի հիման վրա իրականացվում է վարկային գումարների տրամադրումը վարկառուին՝ կազմվում են համապատասխան վճարման փաստաթղթեր, ներկայացվում ստորագրման և տրվում կատարման:
9. Իրականացվում է տրամադրված վարկերի գծով վարկառուների կողմից մարման ենթակա պարտավորությունների և փաստացի կատարված մարումների ամենօրյա ընթացիկ հաշվառում: Ընկերության գործունեության վերաբերյալ անհրաժեշտ տվյալներ ստանալու միջոցով գնահատվում է տրամադրված վարկի շրջանակներում ստանձնած պարտավորության ընթացիկ ռիսկայնությունը, ներկայացնում առաջարկություններ առաջացած խնդիրների լուծման ուղղությամբ:
10. Վարկառուներին ըստ գործող պայմանագրերի ծանուցվում է վարկային պարտավորությունների մարման ժամկետների և չափի վերաբերյալ:
11. Տրամադրված վարկերի և դրանց պարտավորությունների վերաբերյալ ամսական, եռամսյակային, տարեկան պարբերականությամբ կազմվում են հաշվետվություններ և տրամադրում նախարարության համապատասխան ստորաբաժանումներին և այլ շահագրգիռ կազմակերպություններին, ինչպես նաև նախարարության ինտերնետային էջում տեղադրելու նպատակով ներկայացվում են տեղեկատվության և հասարակության հետ կապերի բաժին:

	<ol style="list-style-type: none"> 12. Վառկառուի կողմից վարկային պարտավորությունների ամբողջական մարման դեպքում պատրաստվում է գրություն պետական գրանցում իրականացնող մարմիններին գրավի առարկան արգելանքից հանելու վերաբերյալ: 13. Հաշվառումների և վերլուծությունների արդյունքում ի հայտ եկած ժամկետանց պարտավորությունների գծով կազմվում են համապատասխան ծանուցումներ և ներկայացվում վարկառուներին: 14. Վարկառուների կողմից ժամկետանց պարտավորությունների չմարման դեպքում պատրաստվում են համապատասխան տեղեկանքներ և ներկայացվում նախարարության իրավաբանական վարչությանը՝ ժամկետանց պարտավորությունները օրենքով սահմանված կարգով բռնագանձելու համար: 15. Դատական կարգով վարկային պարտավորությունների գանձման դեպքում գանձված գումարների գծով իրականացվում է ամենօրյա հաշվառում և ըստ անհրաժեշտության վարկային պարտավորությունների մնացորդների մասին համապատասխան տեղեկատվություն է ներկայացվում նախարարության իրավաբանական վարչությանը: 16. Վառկառուի կողմից վարկային պարտավորությունների ամբողջական մարման դեպքում իրականացվում է գործողություններ անշարժ և շարժական գույքի նկատմամբ արգելանքի իրավունքի դադարեցման ուղղությամբ:
Ընթացք 2	<ol style="list-style-type: none"> 1. Ենթավարկային դրույթ պարունակող վարկային համաձայնագրերի նախագծերի վերաբերյալ (որոնց հիման վրա պետք է տրամադրվեն ենթավարկեր) քննարկման արդյունքում՝ ներկայացվում են առաջարկություններ և դիտողություններ: 2. Օտարերկրյա պետությունների կամ միջազգային կազմակերպությունների հետ կնքված վարկային համաձայնագրի շրջանակներում ենթավարկի տրամադրման նպատակով մշակվում է ծրագիրն իրականացնողի հետ կնքման ենթակա ենթավարկային պայմանագրի նախագիծ՝ վարկային համաձայնագրի պայմաններին (մարման ժամանակացույց, տոկոսադրույք, պարբերականություն, գրավի առարկա և այլն) համապատասխան և ներկայացվում նախարարության շահագրգիռ ստորաբաժանումների քննարկմանը: 3. Ստորաբաժանումների կողմից ներկայացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա ենթավարկային պայմանագիրը լրամշակվում է և քննարկվում վարկառուի (ծրագիրն իրականացնողի) հետ: 4. Կողմերի միջև կնքված գրավի պայմանագրի հիման վրա սահմանված կարգով իրականացվում է վարկառուի կամ երրորդ կողմ հանդիսացող անձի անշարժ (նոտարական վավերացմամբ) և շարժական գույքի պետական գրանցում: 5. Ուսումնասիրվում է վարկային ծրագրի շրջանակներում ՀՀ տարածքում առաջացող հարկերի և տուրքերի գծով ծախսեր կատարելու նպատակով ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորման գումար հատկացնելու համար ներկայացված փաստաթղթերը և փաստաթղթերի ամբողջականության ու համապատասխանության դեպքում իրականացվում է համաֆինանսավորման գումարի տրամադրում ծրագիրն իրականացնողին:

	<ol style="list-style-type: none"> 6. Իրականացվում է տրամադրված ենթավարկի ընթացիկ հաշվառում: Ընկերության գործունեության վերաբերյալ անհրաժեշտ տվյալներ ստանալու միջոցով գնահատվում է տրամադրված ենթավարկի շրջանակներում ստանձնած պարտավորության ընթացիկ ռիսկայնությունը, ներկայացնում առաջարկություններ առաջացած խնդիրների լուծման ուղղությամբ: 7. Վարկային պայմանագրերի փոփոխության դեպքում համապատասխան փոփոխություններ են իրականացվում ենթավարկային պայմանագրերում: 8. Վարկառուներին ըստ գործող պայմանագրերի ծանուցվում է վարկային պարտավորությունների մարման ժամկետների և չափի վերաբերյալ: 9. Տրամադրված վարկերի և դրանց պարտավորությունների վերաբերյալ ամսական, եռամսյակային, տարեկան պարբերականությամբ կազմվում են հաշվետվություններ և տրամադրվում նախարարության համապատասխան ստորաբաժանումներին և այլ շահագրգիռ կազմակերպություններին, ինչպես նաև նախարարության ինտերնետային էջում տեղադրելու նպատակով ներկայացվում են տեղեկատվության և հասարակության հետ կապերի բաժին: 10. Վարկառուի կողմից վարկային պարտավորությունների ամբողջական մարման դեպքում պատրաստվում է գրություն պետական գրանցում իրականացնող մարմիններին գրավի առարկան արգելանքից հանելու վերաբերյալ: 11. Հաշվառումների և վերլուծությունների արդյունքում ի հայտ եկած ժամկետանց պարտավորությունների գծով կազմվում են համապատասխան ծանուցումներ և ներկայացվում վարկառուներին: 12. Վարկառուների կողմից ժամկետանց պարտավորությունների չմարման դեպքում պատրաստվում են համապատասխան տեղեկանքներ և ներկայացվում նախարարության իրավաբանական վարչություն՝ ժամկետանց պարտավորությունները օրենքով սահմանված կարգով բռնագանձելու համար: 13. Դատական կարգով վարկային պարտավորությունների գանձման դեպքում գանձված գումարների գծով իրականացվում է ամենօրյա հաշվառում և անհրաժեշտության դեպքում վարկային պարտավորությունների մնացորդների մասին համապատասխան տեղեկատվություն է ներկայացվում նախարարության իրավաբանական վարչություն: 14. Վառկառուի կողմից վարկային պարտավորությունների ամբողջական մարման դեպքում իրականացվում է գործողություններ անշարժ և շարժական գույքի նկատմամբ արգելանքի իրավունքի դադարեցման ուղղությամբ:
Մուտքագրվող տվյալներ	Բյուջետային վարկ ստանալու վերաբերյալ հայտ: Վարկային համաձայնագիր:

Ելքագրվող տվյալներ	Բյուջետային վարկ տրամադրելու վերաբերյալ կառավարության որոշման նախագիծ: Բյուջետային վարկ` այստեղ : Ենթավարկային պայմանագիր: Ենթավարկ:
Վալիդացիա	Չկա:



Ստորաբաժանում	Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչություն
Անվանում	ԳՁ - ՊԿՎԾ - Բյուջետային երաշխիքների տրամադրում

Նպատակ	Երաշխիքի տրամադրում
Տիրույթ	Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչություն, այլ վարչություններ
Դերակատարներ	ՀՀ կառավարություն, ՀՀ ՖՆ, շահագրգիռ մարմիններ
Ընթացք 1	<p>Բյուջետային երաշխավորագրերը տրամադրվում են համապետական նշանակության՝ օրենքով, կամ ՀՀ կառավարության կողմից հաստատված նպատակային ծրագրերում ընդգրկված իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ձեռնարկությունների, նաև սոցիալական ենթակառուցվածքի զարգացման ծրագրերի շրջանակներում ներդրումներ իրականացնող տեղական ինքնակառավարման մարմինների հայտերով՝ որպես նշված ծրագրերի շրջանակներում այլ անձանց նկատմամբ առաջացող պարտավորությունների կատարման ապահովման միջոց: ՀՀ ֆինանսների նախարարությունը բյուջետային երաշխիք տրամադրելու վերաբերյալ հայտերը ոլորտը կարգավորող պետական կառավարման մարմնից, կամ համապատասխան մարզպետարանից ստանալուց հետո՝ ուսումնասիրում է հայտում ընդգրկված փաստաթղթերը:</p> <p>ընկերության ակտիվները և պասիվները, երկարաժամկետ և կարճաժամկետ պարտավորությունները, ընկերության կանխիկ դրամական հոսքերը,</p> <p>գնահատվում է երաշխիքի միջոցով ներգրավվող ֆինանսական միջոցների ազդեցությունը ընկերության տնտեսական ցուցանիշների վրա և ստանձնվող պարտավորությունների ռիսկայնությունը,</p> <p>քննարկման և վերլուծության արդյունքների հիման վրա հայտ ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում՝</p> <p>ա) հայտը ոչ հիմնավոր ճանաչելու դեպքում այն գրությամբ վերադարձնում է միջնորդությամբ հանդես եկած մարմնին՝ նշելով հայտը մերժելու պատճառները:</p> <p>բ) հայտը հիմնավոր ճանաչելու դեպքում մշակվում է ՀՀ կառավարության կողմից բյուջետային երաշխիք տրամադրելու մասին որոշման նախագիծ և քննարկման համար տրամադրվում ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան ստորաբաժանումներին:</p> <p>Ստորաբաժանումների կողմից տրված առաջարկությունների կամ դիտողությունների հիման վրա կատարվում է նախագծի լրամշակում, որից հետո նախագիծը ներկայացվում է շահագրգիռ մարմինների քննարկմանը և փորձագիտական եզրակացությանը:</p> <p>Առաջարկները և դիտողությունները ամփոփվելուց հետո նախագծի լրամշակված տարբերակը համապատասխան հիմնավորումներով և տեղեկանքներով ներկայացվում է ՀՀ կառավարության քննարկմանը:</p> <p>Նախագիծը ՀՀ կառավարության կողմից հավանության արժանանալու և ընդունվելու դեպքում մշակվում է տրամադրվող բյուջետային երաշխիքի ձևանմուշի նախագիծ և քննարկման է ներկայացվում նախարարության շահագրգիռ ստորաբաժանումներին:</p> <p>Փաստաթղթերի ամբողջականության ու համապատասխանության դեպքում կազմվում են գրավի և բյուջետային երաշխիքի տրամադրման պայմանագրերի նախագծեր, որոնք ներկայացվում են քննարկման ՀՀ ֆինանսների</p>

Նախարարության շահագրգիռ ստորաբաժանումներին, վերջիններիս կողմից դիտողությունների առկայության դեպքում լրամշակվում են և ներկայացվում ստորագրության:

Իրականացվում է անշարժ գույքի (նոտարական վավերացմամբ) և շարժական գույքի գրավադրման հետ կապված գործողություններ:

Բյուջետային երաշխիքի ձևանմուշը լրամշակվում է և ներկայացվում է նախարարի ստորագրմանը:

Նախարարի կողմից ստորագրված բյուջետային երաշխիքը տրամադրվում է երաշխավորվողին:

Իրականացվում է ընթացիկ հաշվառում և ընկերության գործունեության վերաբերյալ անհրաժեշտ տվյալներ ստանալու միջոցով գնահատվում է տրամադրված երաշխիքի շրջանակներում ստանձնած պարտավորության ընթացիկ ռիսկայնությունը, ներկայացվում առաջարկություններ առաջացած խնդիրների լուծման ուղղությամբ:

Երաշխիքային պարտավորությունների ամբողջական մարման դեպքում պատրաստվում է գրություն պետական գրանցման կազմակերպություններին գրավի առարկան առբեւանքից հանելու վերաբերյալ:

Հաշվառումների և վերլուծությունների արդյունքում ի հայտ եկած ժամկետանց պարտավորությունների գծով կազմվում են համապատասխան ծանուցումներ և ներկայացվում երաշխավորված անձանց:

Երաշխավորված անձանց կողմից ժամկետանց պարտավորությունների չմարման դեպքում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին երաշխիքային պարտավորության մարում:

ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին երաշխիքային պարտավորությունների մարումից հետո տվյալ պարտավորությունը որպես վարկ ձևակերպելու նպատակով կազմվում է վարկային պայմանագրի նախագիծ և ներկայացվում շահագրգիռ ստորաբաժանումների քննարկմանը:

Վարկային պայմանագրի լրամշակված նախագծերը ներկայացվում են ստորագրման:

Իրականացվում է վարկային պարտավորությունների ընթացիկ հաշվառում:

Վարկառուներին ըստ գործող պայմանագրերի ծանուցվում է վարկային պարտավորությունների մարման ժամկետների և չափի վերաբերյալ:

Տրամադրված վարկերի և դրանց պարտավորությունների վերաբերյալ ամսական, եռամսյակային, տարեկան պարբերականությամբ կազմվում են հաշվետվություններ և տրամադրում նախարարության համապատասխան ստորաբաժանումներին և այլ շահագրգիռ կազմակերպություններին:

Վառկառուի կողմից վարկային պարտավորությունների ամբողջական մարման դեպքում պատրաստվում է գրություն պետական գրանցման կազմակերպություններին գրավի առարկան արգեւանքից հանելու վերաբերյալ:

Հաշվառումների և վերլուծությունների արդյունքում ի հայտ եկած ժամկետանց պարտավորությունների գծով կազմվում են համապատասխան ծանուցումներ և ներկայացվում վարկառուներին:

Վարկառուների կողմից ժամկետանց պարտավորությունների չմարման դեպքում պատրաստվում են համապատասխան տեղեկանքներ և ներկայացվում նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչությանը՝ ժամկետանց պարտավորությունները օրենքով սահմանված կարգով բռնագանձելու համար:

	<p>Դատական կարգով վարկային պարտավորությունների գանձման դեպքում գանձված գումարների գծով իրականացվում է ամենօրյա հաշվառում և վարկային պարտավորությունների մնացորդների մասին համապատասխան տեղեկատվություն է ներկայացվում նախարարության իրավաբանական վարչությանը:</p> <p>Վառկառուի կողմից վարկային պարտավորությունների ամբողջական մարման դեպքում իրականացվում է գործողություններ անշարժ և շարժական գույքի նկատմամբ արգելանքի իրավունքի դադարեցման ուղղությամբ:</p>
Մուտքագրվող տվյալներ	Բյուջետային երաշխիք ստանալու վերաբերյալ հայտ:
Ելքագրվող տվյալներ	Բյուջետային երաշխիք տրամադրելու վերաբերյալ կառավարության որոշման նախագիծ: Բյուջետային երաշխիք՝ տես այստեղ :
Վալիդացիա	Չկա

Տվյալների փոխանակում ԿՖԿՏՅ այլ մոդուլների և արտաքին աղբյուրների հետ

Տվյալների տրամադրում	Տվյալների ստացում							
	Բյուջետավորում	Գանձապետական	Գնումներ	Պետական պարտք	Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում	Ներքին աուդիտ **	Մակրոտնտեսական քաղաքականություն	Արտաքին աղբյուրներ
Բյուջետավորում		<p>1. Ծրագիր, միջոցառում</p> <p>2. Առաջիկա տարվա հաստատված բյուջեի պլան</p> <p>3. Պլանի վերաբաշխում</p> <p>4. *Եկամտային/ծախսային հաշիվների բացման վերաբ. տեղեկատվություն</p> <p>5. Հաստատված եռամսյակային համամասնություններ</p> <p>6. *Պետական բյուջեի տարեկան հաշվետվության «Մոնիալ-տնտեսական զարգացման և</p>	<p>1. Տարեկան գնումների պլան /ծրագիր, միջոցառում, տնտեսագիտական հոդված/</p>	<p>1. *մուրհակների մարումների, տրամադրված վարկերի և փոխատվությունների վերադարձից մուտքերի, Արցախի Հանրապետությանը տրամադրվելիք միջպետական վարկի, վարկերի և փոխատվությունների տրամադրումից մուտքերի, ինչպես նաև արտաքին վարկերի ծավալների</p>		<p>1. *Բյուջետային ծրագրեր (արդյունքային, ֆինանսական, ոչ ֆինանսական ցուցանիշներ)</p> <p>2. *Բյուջեների վերաբաշխումներ</p> <p>3. *Բյուջետային ծրագրերի կատարում</p>	<p>1. *այլ եկամուտների և պաշտոնական դրամաշնորհների գծով կանխատեսումներ</p> <p>2. * ծախսերի տնտեսագիտական բացվածքի գծով կանխատեսումներ</p>	<p>1. * ՏԿԵՆ-ին համայնքների բյուջեների նախագծերի կազմման մեթոդական ցուցումներ, 2. *ՏԿԵՆ-ին «Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող` ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների հաշվարկման հիմքում դրվող ելակետային տվյալների ցանկի, դրանք</p>

		<p>հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները» բաժնի համապատասխան ենթաբաժինը (տվյալ տարվա բյուջետային ուղերձին համապատասխան)</p>		կանխատեսումները			<p>հաշվարկելու կարգի, ներկայացման ձևի, այն լրացնելու կարգի և ներկայացնելու ժամկետի մասին» ՀՀ Ֆինանսների նախարարի հրամանի նախագծը, 3. *</p> <p>Արդարադատության նախարարությանը «Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող` ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների հաշվարկման հիմքում դրվող ելակետային տվյալների ցանկի, դրանք հաշվարկելու կարգի, ներկայացման ձևի, այն</p>
--	--	---	--	-----------------	--	--	--

							լրացնելու կարգի և ներկայացնելու ժամկետի մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի նախագծը, 4. * ՀՀ Վարչապետին- ՄԺԾԾ նախագծի տրամադրում
--	--	--	--	--	--	--	--

<p>Գանձապետարան</p>	<p>1. Փաստացի ստացված եկամուտների վերաբերյալ տեղեկատվություն 2. Փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն 3. Պահուստի ստեղծում /բյուջեի նվազեցման դեպքում/ 4. *Ծախսերի չափաքանակի բացման հայտ/գրություն 5. *Պահուստային ֆոնդի կարգավիճակ /տեղեկանք/ 6. Ծախսերի կատարման նախահաշիվներ 7. *Փոխանցելի մուրհակների և հաշվարկված տոկոսագումարների վերաբերյալ տեղեկանք 8. *Վարկերի</p>		<p>1. Գանձապետական ծախսային հաշվեհամարներ</p>	<p>1. GFS հաշվետվության տվյալներ 2. *Կանխիկ հոսքերի կանխատեսումներ 3. *Պետական բյուջեի կատարման մասին ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ/ տեղեկատվություն</p>	<p>1. Տրամադրված ֆինանսավորում 2. Հաշիվների մնացորդ 3. Վճարումների վերաբերյալ տվյալներ</p>	<p>1. Գանձապետական գործարքների տվյալներ (LS Finance) 2. *Պետական բյուջեի կատարման մասին եռամսյակային և տարեկան հաշվետվություններ/ տեղեկատվություն</p>	<p>1. *ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվության մասով տվյալներ 2. *Պետական բյուջեի կատարման մասին ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ/ տեղեկատվություն</p>	<p>1. Վճարային տվյալների տրամադրում ԿԲ և առևտրային բանկերին 2. *Պետական բյուջեի կատարման մասին եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացում Վարչապետի աշխատակազմ և հրապարակում նախարարության պաշտոնական կայքում 3. *Պետական բյուջեի կատարման մասին ամսական, եռամսյակային և տարեկան տեղեկատվություն Վիճակագրական կոմիտեին 4. *Համախմբված բյուջեի կատարման մասին եռամսյակային և</p>
---------------------	--	--	---	--	--	---	--	--

	<p>դիմաց մուտքերի վերաբերյալ տեղեկանք 9. *Թերակատարումների վերաբերյալ հաշվետվություն 10. *Տեղեկանք բյուջեի կատարման վերաբերյալ</p>						<p>տարեկան տեղեկատվություն Վիճակագրական կոմիտեին, Եվրասիական տնտեսական հանձնաժողովին , Եվրասիական զարգացման բանկին 5. *Պետական բյուջեի պարզեցված տարեկան հաշվետվության հրապարակում նախարարության պաշտոնական կայքում 6. *Պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ ամսական տեղեկատվության հրապարակում նախարարության պաշտոնական կայքում 7. *Պետական մարմինների արտաբյուջետային միջոցների եռամսյակային և տարեկան</p>
--	--	--	--	--	--	--	---

							<p>հաշվետվությունների հրապարակումն ախարարության պաշտոնական կայքում</p> <p>8. *Համայնքների բյուջեների կատարման մասին եռամսյակային և տարեկան ամփոփ հաշվետվությունների հրապարակումն ախարարության պաշտոնական կայքում</p> <p>9. *Պետական բյուջեի վերջին երեք տարիների կատարման մասին տեղեկատվության հրապարակումն ախարարության պաշտոնական կայքում հայերեն և անգլերեն լեզուներով</p> <p>10. *Պետական բյուջեի ամսական (կուտակային) ցուցանիշների</p>
--	--	--	--	--	--	--	---

								հրապարակում նախարարության ն պաշտոնական կայքում
--	--	--	--	--	--	--	--	---

Գնումներ	1. *Գնումների պլանի բացվածք /ըստ ծրագրի, միջոցառման, տնտեսագիտական հոդվածի/	<p>1. Գնումների պլանի փոփոխություն, լրացումներ</p> <p>2. Կնքված պայմանագրերի ու դրանց շրջանակում համաձայնագրերի փոփոխություն</p> <p>3. *Պետական բյուջեի տարեկան հաշվետվության «Մոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները» բաժնի համապատասխան ենթաբաժինը (տվյալ տարվա բյուջետային ուղերձին համապատասխան)</p>						1. Մասնակիցներ-Հրավեր, պայմանագրեր
----------	---	--	--	--	--	--	--	------------------------------------

<p>Պետական պարտք</p>	<p>1. *Գեֆիցիտի ֆինասավորման աղբյուրների վերաբերյալ տեղեկատվություն 2. *Կառավարության պարտքի կառավարման միջնաժամկետ ռազմավարություն 3. *Առաջիկա երեք տարիներին ստացվելիք բյուջետային մուտքերի (տոկոսավճար, մայր գումարի մարում) գծով կանխատեսումներ 4. *Շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի վճարումների ժամանակացույցի ու դրանց գծով պարտքային պորտֆելը բնութագրող ցուցանիշների (պարտքի ծավալ, միջին</p>	<p>1. *Ուղղակի վճարումների տվյալներ 2. *Ավանդադրման հայտ 3. *Գանձապետական պահառուի համակարգի միջոցով վաճառված պարտատոմսերի մուտքի վերաձևակերպման համար գրություն 4. *Պետական գանձապետական պարտատոմսերի սպասարկման ու մարման վճարումների փաստաթղթեր 5. *Ինայողական արժեկտրոնային պարտատոմսերի արժեկտրոնի վճարումների փաստաթղթեր 6. *Վարկի մասհանման գումարի ստացման ժամանակ միջնորդավճարի գանձման մասին տեղեկատվություն 7. *Կատարված</p>				<p>1. *Պարտքային գործիքների գրանցման, պարտքի ներգրավման, մարման և սպասարկամ պրոցեսներում առկա տեղեկատվություն 2. *ԳՄՀ-ում ազատ միջոցների ԿԲ-ում ավանդադրման պրոցեսներում առկա տեղեկատվություն 3. *ԿԲ-ում առկա ավանդի մարման պրոցեսներում առկա տեղեկատվություն</p>		<p>1. ՀՀ Կենտրոնական և դեպոզիտարիա - - *Պարտապոմսերի ԱՄՏԾ (ISIN) կոդի շնորհման համար անհրաժեշտ տվյալ՝ ԱՄՏԾ-ի շնորհման հայտ 2. ՀՀ ԿԲ - - *Պարտատոմսերի գրանցման համար տեղեկատվություն՝ «Գրանցվող պետական պարտատոմսի տվյալներ» փաստաթուղթ - *ԳՄՀ ժամանակավորապես ազատ միջոցների ավանդադրման հայտ - * ԿԲ-ում առկա ավանդի վաղաժամկետ մարման հայտ 3. ՀՀ Ֆոնդային Բորսա (QUIK համակարգ) -</p>
----------------------	--	---	--	--	--	---	--	---

	<p>տոկոսադրույք, ժամկետ և այլն) հիման վրա կատարված կանխատեսումներ առաջիկա երեք տարիների համար 5. *Առաջիկա երեք տարիներին Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կապիտալին բաժանորդագրության գծով վճարվելիք գումարների գծով կանխատեսումները</p>	<p>վարկի մասհանումը ԳԳՕ համակարգում գրանցելու նպատակով ներքին փաստաթուղթ 8. *Տոկոսավճարների կապիտալիզացման գործարքների գրանցումը ԳԳՕ համակարգում ապահովելու համար տեղեկատվություն 9. *Եռամսյակային/տարեկան կտրվածքով հաշվետվություն տարեսկզբից աճողական արտարժույթային պարտքի սպասարկման և մարման գծով փաստացի կատարված վճարումների մասին՝ համադրելով այլանային ցուցանիշների հետ 10. *Հաստատված վճարման հանձնարարական անակցեպտ</p>						<p>- *«Հայտարարություն պետական զանձապետական պարտատոմսերի տեղաբաշխման (հետզմման) աճուրդի կազմակերպման մասին» փաստաթուղթ - Թողարկողի հայտ - *Լրացուցիչ աճուրդի կազմակերպման հայտարարություն 4. Վարկատուների հարթակներ - *Համաստորագրողների մասին գրություն - Մասհանման հայտ</p>
--	--	--	--	--	--	--	--	---

		<p>զանձված զումարների մանրամասներով (վճարման տեսակ, զումար, ենթահաշիվ, բյուջետային դասակարգում և այլն)</p> <p>11. *Տարեկան պետական բյուջեում և եռամսյակային համամասնությունն երում վերաբաշխումներ կատարելու առաջարկություն</p> <p>12.</p> <p>*Շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի վճարումների ժամանակացույցի ու դրանց գծով պարտքային պորտֆելը բնութագրող ցուցանիշների (պարտքի ծավալ, միջին տոկոսադրույք, ժամկետ և այլն) հիման վրա կատարված կանխատեսումներ</p>						
--	--	--	--	--	--	--	--	--

		<p>առաջիկա երեք տարիների համար 13.</p> <p>*Արտարժույթային պարատատոմների վճարման պահանջագիր</p> <p>14. *Առաջիկա երեք տարիներին Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կապիտալին բաժանորդագրության գծով վճարվելիք գումարների գծով կանխատեսումներ</p> <p>15. *Տեղեկանքների հաշվետվությունների կազմման համար</p> <p>16. *Բյուջեի դեֆիցիտի ֆինասավորման կանխատեսում</p> <p>17. * Բյուջետային փոխանցագիր/վճարման հանձնարարագիր</p>					
Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում		<p>1. *Պետական բյուջեի տարեկան հաշվետվության «Մոնիթինգի» տնտեսական զարգացման և հարկաբյուջետային</p>		<p>1. *ՊՈԱԿ-ների գծով համախմբված դրամական հոսքերի մասին հաշվ. խմբավորված</p>		<p>1. *Ամփոփ տեղեկատվություն ՀՀ պետական բաժնեմասնակցությամբ առևտրային կազմակերպություն</p>	

		քաղաքականության հիմնական ուղղությունները» բաժնի համապատասխան ենթաբաժինը (տվյալ տարվա բյուջետային ուղերձին համապատասխան)		ըստ գործառնական դասակարգիչների		ունների կողմից տարեկան գործունեության արդյունքներով յուրաքանչյուր տարի պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերի և տարեվերջի դրությամբ առկա չմարված պարտավորությունների մասին			
Ներքին աուդիտ **	1. *Բյուջետային տարբեր ծրագրերի արդյունավետության գնահատման աուդիտի հաշվետվություններ	1. *Գանձապետական տարբեր պրոցեսների համապատասխանության աուդիտի հաշվետվություններ	1. *Գնումների պլանավորման աուդիտի հաշվետվություններ 2. *Գնումների կատարման աուդիտի հաշվետվություններ	1. *Պետական պարտքի կառավարման արդյունավետության գնահատման աուդիտի հաշվետվություն	2. *Համապատասխանության աուդիտի հաշվետվություն		1. *Մակրոտնտեսական կանխատեսումների արդյունավետության գնահատման աուդիտի հաշվետվություն		1. *Ըստ պահանջի հայցվող տեղեկատվության տրամադրում, եթե այն չի հանդիսանում զգայուն կամ զաղտնի (կազմակերպության ղեկավարի միջոցով)
Մակրոտնտեսական քաղաքականություն	1. *Մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակներ (հիմնականցուցանիշների կանխատեսումներ	1. *Պետական բյուջեի եռամսյակային և տարեկան հաշվետվությունների «Հարկաբյուջետային և		1. *Առաջիկա միջնաժամկետ հատվածի համար տարեկան մակրոտնտեսական շրջանակը՝ - ՀՆԱ-ն,		1. *Մակրոտնտեսական կանխատեսումների համար հիմք հանդիսացող ցուցանիշներ			

	<p>ր) 2. *Պետական բյուջեի ուղերձի և ՄԺԾԾ-ի համապատասխան բաժիններ</p>	<p>մակրոտնտեսական ամփոփագիր» և «ՀՀ մակրոտնտեսական և հարկաբյուջետային զարգացումներ» բաժինները, տարեկան հաշվետվության «Մոնիտինգի և տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները» բաժնի ներածությունը</p>		<p>ԱՄՆ դոլարի փոխարժեքը տարեվերջին, ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքը, գնաճը, ՀՀ արտաքին պահուստները</p>		<p>*Մակրոտնտեսական կանխատեսումն արի համար կիրառվող մոդելներ</p>		
--	--	---	--	---	--	---	--	--

<p>Արտաքին աղբյուրներ</p>	<p>1. * ԲԳԿ մարմիններից բյուջետային հյատեր՝ եկամուտների և ծախսերի մասով, 2. ՏԿԵՆ կայքից ՀՀ համայնքների բյուջեների եկամուտների հավաքագրման վերաբերյալ տեղեկատվություն , 3. * ՄԺԾԾ քննարկումների արձանագրություններ, 4. * ՀՀ Վարչապետի աշխատակազմը ներկայացնում է պաշտոնական դրամաշնորհների հայտը</p>	<p>1. Վճարային տվյալների ստացում ԿԲ-ից և առևտրային բանկերից (LS Finance) 2. * ԿԲ-ից փոխարժեքների, քաղվածքների ստացում (Lotus Nodes) 3. ՊԵԿ-ից միասնական հաշվից հարկերի վերադարձի հանձնարարական /վեր ծառայության միջոցով/ 4. * Գրություն պետական մարմիններից հաշիվների արգելադրումների կամ բռնագանձումների մասին 5. * ԴԱՀԿ-ից գրություն բռնագանձված գումարի վերադարձի մասին 6. * Մաքսային մարմիններից ԱԱՀ-ի վերադարձի գրություններ 7. ՊՈԱԿ-ների</p>	<p>1. Մասնակիցներ - Պայմանագրեր, Հանձնման-ընդունման անհրաժեշտ փաստաթղթեր, համաձայնագրեր 2. Մասնակիցների կողմից համակարգ ներբեռնվող հայտի փաթեթներ</p>	<p><u>1. ՀՀ Կենտրոնական ղեկավարի ան * Պարտապումսերի ԱՍՏԾ (ISIN) կոդ</u> <u>2. ՀՀ ԿԲ -</u> <u>=</u> <u>* Պարտատոմսերի գրանցման տեղեկատվություն,</u> <u>=</u> <u>* Պարտատոմսերի երկրորդային շուկայում մասնակիցների ցուցանիշներ</u> <u>3. ՀՀ Փոնդային Բորսա (QUIK համակարգ) -</u> <u>* Պետական Պարտատոմսերի աճուրդի արդյունքների տվյալներ (հայտարարություն, հաշվետվություն),</u> <u>=</u></p>		<p>Տարբեր մոդուլներում տարատեսակ աուդիտի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվություն արտաքին համարագրերից՝ ՊԵԿ, ԻԱՊՈ, ԲՊՈ, ԿԲ և այլ պետական գերատեսչական և/կամ կոմերցիոն կառույցներ</p>	<p>1. * Ոլորտային նախարարություններից կանխատեսումներ համապատասխան ոլորտի հիմնական ցուցանիշների վերաբերյալ, 2. * Տեղեկատվություն ՀՀ ՊԵԿ-ից հարկային եկամուտների փաստացի ցուցանիշների և դրանց բազաների վերաբերյալ 3. * ՀՀ ՊԵԿ-ից հարկային եկամուտների՝ ըստ հարկատեսակների կանխատեսումներ, 4. * Տեղեկատվություն ՀՀ ԿԲ-ից դրամավարկային հատվածի փաստացի օպերատիվ ցուցանիշների վերաբերյալ,</p>	
---------------------------	---	--	---	--	--	---	---	--

	<p>կողմից մատուցված ծառայությունների դիմաց ՀՂՄ սարքերի կամ POS տերմինալներով վճարված գումարների մուտքագրում գանձապետական հաշիվներին Ամերիաբանկի միջոցով</p> <p>8. E-payments համակարգից վճարումների ընդունում</p> <p>9. ԻԱ գրանցման տվյալներ (Իրավաբանական անձանց պետական ռեգիստր)</p> <p>10. Հաշվարկային փաստաթղթերի տվյալներ (ՊԵԿ-ի E-invoicing համակարգ)</p> <p>11. ԲԳԿ-ներից պետական բյուջեի կատարման վերաբերյալ ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ</p> <p>12. *Որոշ ԲԳԿ-</p>		<p><u>*Պարտատոմսերի առաջնային շուկայում մասնակիցների գուցանիշներ</u></p> <p>4. Depend - <u>Գրանցված ԻԱՊ-երի տվյալներ</u></p> <p>5. gp.minfin.am - <u>Գնված ԻԱՊ-երի տվյալներ</u></p> <p>6. <u>Վարկատուների հարթակներ - Մասհանման հայտի կարգավիճակի մասին տեղեկություն - Վճարման պահանջագիր</u></p>			<p>5. * Գնանի կանխատեսումներ ՀՀ ԿԲ-ից</p>	
--	--	--	--	--	--	--	--

		<p>ներից համայնքների հաշվետվությունների ընդունման համար անհրաժեշտ տվյալներ</p> <p>13. *ԲԳԿ-ներից պետական բյուջեի տարեկան հաշվետվությունների վերլուծական մաս, հավելվածներ, տեղեկանքներ, պետական հիմնարկի կողմից եկամուտների հավաքման մասին հաշվետվություններ (ձև Հ-1)</p>					
--	--	--	--	--	--	--	--

Ամբողջական տվյալները և դրանց կառուցվածքը ներկայացված են յուրաքանչյուր բիզնես գործընթացի նկարագրության մեջ

*** նշված են այն տվյալները, որոնք փոխանակվում են .xls կամ .word ձևաչափերով ֆայլերի տեսքով: Մյուս բոլոր տվյալները փոխանակվում են էլեկտրոնային համակարգերի միջոցով:**

**** Նշված տեղեկատվությունը Ներքին աուդիտը ստանում է բացառապես ներքին աուդիտի առաջադրանք պլանավորելու և իրականացնելու ժամանակ և դրա արդյունքում տրամադրում է համապատասխան հաշվետվություններ:**